



Զիաց Մեր Հանապազորդ

ՅՈՒԼԻՍ | ՕԳՈՍՏՈՍ | ՍԵՊՏԵՄԲԵՐ 2025

(July | August | September 2025)

ԼՂ. ՏԱՐԻ
Գ. ԵՌԱՄՍԵԱՅ

Անձնական եւ Ընտանեկան
Ամենօրեայ Աստուածաշունչի Ընթերցումներ
եւ Հոգեւոր Խորհրդածութիւններ

Մեր խորին շնորհակալութիւնները կը յայտնենք
Our Daily Bread Ընկերակցութեան որուն
թոյլատուութեամբ *Our Daily Bread* գրքոյկէն
թարգմանուած են յաջորդ էջերու
խորհրդածութիւնները

Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւն
Armenian Missionary Association of America
31 West Century Road
Paramus, New Jersey 07652
U.S.A.

Բայց հեռո՛ւ ինձմե՛ որ Տէրոջ դէմ մեղակէմ, ձեզի համար աղօթելէ դադարելով: [Ա. Թագ. 12. 23]

ՍԻՐԵԼ ՈՒՐԻՇՆԵՐ՝ ԱՂՕԹՔԻ ՄԻՋՈՑՈՎ

«**Չե՛մ գիտեր, թէ ո՞ւր պիտի ըլլայի այսօ՛ր, եթէ մայրս չաղօթեր ինձի համար: Չե՛մ կարծեր, որ նոյնիսկ ո՛ղջ կ'ըլլայի»**, ըսաւ ընկերս՝ Ռահիմը (Rahim): Ան նախապէս՝ թմրամոլ էր, որ բանտարկուած էր թմրանիւթ տարածելուն համար: Օր մը սուրճի շուրջ՝ ան պատմեց, թէ ի՛նչ փոփոխութիւններ ըրած էր իր մօր աղօթքները՝ իր կեանքին մէջ: Ան ըսաւ. «Նոյնիսկ՝ երբ ես այնքա՛ն յուսախաբ ըրի գինք, ան շարունակեց սիրել զի՛ս՝ իր աղօթքներով: Շատ դժուարութիւններու մէջ էի, բայց եթէ ան չաղօթեր ի՛նձի համար, գիտե՛մ՝ որ աւելի վատ պիտի ըլլայի»:

Հին Կտակարանին մէջ արձանագրուած Սամուէլի պատմութիւնը՝ կը պատմէ մէկու մը մասին, որ հաւատարմութիւն ցուցաբերեց Աստուծոյ եւ ուրիշներուն՝ աղօթքի միջոցով: Այն օրը երբ Սաւուղ թագադրուեցաւ Գաղղաղայի մէջ, Սամուէլ մարգարէն ալ նոյնպէ՛ս յուսախաբ եղած էր: Ժողովուրդը իր ապագային նկատմամբ իր հաւատքն ու յոյսը դրած էր միահեծան իշխանութեան վրայ, ո՛չ թէ Աստուծոյ:

Երբ ժողովուրդը հաւաքուեցաւ, Աստուած ցոյց տուաւ իր դժգոհութիւնը՝ անտեղի փոթորիկի մը միջոցով, որ վախցուց անոնց եւ ստիպե՛ց զղջալ իրենց առած որոշումին համար (Ա. Թագ. 12. 16-18): Երբ անոնք աղաչեցին Սամուէլին, որ բարեխօսէ իրենց համար, ան պատասխանեց. «Բայց հեռո՛ւ ինձմէ՛ որ Տէրոջ դէմ մեղանչեմ, ձեզի համար աղօթելէ դադարելով» (Հմ. 23):

Սամուէլի պատասխանը՝ մեզի կը յիշեցնէ, որ ուրիշներու համար աղօթելը՝ Աստուած մեր սիրտերուն եւ կեանքերուն մէջ առաջին տեղը պահելու միջոց է: Երբ մենք կը սիրենք ուրիշները՝ աղօթելով անոնց համար, մենք կը բանանք դուռը՝ ականատես ըլլալու այն ամէն բաներուն, ինչ որ միայն Ի՛նք կրնայ ընել: Եւ մենք երբէ՛ք պիտի չուզենք զայն կորսնցնել:

Աղօթք - Ուժեղ Փրկիչ, շնորհակալ եմ, որ կ'աղօթես ինձի համար: Կը խնդրե՛մ, օգնէ ինձի հետեւելու Սամուէլի օրինակին եւ սիրելու ուրիշներ այսօր՝ իմ աղօթքներովս: Ամէն:

Յարատել աղօթքը՝ կ'օգնէ նախապատուութիւնը Աստուծոյ տալու: Աղօթենք՝ ուրիշներու համար՝ մեր սերը ցոյց տալու նպատակով:

Մենք կը փոխուինք Նոյն պատկերին՝ փառքէ փառք, որպէս թէ Տէրոջ Հոգիին միջոցով: [Բ. Կորնթ. 3. 18]

ՓԱՌՔԷ ՓԱՌՔ

Այրելով ծովեզերեայ քաղաքի մը մէջ՝ Վալէրին (*Valarie*) կը սիրէր տաք եղանակ, վայրի բնութեան լուսանկարչութիւն եւ ջուրի մէջ ըլլալ: Բայց ամենէն աւելի, ա՛ն կը սիրէր դիտել արեւածագը ովկիանոսին վրայ: Ամէն առտու՝ ան կ'արթննար լուսաբացէն առաջ՝ ջուրի տեսարանը տեսնելու համար: Վալերին հաշուեց, որ հակառար ամպոտ եղանակին կամ իր ճամբորդութիւններուն, ան կրցած էր տեսնել ամէն տարի աւելի քան երեք հարիւր ծովափեայ արեւածագ: Երբէ՛ք չէր յոգներ զանոնք դիտելով: Անոր աչքերուն մէջ՝ արեւածագը փառք մը ցոյց կու տար, որ չէր ուզեր բախցնել:

Ելից 34-ին մէջ մենք կը կարդանք Մովսէսի պայծառ դէմքին մասին, որ բառացիօրէն կը ցոյցանէր անոր փառահեղ հանդիպումը «Տէրոջ» հետ (Հմ. 29-35): Պօղոս ըսաւ, որ Յիսուսի գալուստէն ի վեր, կա՛յ աւելի փառաւոր ծառայութիւն, քան ինչ որ Մովսէս ունեցաւ (Բ. Կորնթ. 3. 7-8): Ա՛յդ Հոգիին ծառայութիւնն է, որ կը բերէ արդարութիւն (Հմ. 8-9): Աստուծոյ փրկութեան ծրագիրը՝ մշտական փառք ունի, գերազանցելով նախապէս եղած ամէն բան (Հմ. 10), եւ մենք կրնանք մասնակից ըլլալ անոր: Առաքեալը ըսաւ. «Իսկ մենք բոլորս, բաց երեսով Տէրոջ փառքը տեսնելով՝ որպէս թէ հայելիի մէջ, կը փոխուինք նոյն պատկերին՝ փառքէ փառք, որպէս թէ Տէրոջ Հոգիին միջոցով» (Հմ. 18): Այդ անընդհատ աճող փառքը՝ կախուած չէ՛ անկէ, թէ որքա՛ն լաւ մենք կը կատարենք, այլ Սուրբ Հոգիէն: Մենք, արեւածագի ամպերուն նման, ամէն օր քիչ մը աւելի լաւ կ'արտացոյցանք այն փառահեղ աշխատանքը, որ Ան կ'ընէ:

Աղօթք - Սիրելի Աստուած, Դո՛ւն՝ իմ Ներսիդիս փառաւոր գործ կը կատարես: Շնորհակալ եմ, որ զիս Զու պատկերիդ կը փոխես: Ամէն:

Շատ անգամ դժուար է տեսնել Սուրբ Հոգիին կատարած աշխատանքը մեր կեանքերուն մէջ, սակայն Աստուած կը վստահեցնէ մեզի՝ թէ Ան տակաւին հոն է:

Քանի քու կարեկցութիւնդ կեանքէն լաւ է, իմ շրթունքս քեզ պիտի դրուատեմ: [Սաղմ. 63. 3]

ՅՈՒՆԻՍ ... ՄԵՐ ԱՄԷՆ ԲԱՆԸ

Մրցաժամը իրաւարարին վերջին ձեռքի նշանով, ըմբիշ՝ Գէնէտի Պէյտզ (Kennedy Blades) դարձաւ 2024 թուականի Ողորմապիական: Ան սեղմեց իր ափերը, բարձրացուց իր ձեռքերն ու աչքերը դէպի երկինք եւ փառաբանեց Աստուած: Լրագրողը հարցուց իր անձնական մասին՝ անցեալ երեք տարիներու ընթացքին: Մարզիկուհին՝ նոյնիսկ չի նշեց իր ֆիզիքական պատրաստութիւնը: Ան ըսաւ. «Ես տակաւին նոր շատ մտերմացայ Յիսուսի հետ»: Դաւանելով Քրիստոս որպէս Թագաւոր՝ յայտարարեց, որ Ան նորէն պիտի գայ եւ խրախուսեց ուրիշներու, որ հաւատան Անոր: Ան ըսաւ. «Ինք է, այդ է հիմնական պատճառը, թէ ինչո՞ւ ես կրցայ նման մեծ բան մը ընել»: Այլ հարցազրոյցներու մէջ ան հաւատարմորէն յայտարարեց, որ Յիսուս իրեն համար ամէն ինչ է եւ իր կեանքի մէջ եղած ամէն լաւ բանի՝ պատճառը:

Աստուածակեդրոն կեանքով ապրելու այս կիրքը, կ'արտացոլացնէ Դաւիթի ըրած խոստովանութիւնները՝ Սաղմոս 63-ին մէջ: Ընդունելով իր կարիքը իր ստեղծողին՝ ան ըսաւ. «Անձս կը ծարաւնայ քեզի, ու մարմինս կը կարօտնայ քեզ» (Հմ. 1): Դաւիթ «տեսած էր» Աստուծոյ «գօրութիւնն ու փառքը» (Հմ. 2): Ան յայտարարեց Աստուծոյ հաստատակամ սէրը որպէս «կեանքէն լաւ» (Հմ. 3): Ապա ան աղօթեց. «Որովհետեւ ինձի օգնական եղար, ու քու թեւերովդ հովանիին տակ պիտի ցնծամ: Իմ անձս քեզի կը յարի, քու աջ ձեռքդ ինձի նեցուկ կ'ըլլայ» (Հմ. 7-8): Աստուած յստակօրէն ամէն ինչ էր՝ Դաւիթի համար:

Մեր կեանքերը կրնան ըլլալ փարոսներ, որոնք կ'ուղղեն ուրիշներու՝ Աստուծոյ հետ կեանք փրկող փոխյարաբերութիւններու, երբ Յիսուս ըլլայ մեր միտքը, խորհուրդը եւ ամէն ինչը:

Աղօթք - Սիրելի Յիսուս, կը խնդրեմ՝ օգնէ ինձի իսկապէս ապրելու այնպէս՝ որպէս թէ Դուն ես իմ պատճառս, իմ ամէն բանս: Ամէն: **Մեր կեանքերը արտացոլացնելու եւ, որ Քրիստոս մեր միտքն ու ամէն բանն է: Մեզի պետք է յանձնուիլ Անոր եւ ընդունիլ զինք՝ որպէս մեր թագաւորը:**

Աստուած տուաւ մեզի յաւիտենական կեանքը, եւ այս կեանքը անոր Որդիին մէջ է: [Ա. Յովհ. 5. 11]

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՏՈՒՅԱԾ ԳԱՆՁ

Մայքըլ Սփարքս (*Michael Sparks*) մտաւ խնայողութեան խանութ մը եւ 2.48 տոլարով գնեց Ամերիկայի Միացեալ Նահանգներու Անկախութեան Հռչակագրի յուշանուէրային օրինակ մը: Աւելի ուշ, երբ ան ուշադիր նայեցաւ իր մագաղաթեայ օրինակին, ան զգաց, որ ատոր մէջ ինչ որ անսովոր բան մը կայ: Ուստի՝ ան խնդրե՛ց փորձագէտներու գնահատանքը, որոնք ըսին իրեն թէ այդ՝ երկու հարիւր երեսունվեց մնացած իրական օրինակներէն մէկն է, որ պատուիրած էր Ճան Քուինսի Ատրմզը (*John Quincy Adams*) 1820 թուականին: Յետոյ՝ Սփարքս վաճառեց այդ հռչակագրի հագուագիւտ օրինակը՝ 477,650 տոլարի:

Թէեւ այս գանձը այդքան փոքր գինով ձեռք բերելը ապշեցուցիչ է, կա՛յ մէկ ուրիշ գանձ մը, որ անսահման աւելի լաւ է: Որպէս մանուկ՝ իմացայ անգին, անզուգական եւ յաւիտենական գանձի մը մասին, որ ո՛չ մէկ դրամ արժեց ինծի: Բայց ես գայն չգտայ խնայողութեան խանութին մէջ:

Մտողներս յայտնեցին ինծի, որ Յիսուս անունով մարդ մը՝ գնած էր այս նուէրը, տալով իր կեանքը՝ խաչին վրայ, որպէս զոհ՝ իմ մեղքերու համար: Ապա անոնք ըսին ինծի, որ այս նուէրը կը կոչուի փրկութիւն, որ խոստացաւ՝ «ճոխութեան կեանքի» գանձը երկրի վրայ (Յովհ. 10. 10) եւ «յաւիտենական կեանք ... Աստուծոյ Որդիին մէջ» Յիսուսի հետ (Ա. Յովհ. 5. 11): Ե՛ս՝ հաւատքով ընդունեցի այդ նուէրը:

Զարմանալի է՝ ցած գինով գտնել երկրային գանձ մը, բայց այդ կարելի չէ՛ համեմատել յաւիտենական գանձին հետ, որ կ'առաջարկէ Քրիստոս մեզի՝ անվճար: Իւրաքանչիւր անձի առաջարկուած այս գանձը՝ կը ստացուի, երբ մենք «կը հաւատանք Աստուծոյ Որդիին անունին» – Յիսուսի (Հմ. 13):

Աղօթք – Շնորհակալ եմ Զեզի, Յիսուս, իմ փրկութեանս գինը վճարելուդ համար: Ատիկա գանձ է, որը ես երբէք պիտի չկարենամ ինքնուրոյն գնել: Ամէն:

Ի՞նչ կը նշանակէ քեզի համար վստահիլ Յիսուսի, որպէ՛ս քու Փրկիչդ: Ինչպէ՛ս կրնաս ուրիշներուն պատմել՝ այս մեծ գանձի մասին:

Իմաստուն կոյսերը՝ ամաններով ձեթ ալ առին իրենց լապտերներուն հետ: [Մատթ. 25. 4]

ՄԵԾ ՄՕՐ ՎԵՐՋԻՆ ԳԻՇԵՐԸ

Մեծ մայրս սովորութիւն մը ունէր՝ Շաբաթ գիշերները: Քնանալէ առաջ՝ ան կը դնէր իր ամբողջ հագնելիքը, ներառեալ կօշիկները, որոնք կը նախատեսէր հագնիլ՝ եկեղեցի երթալու համար յաջորդ առտու: Մի՛շտ կը յաճախէր կանուխ առտուան պաշտամունքին եւ կը ցանկար պատրաստ ըլլալ արթննալու եւ յաջորդ առտու երթալու՝ առանց որեւէ ուշացումի: Շաբաթ գիշեր մը՝ ան անակնկալ հիւանդանոց փոխադրուեցաւ: Շատ չանցած՝ Յիսուս գինք իր մօտ կանչեց ու ան մեռաւ: Երբ մեծ հայրս հիւանդանոցէն տուն վերադարձաւ, գտաւ մեծ մօրս պատրաստած հագնելիք հագուստները: Ան պատրաստ էր երթալու եկեղեցի, ինչպէս նաեւ՝ հանդիպելու իր Աստուծոյն:

Մեծ մօրս այս սովորութիւնը ինծի կը յիշեցնէ կոյսերուն իմաստութիւնը՝ Մատթէոս 25-ի առակին մէջ: Պատմութեան մէջ՝ Յիսուս կ'ըսէ իր աշակերտներուն, որ պատրաստ ըլլան իր գալուստին եւ կ'ըսէ. «Արթուն կեցէ՛ք»: Ո՛չ մէկը գիտէ «օրն ու ժամը» իր վերադարձին (Հմ. 13). ուստի խելամտութիւն է, որ մենք պատրաստ ըլլանք: Եթէ պատրաստուելու համար սպասենք մինչեւ վերջին վայրկեանը, մենք կրնանք նմանիլ «յիմարներուն» (Հմ. 3): Անոնց ձէթը վերջացաւ, քանի որ լաւ չէին պատրաստուած, եւ ճիշդ այն պահին, երբ անոնք թողուցին իրենց դիրքերը, որպէսզի լեցնեն իրենց լապտերները, փեսան եկաւ:

Կարելի է, որ մենք կարիքը չունենանք մեծ մօրս նման դասաւորելու մեր հագուստները, բայց անոր սովորութիւնը ցոյց տուաւ, եկեղեցի երթալու՝ ինչպէս նաեւ իր Փրկիչին գալուստին համար պատրաստ ըլլալու իր ցանկութիւնը: Թո՛ղ որ մենք օգտագործենք անոր իմաստութիւնը, որպէսզի պատրաստ ըլլանք կեանքի ամենակարեւոր բաներուն, ծառայելով Տէր Յիսուսի, երբ Ան կ'առաջնորդէ մեզ եւ պատրաստ ըլլալով՝ Անոր վերադարձին:

Աղօթք - Տէր, կը խնդրեմ, ցո՛յց տուր ինծի, թէ ինչպե՞ս իմաստուն ըլլամ, մինչ կը ծառայեմ Զեզի եւ կը պատրաստուիմ Զու վերադարձիդ: Ամէն:

Տէր Յիսուսի գալուստին պատրաստ ըլլալու համար, պէ՛տք է իմաստուն ընտրութիւններ ընել ու ծառայել Իրեն այսօր:

Կհը՛ր՝ տեսնելով թե՛ ծամը լաւ էր ուտելիքի համար,
փափաքելի՛ աչքերուն, եւ ցանկալի՛ ուշիմ ըլլալու համար,
առաւ անոր պտուղէն ու կերաւ: [Ծնն. 3. 6]

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

1890 թուականին՝ արուեստասէր թուչնաբան Եուճին Շիֆրլին (Eugene Schieffelin) որոշեց վաթսուն Եւրոպական սղարլինկ (starling) կոչուած թռչուններու տեսակը՝ ազատ արձակել Նիու Եօրքի Կեդրոնական զբօսայգիին մէջ: Մինչ եղած են թռչուններու քանի մը տարբեր տեսակներու ներածութիւն, Շիֆրլինի ազատ արձակած թռչուններու ծրագիրին արդիւնքը եղաւ՝ առաջին յաջող վաւերագրուած բոյներու շինութիւնը: Այժմ կան մօտաւորապէս 85 միլիոն թռչուններ, որոնք կը թռչին ամբողջ ցամաքամասին վրայ: Սակայն դժբախտաբար, այս թռչունները յարձակողական են՝ դուրս քշելով բնիկ թռչունները, հիւանդութիւն տարածելով արջառներուն վրայ եւ տարեկան 800 միլիոն տոլարի վնաս պատճառելով: Շիֆրլինը չէր կրնար պատկերացնել, թէ ի՛նչ վնաս կրնար պատճառել իր ընտրութիւնը:

Ընտրութիւնները՝ կրնան հսկայական հետեւանքներ ունենալ: Թէեւ Ադամ ու Եւա նախագգուշացուած էին, չէին կրնար պատկերացնել իրենց ընտրութիւններուն աղէտալի հետեւանքները՝ ամբողջ ստեղծագործութեան վրայ: Աստուած անոնց ըսած էր, որ իրենք «պարտէզին բոլոր ծառերէն համարձակ ուտեն» (Ծնն. 2. 16), բայց պարտէզին մէջտեղը եղող ծառին պտուղէն «մի՛ ուտէք եւ անոր մի՛ դպչիք, որպէսզի չմեռնիք» (3. 3): Բայց խաբուելով այդ խորամանկ օձէն՝ Եւան «առաւ ու կերաւ» (Հմ. 6): Յետոյ՝ Ադամ անոր հետեւեցաւ՝ ընտրելով ուտել Աստուծոյ արգելած պտուղէն: Այսքա՛ն աւերածութիւն, սրտաբեկում եւ կործանում՝ մէկ սխալ ընտրութեան պատճառով:

Երբ մենք կ'անտեսենք Աստուծոյ իմաստութիւնը եւ կ'ընտրենք մէկ այլ ճամբայ, կը հրաւիրենք աղէտ՝ մեր կեանքին մէջ: Կրնայ թուիլ թէ մեր ընտրութիւնը աննշան է՝ սակայ յն, անոնք կրնան մեզ տանիլ դէպի դժուարութիւններու աշխարհը: Սակայն՝ Աստուծոյ ճամբան ընտրելը, մեզի կը տանի դէպի կեա՛նք՝ եւ ծաղկում:

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ ինձի իմաստուն որոշումներ կայացնելու: Ամէն:

Ո՞ր ընտրութիւնները քեզի համար եղած են աղէտալի: Ինչպե՞ս կրնաս աւելի իմաստուն որոշումներ կայացնել:

Ձանս՝ դուև քեզ գնահատելի ցոյց տալ Աստուծոյ առջեւ:
[Բ. Տիմ. 2. 15]

ԱՃԻԼ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ՍԷՁ

Որպէս հոգեւոր գրականութեան հեղինակ՝ իր առաջին տարիներուն մէջ, Կէյլ (Gayle)՝ յաճախակի նուէրներ կը ստանար իր հարատարակիչէն: Ծաղիկներու փունջեր, տուրմեր եւ տուփերով բուսական թէյատեսակներ: Բոլորն ալ լաւ էին: Սակայն, ժամանակի ընթացքին՝ իր հարատարակիչը սկսաւ մնայուն արժէք ունեցող նուէրներ ալ ղրկել իրեն. մէկ-տարուայ ընթացքին կարգալու Աստուածաշունչ մը, հոգեւոր գրականութիւն եւ աղօթքներու օրագիրներ: Օգտագործելով զանոնք, ան եղաւ աւելի հասուն հաւատացեալ մը – քիչ շեղուած զարգարուն նուէրներէն եւ աւելի շատ յանձնառու օգտագործելու իր կեանքը՝ ուրիշներ դէպի Քրիստոս առաջնորդելու համար:

Այս մօտեցումը՝ կը յիշեցնէ մեզ Տիմոթէոսի աճը, Պօղոս առաքեալի դաստիարակութեան ներքեւ. «Ձանս՝ դուև քեզ գնահատելի ցոյց տալ Աստուծոյ առջեւ, ըլլալով այնպիսի գործաւոր մը՝ որ պիտի չամչնայ, շիտակ բացատրելով ճշմարտութեան խօսքը» (Բ. Տիմ. 2. 15):

Ապա՝ Պօղոս աւելցուց. «Հեռո՛ւ կեցիր սրբապիղծ ունայնութիւններէն, քանի որ անոնք աւելի պիտի յառաջդիմեն ամբարշտութեան մէջ» (Հմ. 16): Նաեւ աւելցուց. «Փախի՛ր նաեւ երիտասարդական ցանկութիւններէն, հրաժարէ՛ յիմար եւ անիմաստ վէճերէն, գիտնալով որ կռիւներ կը ծնին անոնցմէ ... Եւ Տէրոջ ծառան պէտք չէ՛ կռուի, հապա՛ ըլլայ հեղահամբոյր բոլորին հանդէպ, ուսուցանելու ընդունակ, ո՛չ ոխակալ» (Հմ. 22-24):

Պօղոսի իմաստուն խորհուրդը՝ ուղղուած հաւատացեալներուն եւս մէկ աւելի կարեւոր բանալի խորհուրդ մըն է: Նոյնի՛սկ Քրիստոսի հակառակորդները, երբ կը տեսնեն մեր հասուն ընտրութիւնները՝ Անոր մէջ, կրնան «ճշմարտութիւնը գիտնալու համար սթափին Չարախօսին թակարդէն» (Հմ. 26): անդին: Չի սպասենք, եթէ կ'ուզենք աճիլ մեր հաւատքին մէջ:

Աղօթք - Իմաստուն Աստուած, կը խնդրեմ՝ աճեցուր հոգեւոր հասունութիւնս՝ Թու մէջդ: Ամէն:

Ի՞նչ բանի մէջ քու հաւատքդ աճման պէտք ունի: Ինչպե՞ս կրնաս հոգեւորապէս աճիլ:

Յիսուս ըսաւ անոր. «Եղբայրդ յարութիւն պիտի առնէ»:
[Յովհ. 11. 23]

ՅՈՒՍԱՐԱՏՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔ

2011 թուականին, Գէրի Փաքարտ (Karey Packard) եւ իր գուստրը, տուփեր կը ծրարէին՝ նոր տուն տեղափոխուելու համար: Յանկարծ՝ Գէրի նուազեցաւ եւ անոր սիրտը կանգ առաւ: Բժիշկները՝ վերակենդանացուցին զինք, սակայն անոր վիճակը վատթարացաւ ամբողջ գիշերուան ընթացքին: Իր ամուսինին Գրէյկին՝ ըսին, որ զանգէ ընտանիքի անդամներուն՝ գալու եւ իրենց վերջին հրաժեշտը տալու: Անոնք աղօթեցին ա՛յն՝ ինչ որ Գրէյկ կոչեց՝ «յուսահատութեան աղօթք մը»:

Որքա՞ն յաճախ աղօթեցա՞ծ ենք յուսահատութեան աղօթք մը՝ ճգնաժամի ատեն: Մարիամ եւ Մարթա ըրին: Անոնք յուսահատ պատգամ ուղարկեցին Յիսուսի. իրենց եղբայրը՝ Ղազարոս, որ Յիսուս կը սիրէր, ծանր հիւանդ էր (Յովհ. 11. 3): Երբ Քրիստոս վերջապէս եկաւ, Ղազարոս մեռած էր չորս օր առաջ: Մարթան նեղացած ըսաւ Յիսուսի. «Եթէ հոս ըլլայիր, եղբայրս չէր մեռներ» (Հմ. 21): Ան գիտէր, որ Քրիստոս կրնայ բուժել հիւանդը, բայց չէր պատկերացներ մահուան յաղթահարելու Անոր ոնեցած զօրութիւնը: Յիսուս, անշուշտ, յարուցանե՛ց Ղազարոսը, որպէս նախապատկեր՝ շաբաթներ ետք իր իսկ յարութեան:

Գէրին պաշտօնապէս մահացած յայտարարուեցաւ, բայց հրաշքով Աստուած զինք կենդանացուց: Թէ՛ Գէրիի եւ թէ՛ Ղազարոսի պատմութիւններուն մէջ, զիւրին է չտեսնել կարեւոր կէտը. Աստուած նպատակներ ունի, որոնք մենք չենք գիտեր: Ան ո՛չ բոլորին կը բուժէ, ո՛չ ալ բոլոր մեռածները կը վերակենդանացնէ: Բայց Ան կու տայ մեզի գերազանցող հաւաստիացում՝ ըսելով. «Ե՛ս եմ յարութիւնն ու կեանքը: Ա՛ն որ կը հաւատայ ինձի, թէեւ մեռնի՝ պիտի ապրի» (Հմ. 25): Որպէս հաւատացեալներ, ի՛նչ ալ որ պատահի, մենք գիտե՛նք, որ պիտի ըլլանք Յիսուսի հետ:

Աղօթք - Հայր Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ ինձի տեսնելու Զուկապալներուդ արեւի մեծ պատկերը: Ամէն:

Յուսահատական փորձառութիւններ միշտ պիտի ունենանք, սակայն այդ պարագաներուն մէջ կարելի է՝ արեւի մեծ վստահութեամբ ու հաւատքով աղօթե՛լ Աստուծոյ:



Մի՛ մարեք Սուրբ Հոգին: [Ա. Թես. 5. 19]

ԽՈՒՃԱՊ՝ ՔԱՐԱՆՁԱԻՆ ՄԷՋ

Անոնք՝ երեք արկածախնդրական՝ կրակուբոց դեռահաս տղաներ էին, որոնք սանձէ արցակուած էին՝ հսկայ ստորերկրեայ քարայրներու համակարգի մը մէջ, որ կը միանար Մամմոթ Քարանձաւին (Mammoth Cave): Իրենց հետ էր հօրեղբայր՝ Ֆրէնքը (Frank), վէթերան քարանձաւագէտ, որ ծանօթ էր այս մասերուն: Ան գիտէր վայրէջքները ու վտանգաւոր կէտերը եւ շարունակ կը կանչէր երեքին՝ ըսելով. «Տղա՛ք, այս կողմ»: Սակայն անոնք խիզախօրէն իրմէ աւելի հեռացան:

Թեթեւցնելով իր լուսարձակին լոյսը, Հօրեղբայր Ֆրէնք՝ որոշեց լուռ մնալ: Շուտով տղաները հասկցան, որ կորսնցուցած են իրենց ուղեցոյցը: Խուճապի մատնուած՝ գոռացին անոր անունը: Ո՛չ մէկ արձագանգ: Վերջապէս՝ անոնք տեսան, որ հեռուն անոր լուսարձակը՝ կեանք կը թարթէ: Ակնթարթային թեթեւութիւն եւ խաղաղութիւն մը ունեցան: Ա՛յժմ անոնք պատրաստ էին հետեւելու՝ իրենց ուղեցոյցին:

Այս իրական պատմութիւնը՝ տեղին առակ մը կը ներայացնէ՝ այն մասին, թէ ինչպէ՞ս մենք կը վերաբերինք Սուրբ Հոգիին պարգեւին հետ: Շրջանցումները մեզ կը հեռացնեն այն ձայնէն, որ կոչ կ'ընէ՝ Իրեն հետեւելու, որ ըսաւ. «Հետեւէ ինծի» (Մատթ. 16. 24): Այդ ձայնը՝ Սուրբ Հոգին է, որ կը բնակի Աստուծոյ իւրաքանչիւր գաւազնի ներսիդին (Գործք 2. 38-39):

Աստուծոյ Հոգին երբէ՛ք չի լքեր մեզ, բայց մենք կրնանք անտեսել զինք: Պօղոս առաքեալ կը զգուշացնէ. «Մի՛ մարէք Սուրբ Հոգին» (Ա. Թես. 5. 19): Փոխարէնը՝ «ամէն ատեն ուրախ եղէք: Անդադար աղօթեցէ՛ք» եւ «ամէն բանի մէջ շնորհակալ եղէք» (Հմ. 16-18): Այդ բաները ընելով, մենք կը մնանք մեր առաջնորդին մօտը, «խաղաղութեան Աստուծոյ», որ կարող է մեզ պահել «անմեղադրելի» (Հ. 23): Ինչպէս Պօղոս կը յիշեցնէ մեզի ըսելով. «Ա՛ն որ կանչեց ձեզ՝ հաւատարիմ է. նաեւ ի՛նք պիտի կատարէ ատիկա» (Հմ. 24):

Աղօթք - Սիրելի Հայր, կը խնդրեմ՝ այսօր զիս Զու մօտդ պահէ եւ օգնէ, որ ուշադիր ըլլամ Զեզի: Ամէն:

Ի՞նչ ձեւերով անտեսած ես Սուրբ Հոգիին ձայնը: Ինչպէ՞ս կրնաս աւելի ուշադիր հետեւիլ Անոր:

Եթէ երկինք ելլեմ, դուն հոն ես, եթէ դժոխքը տարածեմ
անկողինս, ահա՛ դուն հոն կը գտնուիս: [Սաղմ. 139. 8]

ԱՍՏՈՒԱԾ ՅՈՆ Է

Երբ մեծ մօրս մեղմօրէն տեղեկացուցին, որ մեծ հայրիկս՝
հաւանաբար՝ կը հեռանայ այս աշխարհէն առաջիկայ
քանի մը օրերուն ընթացքին, մենք մտահոգուեցանք, որ ան
կը վրդովի եւ անհանգիստ կ'ըլլայ: Մէկը հարցուց անոր.
«Մտահոգուա՞ծ ես», մտածելով թէ ան կրնայ հարցումներ
ունենալ իր ամուսինին Ֆիզիքական վիճակին մասին կամ
օգնութեան պէտք ունենայ իր կարիքներուն համար: Ան՝ պահ
մը մտածեց ու ապա հանգիստ պատասխանեց. «Ո՛չ: Գիտեմ՝
թէ ուր կ'երթայ: Աստուած հո՛ն է իր հետ»:

Իր ամուսինին հետ Աստուծոյ ներկայութեան մասին
անոր ըրած արտայայտութիւնը կ'արձագանգէ նման
արտայայտութեան մը՝ 139-րդ Սաղմոսին մէջ, ուր սաղմոսերգու
Դաւիթ ըսած է. «Եթէ երկինք ելլեմ, դուն հոն ես, եթէ դժոխքը
տարածեմ անկողինս, ահա՛ դուն հոն կը գտնուիս» (Հմ. 8):

Թէեւ 139-րդ Սաղմոսին մէջ նկարագրուած Աստուծոյ
ներկայութեան հաւաստիութիւնը կը պարունակէ նուրբ
նախագգուչացում մը, որ մենք չենք կրնար փախչիլ Անոր
Հոգիէն, անկախ անկէ՝ թէ ուր ալ երթանք, այդ նաեւ մեծ
մխիթարութիւն կը բերէ անոնց, որոնք կը սիրեն զԻնք եւ կը
ցանկան վստահութիւն ունենալ իր ներակայութեան մէջ. «Ո՛ւր
երթամ քու Հոգիէդ, եւ քու ներկայութենէդ ո՞ւր փախչիմ» (Հմ.
7): Որպէս Աստուծոյ փրկագնուած ժողովուրդ, մենք կրնանք
մխիթարուիլ, որ անկախ անկէ՝ թէ ո՞ւր ենք մենք, Ան այնտեղ է
եւ կ'առաջնորդէ մեզ եւ կը պահէ մեզ իր ձեռքերուն մէջ (Հմ. 10):

Երբ մենք կ'անցնինք ծանր, մտահոգիչ իրավիճակներուն մէջէն
եւ չենք զգար, որ Աստուած մեզի հետ է, կրնանք վստահ ըլլալ, որ
Ան ներկայ է բոլոր անոնց հետ, որոնց Ան կը սիրէ եւ անոնք ալ կը
սիրեն զԻնք: Թող Անոր որոշակի ներկայութեան այս գիտելիքը
քեզի մխիթարութիւն եւ յոյս բերէ, որու պէտք ունիս դուն այսօր:

Աղօթք - Տէր, երբ ես կ'անհանգստանամ, կը խնդրեմ՝ օգնէ ինձի
իմանալու, որ կեանքս քու ձեռքերուդ մէջ է: Ամէն:

**Ի՞նչ բանը ամենէն աւելի կ'անհանգստացնէ քեզ այսօր: Ինչպէ՞ս
կ'օգնէ քեզի Աստուծոյ ներկայութեան վստահութիւնը իմանալը:**

Տերը փնտռեցեք, որ ապրիք: [Ամ. 5. 6]

ԿԵԱՆՔ՝ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԷՉ

Ընտանիք մը, որ կորսնցուցած էր կապը իր որդիին եւ եղբօր Թայլըրի (Tyler) հետ, ստացաւ սափոր մը, որ կը պարունակէր անոր դիակիզման մոխիրը: Ընդամենը քսան երկու տարեկան երիտասարդ, ըստ երեւոյթին մեռած էր մեծ քանակով թմրեցուցիչ գործածելով: Տարիներ շարունակ, Թայլըր զբաղած էր թմրամոլութեան ազդեցութիւնով եւ սխալ ընտրութիւններու հետեւանքներով: Չափէն աւելի քանակով իր թմրանիւթի տեղեկութիւնը, ան դադրած էր անոնց գործածութենէն՝ փոխանցման բնակարանային հաստատութեան մը մէջ, որոշ ժամանակ անցնելէ եւ մոլութենէ վերականգնումի ծրագիր մը աւարտելէ ետք: Յետոյ իշխանութիւնները ցնցիչ բացայտութիւն մը ըրին – Թայլըր՝ իրականութեան մէջ ողջ էր: Անոնք զինք շփոթած էին մէկ ուրիշ երիտասարդի մը հետ, որ մեռած էր մեծ քանակով թմրանիւթ գործածելու պատճառով: Աւելի ուշ, ընտանիքին հետ վերամիաւորուելէ եւ միւս երիտասարդին մասին մտածելէ ետք, Թայլըր ըսաւ. «Ե՛ս կրնայի ըլլալ այդ»:

Անգամ մը Իսրայէլացիները իմացան իրենց մահուան մասին, թէ եւ անոնք ողջ էին: Սուգի երգի մը մէջ՝ Ամովս մարգարէն՝ այս խօսքերը երգեց Աստուծոյ ապստամբ ժողովուրդին. «Իսրայէլի կոյսը ինկած, է անգամ մըն ալ պիտի չկանգնի» (Ամ. 5. 2): Այս խօսքերը պէտք էր գրաւէին անոնց ուշադրութիւնը – անոնք մեռած էին: Բայց մարգարէն նաեւ ըսաւ՝ Աստուծոյ եկած այս մխիթարական խօսքերը. «Զի՛ս փնտռեցէք որ ապրիք» եւ «բարութիւն փնտռեցէք ... այսպէս Տէրը՝ զօրքերու Աստուածը՝ ձեզի հետ պիտի ըլլայ» (Հմ. 4, 14): Թէեւ Իսրայէլը մեռած էր Աստուծոյ դէմ իրենց գործած մեղքերուն մէջ, Ան հրաւիրեց զիրենք դառնալու Իրեն եւ կեանք գտնելու:

Եկէ՛ք խոստովանինք մեր մեղքերը ու բերենք Անոր, որ կը սիրէ մեզ ու կը ներէ:

Աղօթք - Սիրող Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ ինձի, որ մեղքէն իրաժարիմ եւ կեանք գտնեմ՝ Քու մէջը: Ամէն:

Աստուծոյ դէմ կեանալը՝ մեզ կ'առաջնորդէ մահուան: Եկէ՛ք զինք դաւանիք՝ որպէս մեր Տէրն ու Աստուածը:

Ես տնկեցի, Ապողոս ջրեց, բայց Աստուած աճեցուց:
[Ա. Կորնթ. 3. 6]

ԱՄԷՆ ԵՂԱՆԱԿԻ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ԾԱՌԱՅԵԼ

Տարիներ շարունակ Քաղէբին (*Caleb*)՝ ինքնուրոյն խրատելէ ետք, Մարք (*Mark*) սոսկա՛ց իմանալով, որ եկեղեցիի առաջնորդը՝ երիտասարդին ա՛յլ խորհրդատու մը նշանակած է: Առաջնորդը ըսաւ. «Վերջապէ՛ս, Քաղէբ խորհրդատու մը ունի»:

Մարք զարմացած ըսաւ. «Անոնք ի՞նչ կը կարծէին՝ թէ ես կ'ընէի այս բոլոր տարիներուն ընթացքին»: Թէեւ ան չէր սպասեր որեւէ պարգեւի կամ ճանաչումի, չէր կրնար վիրաւորուած չըլլալ:

Տարիներ ետք՝ սակայն, Քաղէբ ըսաւ Մարքին, որ ան մտած է իր կեանքին մէջ, ճիշդ այն ատեն, երբ ի՛նք ամենէն աւելի հոգեւոր առաջնորդութեան կարիք ունէր: Լսելով այս քաջապերական խօսքերը, Մարք հասկցաւ. Աստուած՝ Յիսուսի հաւատացողներուն կու տայ յատուկ պարգեւներ՝ Իրեն ծառայելու համար՝ այլ կերպերով – առանց ուրիշներու հետ համեմատուելու – եւ Ան կը վերահսկէ ժամանակին վրայ:

Ա. Կորնթացիս 12. 4-31-ին մէջ՝ Պօղոս կը շեշտէ Քրիստոսի մարմինին՝ եկեղեցիի անդամներու արժէքը, որոնք ունին տարբեր պարգեւներ, դերեր եւ յանձնառութիւններ: Եւ 3-րդ գլուխին մէջ ան կը յիշեցնէ մեզի՝ Ան, որու կը պատկանի արդիւնքներու հիմնական աղբիւրը. «Ես տնկեցի, Ապողոս ջրեց, բայց Աստուած աճեցուց» (Հմ. 6):

Իւրաքանչիւրիս կրնայ տրուիլ Աստուծոյ գործը ընելու իւրայատուկ եղանակ եւ հնարաւորութիւն: Ի տարբերութիւն մարդոց, Աստուած չի համեմատեր մեր գործը ուրիշներու գործերուն հետ, քանի որ Ան կը սիրէ մեզ՝ որպէս անհատներ: Թո՛ղ որ մենք մեր աչքերն ու սիրտերը կեդրոնացած պահենք՝ մեր լաւագոյնը ընելու վրայ՝ այն եղանակին, որ Աստուած տուած է մեզի՝ ամբողջովին ապաւինելով Իր ուժին եւ զօրութեան:

Աղօթք - Սիրող Յայր, կը խնդրեմ՝ օգնէ ինձի կեդրոնանալու այն գործին վրայ, որ Դո՛ւն տուած ես ինձի ընելու: Ամէն:
Աստուած կու տայ մեզի պարգեւներ եւ միջոցներ օգտագործելու՝ Իրեն ծառայելու համար: Մեր պարտականութիւնն է՝ զանոնք լաւագոյնս օգտագործել այսօր:

Որդեա՛կս, մտի՛կ ըրէ հօրդ խրատը: [Առ. 1. 8]

ՎԱԶԵԼ ՄՐՅԱՎԱԶՔԸ՝ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԵՏ

Եօթը տարեկան Թամը (Tom)՝ կը հիանար իր հօր՝ դպրոցի վագքի մրցումներուն ստացած փայլուն բաժակներուն, որոնք շարուած էին դարակլին վրայ: Ան մտածեց ունենալ այդ բաժակներէն մէկը՝ իր ննջարանին համար: Ուստի, հարցուց. «Հայրի՛կ, կրնա՞մ ունենալ քու բաժակներէդ մէկը»: Հայրը՝ զարմանալիօրէն պատասխանեց. «Ո՛չ, Թամ, ատոնք իմս են: Ես չահեցայ զանոնք. դուն ալ կրնաս չահիլ քու սեփական բաժակը»: Յետոյ՝ անոնք ծրագիր մը մշակեցին, որ եթէ ան որոշ ժամանակի մը մէջ՝ վագէ տնաշարքին շուրջ (ան գիտէր, որ իր որդին կրնար ընել այդ), ապա անոր կու տայ իր սեփական բաժակը: Թամ՝ սկսաւ մարզուելու իր հօր առաջնորդութեամբ, եւ շաբաթ մը ետք՝ Հայրը ոգեւորեց զինք, մինչ ան որոշ ժամանակի մը մէջ վագեց իրենց տնաշարքին շուրջ: Թամ՝ շատ աշխատելու եւ ինքնակարգապահութեան դասեր սորվեցաւ, եւ Հայրը շնորհաւորեց զինք իրեն մրցանակ տալով:

Առակաց 1. 8-ն կը յորդորէ երեխաներուն «մտիկ ընելու՝ հօր խրատը»: Թամի Հայրը նաեւ սորվեցուց իրեն՝ Յիսուսի հետ կեանքի մրցավագքը վարելու եւ Անոր տուած առաջնորդութիւնը լսելու մասին: Յուլիսնէք տուաւ անոր՝ «ընդունելու արդարութիւնը, իրաւունքը եւ ուղղամտութիւնը», ինչպէս որ Հայրը ըրաւ Առակաց գիրքին մէջ (Հմ. 3): Հօր մը ուսուցմունքները արժէքաւոր են. «Անոնք քու գլուխիդ շնորհքի ծաղկեպսակ պիտի ըլլան եւ քու վիզիդ մանեակներ» (Հմ. 9):

Թերեւս դուն երկրային հայր չունիս, որ քեզի սորվեցնէ վագել մրցարշաւը Քրիստոսի հետ: Բայց Աստուած կրնայ քեզ առաջնորդել դէպի խորհրդատուի մը, որ կրնայ փոխանցել իր ունեցած իմաստութիւնն ու փորձառութիւնը: Ան կու տայ ուղղեցոյց երբ մենք պատրաստ ենք ուրիշներու հետ՝ մրցավագքը ընելու:

Աղօթք - Յայր, շնորհակալ եմ Սուրբ Գիրքերուն համար, որոնք կը խրատեն զիս: Կը խնդրեմ՝ տո՛ւր ինձի խորհրդատու մը, որ լա՛ւ գիտէ Զեզ եւ կրնայ բաժնեկցիլ Զու իմաստութիւնդ: Ամէն:

Զու շրջանակիդ մէջ՝ ո՛վ կրնայ կարող ըլլալ, որմէ կարելի է սորվիլ Զրիստոսով կեանք մը ունենալու մասին: Եւ դո՛ւն, որու կրնա՞ս օգնել:

Չիս՝ կեանքի աղբիւրը՝ լքեցին, եւ իրենց հորեր փորեցին,
ճեղքուած հորեր, որ չեն կրնար ջուր պահել: [Եր. 2. 13]

ԻՍԱՍ ՓՆՏՈՒԵԼՈՒ ՉԱՍԱՐ ՊԵՂԵԼ

Մենք ունինք նոր շունիկ մը՝ Ուինսթըն (Winston): Ան կը խածնէ: Կը քնանայ: Կ'ուտէ: (Մէկ կամ երկու ուրիշ բաներ ալ): Օ՛, եւ ան կը փորէ ու կը պեղէ: Պատահական չէ՛ որ Ուինսթըն կը փորէ. փակուղիներ կը բանայ, որպէս թէ կը փախչի բանտէն:

Վերջերս մտածեցի՝ թէ ինչո՞ւ համար այդ շունը այդքա՛ն շատ կը փորէ: Յետոյ նկատեցի թէ ես ալ նոյնպէս փորող մըն եմ. հակուժը ունիմ փորելու անթիւ բաներու մէջ, որոնք կը յուսամ թէ գիս երջանիկ կ'ընեն: Ատոնք միշտ չէ՛ որ վատ բաներ են: Բայց երբ ես կեդրոնանամ՝ Աստուծմէ՛ բացի որեւէ ուրիշ բանի վրայ գոհացում գտնելու, կը դառնամ փորող: Աստուծմէ՛ անկախ իմաստ փնտռելը՝ գի՛ս կը ձգէ կեղտի մէջ եւ աւելի շատ բանի տենչանքը ունենալու:

Երեմիա յանդիմանեց Իսրայէլը՝ փորող ըլլալուն համար: Աստուած ըսաւ մարգարէին միջոցով. «Զի՛ս կեանքի աղբիւրը՝ լքեցին, եւ իրենց հորեր փորեցին, ճեղքուած հորեր, որ չեն կրնար ջուր պահել» (Եր. 2. 13): Աստուած խրատեց Իր ժողովուրդին՝ գի՛նք փնտռելը անտեսելուն համար: Անոնք փորած էին իրենց սեփական ջրհորները՝ փորձելով յագեցնել իրենց ծարաւը: Բայց Աստուած յիշեցուց, որ միայն ինք է՝ «կեանքի ջուրին աղբիւրը» (Հմ. 13): Յովհաննու 4-ին մէջ՝ Յիսուս այս կեանքի ջուրը առաջարկեց ջրհորին մօտ գտնուող կնոջ, որ նոյնպէս իր բաժինը ըրած էր՝ ուրիշ տեղ մը փորելով (Հմ. 10-26):

Մենք բոլորս ալ երբեմն կը փորենք: Բա՛յց Աստուած ողորմութեամբ կ'առաջարկէ մեր ապարդիւն փորելը՝ փոխարինելու կենսական իրականացումով՝ Իր ջուրով, որ միայնակ կը յագեցնէ մեր հոգիին ծարաւը:

Աղօթք - Յա՛յր, խնդրեմ՝ օգնէ՛ ինձի ճաշակել եւ տեսնել, որ Դուս ա՛յն ես, ինչի կը տենչայ իմ հոգիս եւ բախս վար կը դնեմ, միևն հանգիստս կը գտնեմ՝ Քու մէջդ: Ամէն:

Փոխանակ փորելու եւ պեղելու՝ իմաստ, յոյս կամ բաւարարուածութիւն գտնելու համար, վստահի՛ր Աստուծոյ:

Բայց ես աղերսեցի քեզի համար, որպէսզի հաւատքդ չպակսի: [Դուկ. 22. 32]

ՅԻՍՈՒՍԻ ԱՂՕԹՔՆԵՐԸ

Յիսուս, ինչպէ՞ս կ'աղօթես ինծի համար: Երբէ՛ք չէի մտածած այդ հարցումը հարցնելու մասին, մինչեւ որ օր մը՝ ընկերս՝ Լու (Lou) բաժնեկցեցաւ Քրիստոսի տարած՝ իր սիրտին լացի փորձառութիւնը, երբ ան դիմազրաւեց իրավիճակ մը, որ կը պահանջէր աւելի շատ իմաստութիւն եւ ուժ, քան՝ այն ինչ որ ի՛նք կարող էր հաւաքել: Լսելով իր ձայնած ուշագրաւ հարցումը աղօթքի մէջ, ինծի օգնեց նոր չափանիշ մը աւելցնել իմ աղօթքի ըմբռնումիս եւ կիրառումիս:

Դուկաս 22-ին մէջ ո՛չ մէկ առեղծուած կայ, թէ ինչպէ՞ս Յիսուս կ'աղօթէր՝ Սիմոն Պետրոսի համար. «Սիմո՛ն, Սիմո՛ն, ահա՛ Սատանան շատ ուզեց խարբարել ձեզ ցորենի պէս. բայց ես աղերսեցի քեզի համար, որպէսզի հաւատքդ չպակսի (Հմ. 31-32): Երբ Պետրոս ծեծի ենթարկուեցաւ դատաւարութեան ժամանակ, անոր հաւատքը տկարացաւ: Բայց Քրիստոսի շնորհիւ, այդ չի ձախողեցաւ:

Գործք Առաքելոց գիրքը կը պատմէ մեզի, թէ ինչպէ՞ս պատասխան ստացան Յիսուսի աղօթքները՝ Պետրոսի, անոր եռանդուն, բայց տկար աշակերտին համար: Աստուած զինք գործածեց՝ Քրիստոսի մասին բարի լուրը Հրեաներուն եւ հեթանոսներուն քարոզելու համար: Եւ Յիսուսի աղօթքի առաքելութիւնը՝ չէ՛ աւարտած: Պօղոս կը յիշեցնէ մեզի, որ «Քրիստոս՝ որ մեռաւ, մա՛նաւանդ յարութիւն առաւ եւ Աստուծոյ աջ կողմն է, ա՛ն կը բարեխօսէ մեզի համար» (Հռոմ. 8. 34): Երբ կը յայտնուիս փորձութեան մէջ յիշէ, որ Յիսուս, որ աղօթեց իր աշակերտներուն համար, կը շարունակէ աղօթել անոնց համար, որոնք հաւատացին իր մասին իրենց տուած պատգամին (տե՛ս Հռոմ. 17. 13-20):

Աղօթք - Սիրելի Յիսու՛ս, շնորհակալ եմ ինծի համար ընդ մատուցած աղօթքներուդ համար: Կը խնդրե՛մ՝ օգնէ ինծի աղօթելու եւ ապրելու այս գիտակցութեամբ: Ամէն:
Երբ յիշենք, որ Յիսուս կ'աղօթէ մեզի համար, մեր աղօթքի կեանքը կը գորանայ: Նկատի առնելով Անոր Աղօթքի ծառայութիւնը, մեր ապրելակերպն ու ծառայութիւն կը փոխուին:

Փոխակերպուեցե՛ք ձեր միտքին ևորոգուեա՛մք: [Յոս. 12. 2]

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՍՈՒՐԲ ՅՈՒՆԻՍ

«Պարտաճանաչումը հասակ առիր»: Դժուար էր պատասխանել իմ ատամնաբույժ առողջաբանիս հարցումին, քանի որ ակրաներ մաքրող իր գործիքները տակալին բերանիս մէջ էին: Ան բացատրեց, որ 1945 թուականին մեր քաղաքը դարձավ աշխարհի առաջինը, որ խմելու ջուրին մէջ աւելցուց ֆլուորայտ (fluoride՝ այս հանքային նիւթը: Խորոչները կանխելու համար, անոր գործածութիւնը՝ շատ բան չի՛ պահանջեր. ընդամենը 0.7 միլլի կրամ ֆլուորայտ, մէկ լիթր ջուրին: Ատոր դրական ազդեցութիւնը ակնյայտ է պատրաստուած մասնագետի մը համար: Բայց գաղափար չունէի, թէ ամբողջ կեանքս կը խմէի գայն:

Այն բաները, որոնք կ'օգտագործենք ամէն օր, կրնան ժամանակի ընթացքին՝ ազդել մեր վրայ: Այդ կը վերաբերի ո՛չ միայն սնունդի եւ խմիչքի, այլ՝ հիւրընկալութեան, բարեկամներու եւ ընկերային լրատուողական ցանցերու: Պողոս զգուշացուց. «Մի՛ համակերպիք այս աշխարհին: Հապա փոխակերպուեցէ՛ք ձեր միտքին նորոգութեամբ» (Հռոմ. 12. 2): Մինչ Սուրբ Հոգին կը ստիպէ Յիսուսի աշակերտներուն՝ աւելի նմանիլ Իրեն, այդ գործընթացը կը տեւէ ամբողջ կեանք մը: Մեր սովորութիւնները կրնան օգնել կամ խանգարել Անոր աշխատանքին: Մի՛շտ չէ՛, որ հեշտ է ճանչնալ, թէ մենք ի՞նչ կը սպառենք, բայց մենք կրնանք խնդրել իրմէ ցոյց տալու, որ հարուստ է «իմաստութեամբ եւ գիտութիւնով» (11. 33): Իմաստութիւնն ու ընտրողութիւնը կ'օգնեն մեզի «քննել թէ ի՞նչ է Աստուծոյ կամբը» (12. 2), մինչ նկատի կ'առնենք խոհանոց մտածողութեամբ (Հմ. 3):

Ի՞նչ ալ Ան խնդրէ մեզմէ աւելցնել կամ հեռացնել մեր առօրեայ կեանքէն, կ'արժէ՛ վճարել անոր գինը: Ամէն ինչ «անկէ, անով եւ անոր են բոլոր բաները» (11. 36): Ան ամենէն լաւը գիտէ:

Աղօթք - Սուրբ Յո՛գի, շնորհակալ եմ Քեզի, իմ կեանքիս մէջ եւ միջոցով գործելուդ համար: Ամէն:

Ո՞ր սովորութիւնն է, որ կը բացայայտէ Սուրբ Յոգիին գործը քու կեանքիդ մէջ: Ո՞ր մէկն է, որ կրնայ խանգարել Անոր գործը:

Մինչեւ որ քովդ աղքատ չըլլայ: [Բ. Օր. 15. 4]

ՅԻՍՈՒՍԻ ՍԻՐԵԼ՝ ԱՄԵՆԷՆ ՇԱՏՐ

Անդամները հարցուցին, թէ ինչո՞ւ իրենց եկեղեցին գմբեթ մը կը գնէ: Արդեօ՞ք սա՛ Աստուծոյ տուած նիւթական կարելիութիւնը՝ լաւագոյնս օգտագործելու ձեւն է: Ի՞նչ կը վերաբերի աղքատները կերակրելուն: Հովիւը պատասխանեց, որ գումարը ստացուած է նուիրատուներէ եւ պէտք է ծախսուին ըստ իրենց ցանկութեան: Մէջբերելով Յիսուսի՝ ըսաւ. «Որովհետեւ աղքատները ամէն ատեն ունիք ձեզի հետ» (Յովհ. 12. 8):

Հովիւը՝ շուտով ներողութիւն խնդրեց իր շողոքորթ եւ համապատկերէն դուրս բերելով՝ իր ըրած գիտողութեան համար, որ ստիպեց ինծի մտածելու թէ ո՞րն է Յիսուսի համապատկերը: Իր մահէն վեց օրեր առաջ՝ կին մը թանկարժէք օծանելիք իւղով օծեց Յիսուսի: Աշակերտները զգուսակին ըսին՝ թէ ինչո՞ւ այդ օծանելիքը չի վաճառուեցաւ՝ աղքատներուն օգնելու համար: Յիսուս պատասխանեց՝ մէջբերելով Երկրորդ Օրինաց 15. 11-ը. «Աղքատները ամէն ատեն ունիք ձեզի հետ, բայց զիս ամէն ատեն չունիք» (Յովհ. 12. 8):

Յիսուս յաճախ կը մէջբերէր Երկրորդ Օրինաց գիրքէն, ուստի գիտէր՝ թէ ի՞նչ գրուած էր քանի մը նախադասութիւններ առաջ. «Մինչեւ որ քու քովդ աղքատ չըլլայ. որովհետեւ Տէրը անշուշ քեզ պիտի օրհնէ այն երկրին մէջ ..., միայն թէ Տէրոջ՝ քու Աստուծոյդ խօսքը ուշադրութեամբ մտիկ ըրէ» (Բ. Օր. 15. 4-5): Թերեւս սա՛ Յիսուսի յանդիմանելու մէկ ուրիշ պատճառ էր: Աղքատ մարդեր գոյութիւն ունէին՝ միայն այն պատճառով, որ Իսրայէլ հնազանդ եղած էր Աստուծոյ տուած պատուէրներուն: Հիմա՛ աղքատները կ'օգտագործէին, ուշադրութիւնը շեղելու Յիսուսէն – ճշմարիտ Իսրայէլացիէն, որ լիովին պիտի հնազանդէր մինչեւ վերջը:

Մենք պէտք չէ՛րնտրութիւն ընենք՝ Յիսուսի եւ աղքատներուն միջեւ: Մենք ամենէն անելի լաւը պիտի սիրենք մարդոց՝ ամենաշատը սիրելով զինք:

Աղօթք - Սիրելի Յիսուս, Դուն գեղեցիկ ես եւ արժանի ես՝ իմ բոլոր գովասանքներուս: Ամէն:

Ինչպէ՞ս կ'օգնես անոնց, որոնք աւելի քի՛չ բախտաւոր են:
Ինչպէ՞ս Յիսուսի կեանքը եւ Անոր ուսուցած բաները կը ոգեշնչեն քեզ՝ ունեցածդ կիսելու կարիքաւորներուն հետ:



Սրբացո՛ւր զանոնք քու ճշմարտութեամբ. քու խօ՛սքդ ճշմարտութիւն է: [Յովհ. 17. 17]

ԱՍՏՈՒԾՈՅ ԾՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՈՎ

Միրրյւմ-Ուէյպսթրըի (Merriam-Webster)՝ 2023 թուականի Տարուան Բառը՝ Հարազատ կամ վաւերական (authentic) բառն էր: Կը նշանակէ «ո՛չ կեղծ կամ ընդօրինակութիւն» եւ «ճշմարիտ՝ մէկու մը սեփական անձնաւորութեան, ոգիին կամ նկարագրին»: Մարդիկ կը փնտռեն ճշմարտութիւն, բայց արհեստականէն զատորոշելը՝ կրնայ դժուար ըլլալ: Խմբագիր՝ Փիթըր Սօքօլովսքի (Peter Sokolowski) ըսաւ. «Կրնա՞նք վստահ ըլլալ, եթէ ուսանող մը՝ իսկապէ՛ս գրած է այս թեզը (կամ) ... արդեօ՞ք քաղաքական գործիչ մը՝ ըրած է այս յայտարարութիւնը: Մենք այլեւս մի՛շտ չէ, որ կը վստահինք՝ այն ինչ որ կը տեսնենք: Երբեմն չենք հաւատար մեր աչքերուն կամ մեր ականջներուն: Մենք հիմա կը գիտակցի՛նք, որ հեղինակութիւնը ներկայացում մըն է ինքնին»:

Քանի որ իրականը կը դառնայ՝ քիչ յստակ, Հարազատութիւնը կամ վաւերականութիւնը մարդոց մեծամասնութեան ցանկութիւնն է: Այս տեսակի «Հարազատութեան ճգնաժամը» կարելի է կանխել, երբ մենք կ'ընդունինք եւ կեանքի կը կոչենք Սուրբ Գիրքին իմաստութիւնը: Յիսուս խօսեցաւ Իր աշակերտներուն, ճիշդ Իր ձեռքակալութենէն, դատավարութենէն եւ մահէն առաջ (Յովհ. 13-17): Իր աշակերտները պատրաստելով՝ երկրէն Իր հեռանալուն, Ան նաեւ «բարձրացուց իր աչքերը դէպի երկինք ու աղօթեց» անոնց համար (17. 1): Աղօթեց Հօրը ըսելով. «Սրբացո՛ւր զանոնք քու ճշմարտութեամբ. քու խօ՛սքդ ճշմարտութիւն է» (Հմ. 17): Սա՛ կ'ենթադրէ, թէ այն՝ ինչ որ Աստուած յայտնած է Աստուածաշունչին մէջ, չի համապատասխաներ ճշմարտութեան այլ չափանիշներու, բայց այդ՝ ինքնին ճշմարտութիւնն ու չափանիշն է, որով կը դատուի ամէն ինչ:

Աստուած կ'ոչ կ'ընէ մեր կեանքը համապատասխանացնելու Սուրբ Գիրքին, ու վարուելու՝ անոր ճշմարտութեան համաձայն:

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ սրբագործէ զի՛ս՝ Սուրբ Գիրքին ճշմարտութեամբ, մինչ ես կը ծառայեմ Թեգի: Ամէն:
Աստուածաշունչը կը յայտնէ Աստուծոյ ճշմարտութիւնը եւ այդ իսկապէ՛ս ճշմարիտ ու վաւերական է:

Քու անուկիդ սաղմոս պիտի երգեմ: [Բ. Թագ. 22. 50]

ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՐԳԵԼ

Երբ Տայանայի (Daiana) տեսողութիւնը սկսաւ տկարանալ, ան սկսաւ անհանգստանալ: Ան նաեւ դժուարութիւններ ունէր՝ մտածելու եւ անընդհատ՝ ինքզինք կը կրկնէր: Անոր ախտանիշները՝ ստիպեցին բժիշկներուն ենթադրել, որ ա՛յդ իր աչքերուն խնդիրը չէ՛, այլ բան մը կայ իր ուղեղին մէջ: Անոնք իմացան, որ իր ուղեղին մէջ ուռ մը ունէր, որը պէտք էր վերցնել: Տայանան մտավախութիւն ունէր, որ վիրահատութիւնը կը վնասէ իր երգելու կարողութեան – բա՛ն մը, որ շատ կը սիրէր եւ կը կիսուէր իր ընտանիքին հետ: Ուստի, իր վիրաբուժը անհաւանական բան մը ըրաւ եւ զինք արթուն պահեց՝ առանց ցաւի վիրահատութեան համար, խնդրելով իրմէ՛ երգել գործողութեան ընթացքին, որպէսզի գիտնայ՝ թէ՛ պահած է իր ջղային շղթային այդ մասը: Նո՛յնիսկ անոնք զուգերգ արձանագրեցին՝ վիրահատութեան ընթացքին:

Տայանայի նման՝ Դաւիթ թագաւոր, որ գրած է Աստուածաշունչի սաղմոսներու մեծ մասը, կը սիրէր երգել: Ան յաճախ կ'երգէր Աստուծոյ թէ՛ ողբով եւ թէ՛ ալ ուրախութեամբ: Երբ ան ազատուեցաւ իր թշնամիներէն, ընդունեց որ Աստուած ազատեց զինք (Բ. Թագ. 22. 49): Աստուծոյ բարի գործերուն պատճառով՝ Դաւիթ յայտարարեց ըսելով. «Ասոր համար հեթանոսներուն մէջ քեզ պիտի ներբողեմ, ո՛վ Տէր, եւ քու անունիդ սաղմոս պիտի երգեմ» (Հմ. 50):

Աստուած կը շարունակէ գործել աշխարհի եւ մեր իւրաքանչիւրին կեանքին մէջ՝ ազատելով մեզ բոլորս՝ այն աղէտալի հիւանդութենէն. մեղքէն: Թող որ մենք, Դաւիթի պէս, մեր սիրտերը հաստատենք գովաբանելու Աստուած՝ այն ամէն բանի համար, ինչ որ Ան ըրած է:

Աղօթք - Երկնաւոր Հայր, կը գովաբանեմ քեզ՝ աշխարհի ու իմ կեանքիս մէջ կատարած գործիդ համար: Ամէն:
Ի՞նչ բանի համար կրնաս փառաբանել Աստուած այսօր: Ի՞նչը քեզ կը հրաւիրէ երկրպագելու Աստուծո:

Այս մարդը (ամեն մեկը)՝ հովին դեմ թաքստոցի պես պիտի ըլլայ, հեղեղին դեմ՝ ծածկոյթի պես: [Ես. 32 .2]

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՆԱՄՔԻ ԱՊԱՍՏԱՆՆԵՐԸ

Ընտանեկան երկար ճամբորդութեան ժամանակ, ժամերձանցուցի ինքնաշարժս վարելով՝ քի՛չ բնակչութիւն ունեցող՝ Մօնթանայի (Montana) եւ Հարաւային Տագօթայի (South Dakota) նահանգներուն մէջէն: Մինչ կը քշէի, սկսայ նկատել օրինաչափութիւն մը. գիւղատնտեսական հողատարածքներու հսկայական մասեր ցցուած էին՝ տուն մը չըլլապատող ծառերու պուրակներով: Մինչ տքնաջան կը փորձէի մեր բեռնակառքը զօրաւոր հովին պատճառով պահել մայրուղիին վրայ, հասկցայ թէ ծառերը հոն դրուած էին՝ ո՛չ թէ միայն գեղեցկութեան համար: Ատոնք միտումնաւոր տնկուած էին՝ տունը եւ ատոր բնակիչները պաշտպանելու համար, փչող սաստիկ հովերու պոռթկումներէն:

Եսայի մարգարէն՝ անգամ մը նկարագրեց Աստուծոյ խնամքին տակ գտնուող ապագան, որպէս ապաստան հովէն ու փոթորիկէն: Աստուծոյ ժողովուրդին՝ ապաշխարութեան կոչ տուած ըլլալով (Ես. 31. 6-7), Եսային նաեւ գրեց ապագայի ժամանակին մասին, երբ «թագաւորը արդարութեամբ պիտի թագաւորէ» (32. 1) եւ բոլոր անոնք, որոնք կ'իշխեն Իր հետ, «հովին դէմ թաքստոցի պէս պիտի ըլլայ, հեղեղին դէմ՝ ծածկոյթի պէս» (հմ. 2): Ստացուած օրհնութիւնը՝ մարդիկ են, որոնք կրնան տեսնել, լսել, հասկնալ եւ խօսիլ ճշարտութիւնը (հմ. 3-4) խաղաղութեան եւ ապահովութեան մէջ:

Մինչ տակաւին կը սպասենք այս խոստումին լիարժէք օգուտներուն, արդէն կը տեսնենք, որ Աստուած կը գործէ անոնց միջոցով, որոնք գործնական կերպով կը փնտռեն ուրիշներու շահերը (Փիլ. 2. 3-4): Քրիստոսի Հոգին կ'օգնէ մեզի, մշակելու ապահով տարածք մը, ուր մարդիկ կրնան ծաղկիլ՝ նոյնիսկ դժուար ժամանակներու եւ պայմաններու մէջ: Սա՛ շօշափելի միջոց է, որով կրնանք օրինակ բերել Աստուծոյ սիրաւատ հոգատարութիւնը:

Աղօթք - Երկնաւոր Յայր, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինձի ապաստան ըլլալու իմ շուրջս եղող մարդոց համար: Ամէն:
Ե՞րբ զգացած ես կարեկցող համայնքի մը՝ պաշտպանիչ ապաստանը: Ինչպէ՞ս այդ բանը ոգեշնչած է քեզ:

Հապա Աստուած պիտի չպաշտպանէ՞ իր ընտրեալներուն իրաւունքը, որոնք կը գոչեն իրեն ցերեկ ու գիշեր: [Ղուկ. 18. 7]

ՅԱՐԱՏԵՒԵԼ ԱՂՕԹՔԻ ՍԷՉ

Երբ Ռոյսթընի (Royston) աղջիկը՝ Հաննահ (Hannah), ուղեղի արիւնահոսութիւն ունեցաւ, որու հետեւանքը եղաւ մահաքուն, Ռոյսթըն եւ իր ընտանիքը քանի մը անգամ դիմեցին Աստուծոյ՝ աղօթքով: Ամիսներով սպասելու ընթացքին, անոնք կառչեցան իրարու եւ Աստուծոյ: Ընտանիքին հաւատքը արթնեցաւ, ինչպէս Ռոյսթըն ըսաւ. «Աստուած երբէ՛ք ասկէ աւելի մօտ չե՛նք զգացած»: Այս փորձառութեան ժամանակ՝ իրենց տրուեցաւ «հաւատքի վերանորոգութիւն՝ աղօթքի մէջ յարատեւելու համար», Ղուկաս 18-ին մէջ նշուած այրիին նման:

Ռոյսթըն մատնանչեց Յիսուսի պատմութիւնը՝ այրի կնոջ մը մասին, որ շարունակաբար արդարութիւն կը փնտռէր քաղաքի դատաւորէն, որ Ան պատմեց ցոյց տալու համար «թէ պէտք է ամէ՛ն ատեն աղօթել՝ առանց ձանձրանալու» (Ղուկ. 18. 1): Այս կինը՝ բազմի՛ցս դիմած էր դատաւորին, որ յօգնելով՝ վերջապէս գիշեցաւ: Յիսուս հակադրեց այդ անարդար դատաւորը՝ Աստուծոյ, ըսելով. «Հապա Աստուած պիտի չպաշտպանէ՞ իր ընտրեալներուն իրաւունքը, որոնք կը գոչեն իրեն ցերեկ ու գիշեր» (Հմ. 7):

Թէեւ Յիսուսի պատմութիւնը կը վերաբերի անարդար դատաւորին, սակայն ընտանիքի անդամները զգացին մղուժը, աղօթելու Հաննային համար՝ խնդրելով իսկական արդար եւ սիրող Աստուծոյ՝ թեթեւացում եւ օգնութիւն: Անոնք գտան իրենք զիրենք աւելի ու աւելի մօտեցող Աստուծոյ. «Երբ մենք կը փնտռէինք Աստուծոյ ... գրեթէ կարծես մենք որպէս թէ կ'արթննայինք քունէն»: Շատ ամիսներ ետք, Հաննան արթնեցաւ մահաքունէն եւ կամաց կամաց ապաքինեցաւ:

Երբ մենք կը մօտենանք Աստուծոյ, Ան կը լսէ՛ մեր խնդրանքները եւ կը պատասխանէ՛ ըստ Իր շնորհքին:

Աղօթք - Սիրող Աստուած, շնորհակալ եմ քեզի՝ որ Դո՛ւն անարդար եւ անտարբեր դատաւորին պէս չե՛ս, այլ Դուն կը սիրե՛ս ու կը հոգա՛ս ինձի: Ամէն:

Միշտ պիտի ունենանք պայքարներ ու նեղութիւններ, սակայն կարելի է գանոնք աղօթքի վերածել՝ վստահ ըլլալով, որ Աստուած կը պատասխանէ մեր խնդրանքներուն:

Սուրբ Հոգին ... պիտի սորվեցնէ ձեզի ամենը, եւ ինչ որ ըսէ ձեզի՝ պիտի յիշեցնէ ձեզի: [Յոփհ. 14 .26]

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՄԸ

Երբ նաւարկութեան ծրագիրը՝ առաջարկեց ուրիշ երթուղի մը, որ գրեթէ մէկ ժամով կրնար կրճատել ճանապարհը՝ Լաս Վէկասէն (Las Vegas) Լոս Անճըլլըս (Los Angeles), Շէլպի Իսլէր (Shelby Easler) եւ եղբայրը հետեւեցան իրենց առաջարկուած այլընտրանքի այս ուղղութիւններով: Սակայն, «կարճ ճանապարհը» անոնց տարաւ ժամերով հողէ եւ քարուտ ճամբաներով, որ զիրենք թողուց անկուտի եւ անօգնական՝ Գալիֆօրնիայի Մօճէյվ Անապատին (California Mojave Desert)՝ փոշիի փոթորիկի ժամանակ: Անոնք կրցան ետդարձ կատարել, բայց ստիպուած եղան քարշակել իրենց ինքնաշարժը, քանի որ վնասուած էր հողէ ու քարուտ ճանապարհներէն: Նաւարկութեան այս ծրագիրը ներողութիւն խնդրեց բազմաթիւ ճանապարհորդներու, որոնք հետեւած էին այդ սխալ ուղղութիւններուն:

Կարեւոր է, թէ որո՞ւ մենք կ'ապաւինինք առաջնորդութեան համար: Որպէ՛ս Յիսուսի հաւատացողներ, մեզի տրուած է Սուրբ Հոգին, որպէսզի առաջնորդէ եւ ուղղէ մեզ ճշմարտութեան հարցերուն մէջ:

Երբ Յիսուս իմացաւ, որ շուտով պիտի մեռնի եւ պիտի առնուի Իր աշակերտներէն, Ան վստահեցուց անոնց, որ պիտի չի ձգէ զիրենք անօգնական: Ան յորդորեց անոնց, որ հնազանդին Իր պատուէրներուն եւ խօսեցաւ խոստացուած Սուրբ Հոգիին կամ ճշմարտութեան Հոգիին մասին, որ յաւիտեան պիտի ըլլայ իրենց հետ եւ ապրի իրենց մէջ (Հռոմ. 14. 15-17): «Մխիթարիչը, Սուրբ Հոգին, որ Հայրը պիտի զրկէ իմ անունովս, պիտի սորվեցնէ ձեզի ամէնը, եւ ինչ որ ըսէ ձեզի՝ պիտի յիշեցնէ ձեզի (Հմ. 26):

Եկէ՛ք շարունակենք հետեւիլ Սուրբ Հոգիին յիշեցումներուն՝ մեր օրուան ընթացքին: Գիտե՛նք, որ Ան մեզ երբէ՛ք չի մոլորեցնէ:

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ քու Սուրբ Հոգիիդ՝ Մխիթարիչին համար: Ամեն:

Ի՞նչը կ'օգնէ քեզի հետեւելու Սուրբ Հոգիին յիշեցումներուն: Ինչպէ՞ս կրնաս աւելի լաւ ըլլալ Իրեն հետեւելու հարցին մէջ:

Ո՞վ գիտէ, թերեւս դուն այսպիսի ատենուան մը համար թագուհի եղար: [Եսթ. 4 .14]

ԾԻՇՊ ՏԵՂՈՒ, ԾԻՇՊ ԺԱՄԱՆԱԿԸ

Հիւրանոցի մը մէջ՝ հիւանդապահներու համագումար մը տեղի կ'ունենար, երբ հիւրերէն մէկը սրտի կաթուած մը ունեցաւ՝ նախասրահին մէջ: Անմիջապէս երկու երկվեցեակէ աւելի խնամակալներ մօտեցան անոր եւ աշխատեցան զինք ողջ պահելու համար: Հիւրը այնքա՛ն երախտապարտ էր բոլոր հիւանդապահներուն, որոնք ճիշդ ժամանակին՝ ճիշդ տեղն էին:

Եսթեր՝ նոյնպէս ճի՛շդ ժամանակին՝ ճի՛շդ տեղն էր: Ան ընտրուած էր որպէս թագուհի՝ թագաւորին բարեհաճութիւնն ու հաւանութիւնը շահելէ ետք (Եսթ. 2. 17): Բայց տակաւին հրամանագիր մը կը սպառնար իր ժողովուրդին՝ Հրեաներուն, ուստի իր գարմիկը՝ Մութքէ՝ քաջալերեց զինք օգտագործելու իր դիրքը եւ դիմելու թագաւորին, որպէսզի փրկէ զանոնք՝ ստոյգ մահէն: Ան մարտահրաւէր տուաւ ըսելով. «Ո՞վ գիտէ, թերեւս դուն այսպիսի ատենուան մը համար թագուհի եղար» (4 .14): Իր որոշումը՝ վտանգելու իր կեանքը եւ «երթալու թագաւորին մօտ» (Հմ. 16), բացայայտելու այս չար դաւադրութիւնը, փրկեց իր ժողովուրդին՝ ստոյգ մահէն (զլ. 8): Յստակ է՝ թէ Եսթեր թագուհին հասկցա՛ւ, որ Աստուած զինք այդ պաշտօնին վրայ դրած էր՝ ճի՛շդ ժամանակին:

Երբեմն՝ մենք կրնանք մտածել, թէ ինչո՞ւ իրավիճակներ տեղի կ'ունենան կամ պարագաներ կը փոխուին: Գուցէ՛ մենք յուսահատած ենք եւ կ'ողգենք ու կը փորձենք, որ ամէն բան «վերադառնայ իր բնական հունին»: Կրնայ ըլլալ որ Աստուած մեզ դրած է մեր ներկայ իրավիճակներուն մէջ, որոշ նպատակով:

Այսօ՛ր, երբ մենք կը դիմագրաւենք խափանումներ կամ փոփոխութիւններ, եկէ՛ք խնդրենք Աստուծմէ, որ ցոյց տայ մեզի, եթէ կայ որեւէ յատուկ բան մը, որ ինք կը ցանկայ, որ մենք ընենք որպէս իր կատարեալ ծրագիրին մէկ մասը:

Աղօթք - Սիրելի Յա՛յր, երբ յուսահատիմ փոփոխութիւններէն, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինձի տեսնելու աւելի մեծ պատկերը եւ հասկնալ, որ Դո՛ւն կրնաս ամէն բան ընել՝ իմ մէջս ու իմ միջոցովս: Ամէն: **Խանգարումներ ու փոփոխութիւններ միշտ ալ կ'ըլլան, սակայն վստահ ըլլանք՝ որ Աստուած հնարաւորութիւններ կու տայ անոնց միջոցով:**

Զեզմէ իւրաքանչիւրը ստացած է շնորհ մը, սպասարկացէ՛ք զայն իրարու: [Ա. Պետ. 4 .10]

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՊԱՐԳԵՒՆԵՐ

Ուխտաւորը (*Pilgrim*) կոչուած՝ Երաժշտական Բեմադրութեան՝ կսկծական ներկայացումի մը մէջ, Լիսան (*Leisa*) կանգնեցաւ խուլերու համար նախատեսուած յատուկ բաժինին առջեւ եւ օգտագործելով Ամբրիկեան Նշաններու Լեզուն, արտայայտիչ կերպով մեկնաբանեց ներկայացումը: Երաժշտական «Ուխտաւոր» կոչուած այս ներկայացումը, հիմնուած է Ճան Պանիանի (*John Bunyan*) «Ուխտաւորին Ճամբորդութիւնը» (*The Pilgrim's Progress*) կոչուած գիրքին վրայ, որ կը պատմէ մարդու մը հաւատքի ճամբորդութեան մասին, խորապէս յուզիչ, բայց Լիսայի ներկայացումը նոյնպէս յուզիչ էր:

Երբ Լիսային հարցուցին իր մեկնաբանութեան մասին, ան ըսաւ. «Ուխտաւորը մեկնաբանելու եւ ներկայացնելու պատճառը այն է, որ աւետարանը պէտք է հասանելի ըլլայ բոլորին: Իսկ խուլերը՝ խումբ մըն են, որ մեծամասամբ անտեսուած են»: Ան շարունակեց ըսելով. «Սա՛՛ սրտամալիկ է, քանի որ ամբողջ աշխարհի մէջ՝ խուլերու հազիւ երկու տոկոսը լսած են Յիսուսի մասին: Լիսան կ'օգտագործէր իր պարգեւը, որպէսզի խուլերը կարենան ճանչնալ Յիսուսը:

Ինչպէ՛ս Լիսան, մենք ալ կոչուած ենք օգտագործելու մեզի տրուած պարգեւները եւ կարողութիւնները՝ Աստուծոյ սիրոյ վկաները ըլլալու եւ ուրիշներուն դէպի Յիսուս առաջնորդելու ու բարի լուրով աշխարհի վրայ ազդելու համար: Պետրոս առաքեալ գրեց. «Զեզմէ իւրաքանչիւրը ստացած է շնորհ մը, սպասարկացէ՛ք զայն իրարու, Աստուծոյ բազմազան շնորհքին բարի տնտեսներուն պէս» (Ա. Պետ. 4 .10): Այս պարգեւները կը ներառեն՝ ուրիշներ սիրել եւ աղօթել անոնց համար (Հմ. 7-8): Անկախ անկէ՛ թէ դուն քաջալերող, վարագոյրին ետեւ ծառայող օգնական մըն ես կամ ունիս ուրիշ մէկ շնորհք, Աստուած կարող է օգտագործել քեզ ուրիշներուն ծառայելու համար:

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ ինձի, որ գտնեմ ուրիշներուն ծառայելու միջոցով՝ քեզի ծառայելու միջոց մը: Ամէն: Եթէ կը հաւատաս Աստուծոյ ու կը հետեւիս Աւետարանին պատգամին, գործածե՛ քեզի տրուած պարգեւը ու ծառայէ Աստուծոյ:

Տերոջ անունը ամուր աշտարակ է. արդարը անոր կը վազէ ու պաշտպանուած կ'ըլլայ: [Առ. 18. 10]

ԱՍՏՈՒԱԾ, ՄԵՐ ԱՊԱՅՈՎ ՏԵՂԸ

Մենք մեր ինքնաշարժը կը վարէինք տասն հինգ ժամեր, երբ հովամոռիկի ահագանգը մեր ուշադրութիւնը գրաւեց: Նախագգողացումը ըսաւ, որ մենք պէտք է անյապաղ տեղ մը գտնենք պաշտպանուելու համար: Կայծակն ու որոտումը պայթեցան երկինքին վրայ եւ հովը սեղմեց մեր ինքնաշարժին ապակին: Մենք շատ արագ դուրս եկանք մայրուղիէն եւ մեր ինքնաշարժը կանգնեցուցինք կրածոյլ պատերով կարուցուած հիւրանոցի մը մօտ: Ներս վազելով՝ մենք ուրախ էինք ապաստան մը գտնելու համար:

Դժբախտութիւնը մեզի կը յիշեցնէ, որ մեզի ապահով տեղ մը պէտք է՝ մնայու համար: Առակաց 18. 10-ն կ'ըսէ. «Տէրոջ անունը ամուր աշտարակ է. արդարը անոր կը վազէ ու պաշտպանուած կ'ըլլայ»: Աստուածաբանները՝ մեզի կ'ըսեն, որ «Տէրոջը անունը» խօսքը կը նշանակէ Աստուծոյ ո՞վ ըլլալուն ամբողջութիւնը: Իր բոլոր յատկանիշները կ'ապահովեն անվտանգութիւն, երբ մենք կը թաքնուինք իր մէջ: Քանի որ Աստուած ազնիւ է, կ'ողջունէ մեզ: Քանի որ բարի է, կը լսէ մեզի: Քանի որ սէր է, կը կարեկցի մեզի:

Սակայն Աստուած՝ միայն խնդիրներ յաղթահարելու եւս մէկ այլ միջոց մը չէ՛: Ան աւելին է, քան արագ լուծում կամ շեղում մը: Իր մօտ ապաստան գտնելը, կը նշանակէ ընտրել իր օգնութիւնը՝ մնացեալ ամէն բանէ առաջ: Մենք կրնանք վազել իր մօտ աղօթքով, խորհրդածել իր Խօսքին շուրջ կամ յանձնուել Սուրբ Հոգիին՝ ճնշումներու եւ անհանգստութեան ժամանակ: Տարիներու ընթացքին այս սովորութիւնները մեզի կը հանգեցնեն ամբողջ կեանքի մէջ՝ Իրեն ապաւինելու, որ մեր իսկական ապաստանն է:

Աղօթք - Փառք Զեզի՝ Աստուած, որ Դուն ես իմ ապահով տեղս: Կը խնդրե՛մ՝ օգնէ ինձի ամէն տեսակի իրավիճակներու մէջ Զեզի դիմելու: Ամէն:

Կը փորձուիք ընտրել ինքնավստահութիւնը՝ Աստուծոյ ապաւինելու փոխարէն: Երբ կեանքի տագնապներն ու փոթորիկները մեզի հարուածեն, դիմե՛ք Աստուծոյ՝ մեր ապաւենին:

Տեսարան եղանք աշխարհին, հրեշտակներուն ու մարդոց:
[Ա. Կորնթ. 4. 9]

ՄԵՐ ՀԱՒԱՏՔԻՆ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ

304 Թուակահանին Հռոմի կայսր՝ Մաքսիմեան (Maximian) յաղթական մտաւ Նիգոմիտիա (Nicomedia) քաղաքը: Շքերթներ պատուիրուած էին, մինչ քաղաքը հաւաքուեցաւ շնորհակալութիւն յայտնելու հեթանոս աստուածներուն՝ յաղթանակին համար – բոլորը՝ բացառութեամբ այն եկեղեցին, որ լեցուն էր մարդերով, որոնք կ'երկրպագէին մի միայն ճշմարիտ Աստուծոյ: Մաքսիմեան մտաւ եկեղեցին՝ վերջնագիրով մը. «Ազատուեցէ՛ք պատժուելէ՛ հրաժարելով Քրիստոսի հանդէպ ձեր ունեցած հաւատքէն»: Անոնք մերժեցին հրաժարիլ: Բոլորը սպաննուեցան, երբ Մաքսիմեան հրամայեց հրկիզել եկեղեցին ներսը գտնուող հաւատացեալներով:

Պօղոս առաքեալ հասկցաւ Քրիստոսի հետեւելու արժէքը: Ա. Կորնթացիս 4-ին մէջ կը կարդանք՝ թէ ան իր վկայութեամբ ճակատեցաւ հաւատացեալներուն, որոնք կը բնակէին Յունական Կորնթոս քաղաքին մէջ: Ան ըսաւ, որ առաքեալները տառապած են Յիսուսի եւ իրենց համար: Անոնք «տեսարան եղան աշխարհին, հրեշտակներուն ու մարդոց» (Հմ. 9) մինչ ծառայցին Քրիստոսի:

Նմանապէս, Պետրոս առաքեալ յիշեցուց մեզի, թէ ինչպէ՛ս Յիսուս չարչարուեցաւ մեր տեղ: Ան գրեց. «Երբ կը հեզնուէր, փոխարէնը չէր հեզներ. կը չարչարուէր, բայց չէր սպառնար, հապա կը յանձնէր ինզինք արդարութեամբ դատողին» (Ա. Պետ. 2. 23):

Տակաւին այսօ՛ր, Յիսուսի հաւատացողները կը տառապին իրենց հաւատքին համար: Նիգոմիտիայի հաւատացեալներուն նման, որոնք պատարաստակամ՝ ընտրեցին չարչարուիլ աւետարանին համար. թող որ որեւէ հակառակութիւն, որու կը հանդիպինք, ծառայէ բացայայտելու Քրիստոսի հանդէպ մեր հաւատքի ուժը: Մենք կրնանք մեր կեանքը վստահիլ Անոր, որ «արդարութեամբ կը դատէ»:

Աղօթք - Սիրելի Հայր, ինչի ալ հանդիպիմ այսօր, կը խնդրեմ՝ օգնէ ինձի վստահելու կեանքս Քեզի, ինչպէ՛ս Յիսուս ըրաւ: Ամէն:
Մեր հաւատքին հանդէպ անարդար վերաբերմունքի համար վրիժառու ըլլալու տեղ, վստահինք Աստուծոյ, որ մեր միակ ճշմարիտ ու արդար՝ պաշտպանն է:

Ո՛վ Տեր, իմ անծիս իրաւունքը պաշտպանեցիր, իմ կեանքս պաշտեցիր: [Ողբ. 3. 58]

ՏԵՍՆԵ՛Լ ՈՒ ԾԱՌԱՅԵ՛Լ

Ալեքսանտրը ՄըքԼին (Alexander McLean) ըսաւ 60 վայրկեան (60 Minutes) ծրագրի հաղորդավարին. «Երբեմն՝ կեանքի մէջ մենք կը տեսնենք այնպիսի բաներ, որոնք մենք չենք կրնար չտեսնել»: Հարաւային Լոնտոնցին՝ տասն ութ տարեկան էր, երբ գնաց Ուկանտա (Uganda)՝ օգնելու բանտի մէջ եղած հիւրանոցի գործին: Ծի՛շգ հոն էր, որ ան տեսաւ բան մը, որ չէր կրնար չտեսնել – արտաքնոցին կողքին անօգնական պառկած ծերունի մը: Հինգ օր՝ ՄըքԼին հոգ տարաւ անոր: Յետոյ մարդը մեռաւ:

Այս փորձառութիւնը՝ ՄըքԼինին մէջ ուրշնեցող օգնելու կիրքը բորբոքեց: Ան ստացաւ իրաւագիտութեան վկայական եւ վերադարձաւ Ափրիկէ՝ օգնելու լուսանցքի վրայ դրուածները: Հիմնեց «Արդարութեան Պաշտպաններ» կոչուած կազմակերպութիւնը, որ կը պաշտպանէ բանտարկեալներուն:

Շատեր կ'ապրին՝ այնպիսի պայմաններու մէջ, որոնք մենք չէինք կրնար «անտեսել», եթէ տեսնէինք իրենց: Բայց մենք չենք տեսներ անոնց: Իր աւերուած հայրենիքին համար իր ողբին մէջ, Երեմիա մարգարէն՝ սիրտը թափեց անտեսանելի ըլլալու իր զգացողութեան վրայ: Ան ըսաւ. «Միթէ հոգ չէ՞ք ըներ, ո՛վ բոլոր ճամբայէն անցնողներ. նայեցէ՛ք ու տեսէ՛ք թէ արդեօք այն կոտտանքի պէս կոտտանք կա՞յ որ իմ վրաս հասաւ, որովհետեւ Տէրը զիս տրտմեցուց իր բորբոքած բարկութեան օրը» (Ողբ 1. 12):

Երեմիայի սիրտը ցաւեցաւ ո՛չ միայն իր, այլ բոլոր ճնշուածներուն համար: Ան փոխաբերական իմաստով ըսաւ. «Երկրի բոլոր բանտարկեալները ոտքի տակ ճգմելը, ամենաբարձրին առջեւ մարդու մը իրաւունքը ծռելը, ... միթէ Տէրը չի՞ տեսներ» (3. 34-36): Տակաւին՝ ան յոյս տեսաւ: Ան ըսաւ. «Տէրը յաւիտեան չի մերժեր: Ո՛վ Տէր, իմ անծիս իրաւունքը պաշտպանեցիր, իմ կեանքս ազատեցիր» (Հմ. 31, 58):

Աստուած կը կանչէ մեզ ծառայելու «անտեսանելիներուն»:

Աղօթք - Յայր, կը խնդրեմ, տո՛ւր ինծի աչքեր, որպէսզի տեսնեմ կարիքաւոր մարդոց եւ օգնե՛ր ինծի քու սերոյ ցոյց տալու: Ամէն:
Որո՞նք են քու շուրջդ եղող «անտեսանելիները»: Ինչպե՞ս կը տեսնես անոնց եւ ի՞նչ պիտի ընես:

Ան երբէ՛ք պիտի չթոյլատրէ որ արդարը սասանի: [Սաղմ. 55. 22]

ԱՍՏՈՒԾՍԷ ՊԱՅՊԱՆՈՒԱԾ

Ընտանիքս ու ես՝ հայրս տուն բերինք՝ հիւանդանոցէն: Ան մարմինի գործարաններու կամաց-կամաց բճացումի հիւանդութիւն ունէր: Մենք այժմ պէտք էր յարմարութիւնք այս նոր քսանչորս ժամեայ բժշկական առօրիային, երբ ան գամուեցաւ անկողինին եւ սնուցող խողովակի պէտք ունեցաւ: Նոյն ատեն ես կը ծրագրէի՝ մօրս ստամոքսի վիրահատութիւնը եւ աշխատանքի վայրին մէջ գործ ունէի պահանջկոտ յաճախորդներու հետ: Ճնշուած զգալով, օր մը առանձնացայ եւ աղաղակեցի Աստուծոյ եւ ըսի. «Օգնէ՛ ինձի, Հա՛յր: Կը խնդրե՛մ, ուժ տուր ինձի՝ յաղթահարելու գալիք օրերը»:

Դաւիթ ալ նոյնպէս դժուարութիւններ ունէր (Սաղմ. 55. 2-5): Իր որդիին՝ Աբիսողոմի յարձակումը, մտերիմ ընկերոջ կողմէ դաւաճանուած եւ Երուսաղէմի մէջ տեղի ունեցող բռնութեան պատճառով՝ անօգնական՝ Դաւիթը ըսաւ. «Վախ ու դող համակեցին զիս» (Հմ. 5):

Բայց Դաւիթ նախընտրեց վստահիլ Աստուծոյ (Հմ. 23): Ան կը հաւատար, որ «Աստուած երբէ՛ք պիտի չթոյլատրէ որ արդարը սասանի» (Հմ. 22): Ամենակարողին վստահելու տարիները Դաւիթին սորվեցուցին, որ թէեւ դժուարութիւններ ու նեղութիւններ կրնան մեզ անհանգստացնել, սակայն անոնք, որոնք իրենց հաւատքը կը դնեն Աստուծոյ վրայ, երբէ՛ք անվերադարձ կորած եւ անյոյս չեն մնար: «Թէեւ իյնայ՝ պիտի չզգետնուի, որովհետեւ Տէրը անոր ձեռքը կը բռնէ» (37. 24): Դաւիթ գիտէր, որ Աստուած կ'աջակցի իրեն՝ Իր գօրութեամբ եւ իմաստութեամբ. «Ես Աստուծո՛յ պիտի գոչեմ, ու Տէրը զիս պիտի ազատէ» (55. 16): Տասնչորս տարիներ ետք, մենք կը շարունակենք հոգ տանիլ հօրս: Տարիները ինձի սորվեցուցին, որ երբ մեր հոգերը Իր վրայ ձգենք, Ան կ'աջակցի մեզի (Հմ. 22):

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ, որ օգնեցիր ինձի՝ քալելու գալիք օրերուն միջով: Ամէն:

Աստուած կը յիշեցնէ մեզի, որ պիտի չի ձգէ որ ցնցուինք: Ուստի՛ վստահինք Իրեն մեր ունեցած բոլոր դժուարութիւններուն մէջ, որովհետու Ան կը պաշտպանէ մեզ:

Այլևս ծառայ չեմ կոչեր ձեզ, որովհետև ծառան չի գիտեր թե իր տերը ի՞նչ կ'ընէ. հապա ես բարեկա՛մ կոչեցի ձեզ: [Յովհ. 15. 15]

ԲԱՐԵԿԱՍ ՄԸ՝ ԿԷՍ ԳԻՇԵՐԻՆ

«Որո՞ւ կրաս զանգահարել կէս գիշերին, երբ ամէն ինչ սխալ կ'ըլլայ»: Այս հարցումը ցնցեց զիս, երբ առաջին անգամ լսեցի տարիներ առաջ: Իմ բարեկամներէս քանի՞ն՝ բաւարար ուժեղ էին, որ ես կարենայի հարկադրել իմ կարիքի պահուս: Վստահ չէի:

Աստուածաշունչը շատ բան ունի ըսելիք բարեկամութեան մասին՝ նկարագրելով ընկերը, որպէս մէկը՝ որ վստահութիւն կը պահէ (Առ. 11. 13, 16. 28), կը կիսուի խորհուրդներ (27. 9) եւ կը յարգէ իրարու միջեւ եղած սահմանները (25. 17): Բայց, հաւանաբար, ո՛չ ոք սահմանած է բարեկամութիւնը աւելի զօրեղ օրինակով, քան Յիսուս: Մինչ գովազդներ ընողներուն համար մենք շուկայ ենք, իսկ գործատուներու համար՝ անձնակազմ, Իրեն՝ բոլորին Տէրոջ՝ համար, մենք «բարեկամներ» ենք (Յովհ. 15. 15): Յիսուս նկարագրեց Իր տեսակի բարեկամութիւնը, որպէս Աստուծոյ հանդէպ ընդհանուր սիրոյ եւ անձնական գոհաբերութեան վրայ հիմնուած (Հմ. 13, 15) բան մը, որ ինք օրինակած եւ կոչ ըրած էր մեզի փոխանցելու ուրիշներուն (Հմ. 12):

Այդ հարցումը լսելէ երկու տարի ետք՝ կինս ու ես մեծ կորուստ մը ունեցանք: Տէրրըն (Darren), այն քիչերէն մէկն էր, որ գիտէր տեղի ունեցածը, երկու ժամ ճամբորդեց տեսնելու զիս, լսելու իմ բարկութիւնս ու ցաւս եւ աղօթելու ինծի համար: Տէրրըն՝ զբաղած մարդ էր, որ իր օրուան հետ կապուած շատ այլ գործեր ունէր: Բայց ան հետեւեցաւ Յիսուսի՝ գոհաբերական բարեկամութեան օրինակին: Ես իսկապէ՛ս մէկու մը պէտք ունէի, իմ կարիքի պահուս մէջ:

Հարցը այժմ այն է, թէ արդեօ՞ք ուրիշներ իմ մէջս ունին «բարեկամ մը՝ կէս գիշերին»: Քանի որ աւելի շատ ընկերներ ձեռք բերելու աւելի լաւ ձեւեր կան, քան մէկը ըլլալ:

Աղօթք - Սուրբ Յիսու՛ս, կը խնդրեմ՝ օգնէ ինծի առաջարկելու ուրիշներուն այնպիսի բարեկամութիւն մը, ինչպիսին Դո՛ն ձեւաւորած ես: Ամէն:

Որո՞ւ կրնաս զանգահարել կէս գիշերին, երբ ամէն ինչ սխալ կերպով տեղի կ'ունենայ: Ինչո՞ւ կարելոր է ուրիշներուն կողքին ըլլալ՝ իրենց կարիքի ժամուն:

Հագէք Տէր Յիսուս Զրիստոսը, եւ մի՛ մտադրէք մարմինիս
ցանկութիւնները գոհացնել: [Հռոմ. 13. 14]

ՔՐԻՍՏՈ՛ՍԻ ՆՄԱՆ

Որպէս 1950-ականներու եւ 1960-ականներու երեխայ, ես
հասակ առած եմ այն շրջանին, երբ «Ամերիկայի ժամանցը»
պէյսաօլն էր: Չէի կրնար համբերել, որ երթամ զբօսայգի եւ
գնդակ խաղամ: Իմ ամենամեծ յուզիչ պահերէս մէկը՝ այն պահն
էր, երբ ստացայ իմ պէյսաօլի մարզաշապիկս, որու վրայ գրուած
էր մեծ գիրերով մեր խումբին անունը՝ ՀՍԿԱՆՆԵՐ՝ (GIANTS!):
Թէեւ ետեւը դրուած 9 թիւը՝ զիս կը տարբերէր միւսներէն,
սակայն հասարակ համազգեստը ցոյց կու տար, որ մենք նոյն
խումբին մէջ էինք:

Մատթէոս 5. 3-10-ին մէջ, որ ծանօթ է որպէս Երանելիները,
Յիսուս կը նոյնացնէ անոնք, որոնք կը պատկանին
երկինքի թագաւորութեան, որպէս անոնք, որոնք «հագած
են մարզաշապիկը» Քրիստոսանմանութեան: Երկինքի
թագաւորութիւնը բաղկացած է անոնցմէ, որոնք կ'ընդունին
իրենց թագաւորին կեցուածքն ու բնաւորութիւնը: Ըստ
Յիսուսի՝ «երանելի» մարդիկ չեն բնութագրուիր արտաքին
տեսքով, առողջութեամբ կամ ունեցուածքով: Ընդհակառակը,
կարեւորը մարդուն ներսն է կամ սիրտը: «Երանի հոգիով
աղբատներուն» (Հմ. 3) – խոնարհները – անոնք, որոնք հոգեւոր
կարիքաւոր են եւ գիտեն այդ: «Երանի՛ անոնց՝ որ անօթութիւն
ու ծարաւ ունին արդարութեան» (Հմ. 6)՝ անոնք, որոնց հոգիի
ցանկութիւնն է Աստուած հաճեցնել ու պատուել: «Երանի
խաղարարներուն» (Հմ. 9)՝ անոնք, որոնք կը միանան Յիսուսի՝
ներդաշնակութեան ձգտումով:

Քանի որ Հոգին կ'օգնէ մեզի, մենք կրնանք հագնիլ
Քրիստոսանման հագուստը, որ մեզ կը նոյնացնէ որպէս
Յիսուսի հաւատացողներ եւ Իր խումբին անդամներ: Որպէ՛ս
այդպիսին, մենք իսկապէս օրհնուած ենք:

Աղօթք - Երևաւոր Հայր, շնորհակալ եմ Երկինքի Թագաւորութեան մէջ՝
որպէս քաղաքացի իմ կարգավիճակիս համար: Կը խնդրե՛մ՝ շնորհք
տուր ինձի՝ ամէն օր Հոգիին միջոցով՝ նմանելու Քրիստոսի: Ամէն:

Երանելիներուն համաձայն՝ որքա՞ն «լաւ հագած ես»:

Քրիստոսանմանութեան ո՞ր տկար մասին համար դուն կ'աղօթես:

Երանի՛ր՝ հեգեթուն, որովհետեւ անո՛նք պիտի ժառանգեն
երկիրը: [Սատթ. 5. 5]

ԵՐԲ ԿԵԱՆՔԸ՝ ԱՆԱՐԴԱՐ Է

Չարլզ Տիգընզի (Charles Dickens) դասական Օլիվերը
Թուեխթ (Oliver Twist) վէպին մէջ՝ հիւանդ Օլիվերը՝ կը ծնի
աշխատատան մը մէջ, հաստատութիւն մը՝ որ կը շահագործէ
աղքատները: Ծնած օրէն՝ որբացած տղան, ի վերջոյ՝ կը
փախչի դաժան վերաբերմունքի պատճառով: Զարմանալի
«շրջադարձութիւններ»ով ան կ'իմանայ, որ մեծ հարստութեան
մը ժառանգորդն է: Տիգընզ, որ կը սիրէր երջանիկ աւարտներ
իր վէպերուն մէջ, կ'երաշխաւորէ՝ որ բոլոր անոնք որոնք վնաս
հասցուցած էին Օլիվերին տարիներու ընթացքին, կա՛մ արդար
դատաստան ստանան, կա՛մ ալ զղջան իրենց ըրածներուն համար:
Անոր հարստահարողները՝ ստացան ա՛յն, ինչին որ արժանի
էին, մի՛նչ Օլիվերը «ժառանգեց երկիրը»: Եթէ միայն կեանքը
ըլլար Տիգընզի վէպին մէջ գրուած ուրախալի աւարտով:

Աստուածաշունչին մէջ կը կարգանք՝ մարդու մը գրած
երգին խօսքերը, որ կը սպասէր նման օրուան մը. երբ
արդարութիւնը պիտի կատարուի եւ ճնշուածները՝ «պիտի
ժառանգեն երկիրը» (Սաղմ. 37. 9): Թէեւ ան չարութիւն տեսաւ,
բայց բանաստեղծ Դաւիթ թագաւոր խնդրեց համբերութիւն:
Ան գրեց. «Հանդա՛րտ կեցիր՝ Տէրոջ քով, սպասէ՛ անոր, ու մի՛
բորբոքիր ճամբան յաջողութեանը գացողին դէմ, նենգութեամբ
վարուող մարդուն դէմ» (Հմ. 7): Ապա շարունակեց գրելով.
«Արդարեւ չարագործները պիտի բնաջնջուին, սակայն Տէրոջ
յուսացողները երկրին պիտի տիրանան» (Հմ. 9): Հակառակ
իր տեսածին՝ թէ ինչպէ՞ս «ամբարիշտները սուր քաշեցին ...
դժբախտն ու աղքատը տապալելու համար» (Հմ. 14), Դաւիթ
վստահեցաւ Աստուծոյ, որ ամէն բան կը շտկէ (Հմ. 15):

Կեանքը դժուար է եւ յաճախ անարդար: Սակայն՝ Յիսուսի
խօսքերուն մէջ կը լսենք Սաղմոս 37-ին արձագանգը. «Երանի՛ր՝
հեգեթուն, որովհետեւ անո՛նք պիտի ժառանգեն երկիրը» (Սատթ. 5. 5):

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինձի
համբերութեամբ սպասելու, որ Դուն ամէն բան շտկես: Ամէն:
Երբ մարդեր վատ վերաբերմունք ունենան քու դէմ, վստահէ
Աստուծոյ՝ քու անարդար իրավիճակիդ մէջ:

Մենք Աստուծոյ զաւակներն ենք: [Յոճ. 8. 16]

ԱՍՏՈՒԾՈՅ ԸՆՏԱՆԻՔԸ

1863-ն էր: Էտուին (Edwin) կեցաւ Ճըրզի (Jersey) քաղաքի երկաթուղիի հարթակին վրայ: Ան դիտեց, թէ ինչպէ՞ս երիտասարդ մարդ մը՝ ամբոխին հրմշտուքին պատճառով, երկաթուղիի կառքին բակաւ ու վտանգաւոր կերպով ինկաւ շոգեկառքին եւ հարթակին միջեւ եղած ճեղքին մէջ: Շոգեկառքը սկսաւ շարժիլ: Էտուին՝ վա՛ր իջաւ եւ վերջին պահուն՝ մարդուն սպասեց:

Փրկուած մարդը՝ Ռապըրթ Թատտ Լինքընն (Robert Todd Lincoln) էր, նախագահ՝ Աբրահամ Լինքընի (Abraham Lincoln) որդին: Աւելի ուշ, Ռապըրթ գրեց, որ իր փրկարարին «դէմքը անշուշտ՝ լաւ ծանօթ էր», որովհետեւ Էտուին Պութ (Edwin Booth)՝ յայտնի դերասան մըն էր: Փաստօրէն, ա՛ն մէկ այլ դերասանի մը՝ Ճան Ուիքս Պութի (John Wikes Booth) եղբայրն էր, որ երկու տարի ետք՝ սպաննեց նախագահին:

Այս պատմական տարօրինակութիւնը՝ ցոյց կու տայ մեզի իրականութիւն մը: Մենք չենք ընտրեր այն ընտանիքը, ուր մենք կը ծնինք: Գուցէ՛ մեր քոյրերն ու եղբայրները կամ ծնողները՝ սխալ ընտրութիւն կատարած են: Կրնայ ըլլալ՝ որ մենք խառնած ենք՝ ամէն բան: Բայց Աստուածաշունչը կը խօսի Աստուծոյ ընտանեկան ծրագիրին մասին. «Բոլոր անոնք որ կ'առաջնորդուին Աստուծոյ Հոգիով, անո՛նք են Աստուծոյ որդիները» (Հռոմ. 8. 14): Որպէս իր զաւակները՝ մենք «Աստուծոյ ժառանգորդներն ենք» (Հմ. 17): Հիանալիօրէն՝ հրաւիրուած ենք գի՛նք անուանելու «Աբբա՛, Հա՛յր» (Հմ. 15):

Մենք կրնանք երկար ժամանակ պայքարիլ մեր երկրային ընտանիքին անհամերաշխ կեանքին համար: Բայց կրնանք միխթարուիլ, որ Աստուած փոխած է մեր հոգեւոր ժառանգութիւնը: Ան կ'ընդունի մեզ իր ընտանիքին մէջ: Ամենէն լաւը՝ Ան կը հրաւիրէ մեզ, որ գի՛նք կոչենք մեր Հայրը:

Աղօթք - Աբբա՛, Հայր, շնորհակալ եմ, որ զիս որպէ՛ս Քու զաւակդ ընդունեցիր՝ քու ընտանիքիդ մէջ: Ամէն:

Ի՞նչ կը նշանկէ քեզի համար՝ ըլլալ Աստուծոյ ընտանիքին մէկ մասը: Ինչպէ՞ս ա՛յս՝ կը ստիպէ մեզի ապրելու այլ կերպով:

Աստուծոյ խաղաղութիւնը, որ ամէն միտքէ գերիվեր է, պիտի պահպանէ ձեր սիրտերն ու մտածումները՝ Յիսուս Զրիստոսով: [Փիլ. 4. 7]

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ՝ ԱԶՍ ԱՐՁԱԿՈՒԵԼՈՒ ՄԷՁ

Գայլայի (*Kayla*) ունքը կծկուեցաւ՝ երբ ան ուրիշ թուղթ մը եւս խցե՛ց՝ շատ բաներով լեցուն տուփին մէջ, որու չորս կողմը մակագրուած էր «Տո՛ւր Աստուծոյ»: Խորը հառաչելով՝ ան մանրակրկիտ քննեց գրաւոր աղօթքները, որոնք նախապէս դրած էր տուփին մէջ: Ան ըսաւ իր ընկերոջ. «Ես ատոնք բարձրաձայն կը կարդամ՝ գրեթէ ամէն օր: Բայց ինչպէ՞ս կրնամ վստահ ըլլալ, որ Աստուած կը լսէ ինձի»: Շանթէլ (*Chantel*) յանձնեց Գայլային իր Աստուածաշունչը: Ան ըսաւ. «Ամէն անգամ երբ կը գրես կամ կը կարդաս աղօթք մը ու կը զնես Անոր ձեռքին մէջ, կը վստահի՛ս, որ Աստուած կը պահէ Իր խոստումները եւ Իրեն կը յարիս»:

Պօղոս առաքեալ խրախուսեց Յիսուսի հաւատացողներուն «ուրախ ըլլալ Տէրոջմով» եւ հիմնական պատճառներ տուաւ՝ հաստատելով, որ «Տէրը մօտ է» (Փիլ. 4. 4-5): Յորդորեց Աստուծոյ ժողովուրդին, որ փոխանակեն իրենց անհանգիստ միտքերը հաւատքով լեցուած աղօթքներու հետ՝ հաւատալով, որ Ան կը ստանայ իւրաքանչիւր խնդրանք, եւ փառաբանել զԻնք՝ վստահելով Անոր անվերջ ներկայութեան՝ անսահման խաղաղութեան մէջ (Հմ. 6-7):

Խաղաղութեան իշխանը՝ Տէր Յիսուս, կը պահպանէ մեր զգացական եւ մտաւոր բարեկեցութիւնը, երբ մեր միտքը կը զնենք զԻնք մատնանշող յատկութիւնները, որոնք «ճշմարիտ» են, «չիտակ», «մաքուր՝ եւ գովելի» (Հմ. 8):

Աստուծոյ խաղաղութիւնը կը պաշտպանէ մեզ, երբ կը վստահինք, որ խաղաղութեան Աստուածը մեզի հետ է: Ազատուած ըլլալով մտահոգութիւններուն կառչելու բեռէն՝ մենք կրնանք խաղաղութիւն զգալ, մեր իւրաքանչիւր աղօթքը՝ Աստուծոյ վստահելի ձեռքերուն մէջ ձգելով:

Աղօթք - Շնորհակալ եմ Զեզի՝ Աստուած, որ Դո՛ւն ես իմ խաղաղութիւնս, երբ իմ հոգերս Զո՛ւ ձեռքերուդ մէջ կը դնեմ: Ամէն: Աստուած կը գործածէ Սուրբ Գիրքը՝ մեզի օգնելու համար որ Իրեն վստահինք, որ կը լսէ մեր աղօթքները: Ի՛նչ մտահոգութիւններու կառչա՛ծ ես, զանոնք աղօթքով Աստուծոյ տանելու փոխարէն:



Աստուծոյ խօսքը յաւիտեան կանգուն պիտի մնայ: [Ես. 40. 8]

ՅԱԻՏԵԱՆ ՅԱԲՍԱՐԻՍ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու ամենամահաբեր անտառային հրդեհը, Ուիսգանսոնի (*Wisconsin*)՝ Հիւսիս-Արեւելքը գտնուող Բեշտիկօ (*Peshigo*) հրդեհն է: Այդ հրդեհը տեղի ունեցաւ նոյն գիշեր, ինչ որ աւելի ծանօթ է Շիգակօ (*Chicago*) հրդեհը (Հոկտամբեր 8, 1871), բայց խլեց քանի մը հարիւր կեանքէ աւելի: Բեշտիկօ՝ փայտէ շէնքերով արագ աճող քաղաքը, մէկ ժամուայ ընթացքին ոչնչացաւ սաստիկ հովերէն բորբոքած դժոխային հրդեհով:

Կրակին ետին ձգած քանի մը բաներուն մէջ, կա՛ր՝ փոքր բաց Աստուածաշունչ մը: Բոցերը խանձած էին կողքը, իսկ ծայրահեղ տաքութիւնը՝ քարացուցած էր ատոր էջերը, սակայն մնացած էր ընթեռնելի, որ այժմ քաղաքի թանգարանին մէջ է:

Փոքր Աստուածաշունչի պահպանումը, կը յիշեցնէ ա՛յն երաշխաւորութիւնը, որ Աստուած տուաւ Իր ժողովուրդին՝ մէկ ուրիշ փորձառութեան մը ժամանակ: «Խոտը կը չորնայ, ծաղիկը կը թառամի, բայց մեր Աստուծոյն խօսքը յաւիտեան կանգուն պիտի մնայ» (Ես. 40. 8): Հակառակ գրաւումի եւ աքսորի սպառնալիքի «կրակի փոթորիկները», Աստուած հաստատեց, որ Ինք հաւատարիմ պիտի մնայ Իր խոստումներուն եւ երբէ՛ք պիտի չի լքէ անոնց, որոնք Իրեն զիմեցին ու ապաւինեցան:

Բեշտիկօի Աստուածաշունչը՝ որ տակաւին մասամբ ընթեռնելի է, բացուած էր 106-րդ եւ 107-րդ Սաղմոսներուն էջը: Երկու Սաղմոսներուն առաջին համարները կ'ըսեն. - «Շնորհակա՛լ եղէք Տէրոջմէն, որովհետեւ բարի է, որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է»: Նոյնիսկ մեր կեանքի ամենամեծ փորձառութիւններու ժամանակ՝ Իր խօսքերն ու սէրը երբէ՛ք չեն տարուբերիր: Եւ մենք յաւիտեան շնորհակալութիւն կը յայտնենք Իրեն՝ ատոր համար:

Աղօթք - Սիրող Աստուա՛ծ, կը գովաբանեմ Զեզ, Զու հաւատարմութեանդ համար: Կը խնդրեմ՝ օգնէ ինձի, որ վստահիմ Զեզի՝ նոյնի՛սկ դժուար ժամանակներու մէջ: Ամէն Ո՞րն է Աստուծմէ տրուած քու ամենասիրելի խոստումը: Ի՞նչ կրնաս ընել, որպէսզի այսօր մտքիդ մէջ պահե՛ս գայն:

Տերը՝ քու Աստուածդ՝ ի՛նք քեզի հետ պիտի երթայ. ան քեզ երեսի վրայ պիտի չթողու ու քեզ պիտի չլքէ: [Բ. Օր. 31. 6]

ԵՐԲԷ՛Ք ՄԻԱՅՆԱԿ

Տարիներու ընթացքին, քաջալերած ու աղօթած եմ շատ մարդերու համար, որոնք կը պայքարին մինակուլթեան դէմ՝ տարբեր պատճառներով. հանգստեան տան բնակիչներ, որոնց ընտանիքի անդամները չեն այցելել, այրին՝ որ իր օրերը կ'անցընէ դուրսը, որպէսզի մինակ չի մնայ իր դատարկ տան մէջ, նախարարութեան ղեկավարներ, որոնք չունին ոեւէ մէկը՝ վստահելու եւ անտուն մարդեր, որոնք իրենք զիրենք անտեսուած եւ միայնակ կը զգան:

Մինակուլթիւն՝ կրնայ հասնիլ ոեւէ մէկուն՝ որեւէ ժամանակ: Միացեալ Նահանգներու գլխաւոր զինուորական հրամանատարը՝ 2023 Մայիսին հրապարակեց հաղորդագրութիւն մը, որու միջոցով կը զգուշացնէր մինակուլթեան համաճարակին մասին: Խորհրդատուութեան համաձայն՝ Միացեալ Նահանգներուն չափահասները կ'ըսեն՝ թէ զգացած են մինակուլթիւն, որ կրնայ մահացու ըլլալ, ինչպէս օրական տասնեակ սիկարէթ ծխելը:

Երբ Մովսէս կը պատրաստուէր ջահը փոխանցել իրեն յաջորդողին՝ Յեսուելին, ան կ'ուզէր համոզուիլ, որ Իսրայէլացիները գիտէին, որ անոնք մինակ պիտի չի դիմագրաւեն որեւէ ճակատամարտ, երբ անոնք մտնեն աւետեաց երկիրը. «Ուժովցէ՛ք ու քա՛ջ եղէք, մի՛ վախնաք եւ անոնցմէ մի՛ ահաբեկիք, քանի որ Տէրը՝ քու Աստուածդ՝ ի՛նք քեզի հետ պիտի երթայ. ան քեզ երեսի վրայ պիտի չթողու ու քեզ պիտի չլքէ» (Բ. Օր. 31. 6): Ան նաեւ յիշեցուց անոնց՝ նոր առաջնորդին՝ Յեսուելին, ըսելով թէ «Տէ՛րն է որ առջեւէդ կ'երթայ. Ի՛նք քեզի հետ պիտի ըլլայ. Ան երբէ՛ք չի թողուր քեզ եւ չի լքեր» (Հմ. 8):

Եւ ան եզրափակեց այն խօսքերով, որոնք կրնան քաջալերել մեզ այսօր. «Մի վախնար ու մի՛ զարհուրիր» (Հմ. 8):

Երբ մենք կը դիմագրաւենք առանձնութիւն, եկէ՛ք մխիթարուինք՝ գիտնալով, որ Աստուած մեզի հետ է:

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալութիւն, որ ես երբէ՛ք միևնաջ չեմ: Ամէն:

Կարեւոր է, որ իմանանք թէ միևնաջ չենք: Որքա՛ն մխիթարական է գիտնալ, որ Աստուած մեզի հետ է:

Ուրեմն՝ եթե դուք կը գործածեք արքայական Օրենքը՝ Գիրքին ըսածին համաձայն. «Սիրե՛ ընկերդ քու անձիդ պէս» լա՛ւ կ'ընէք: [Յակ. 2. 8]

ՍԻՐԵԼ ՄԵՐ ԴՐԱՅԻՆՆԵՐԸ

Ուշ ամռան որոտախառն անձրեւէն ետք, ստիպուեցանք վերցնել մեր տան վնասած ծառերը, ինչպէս նաեւ տերեւներով եւ ճիւղերով սփռուած մեր բակի ամբողջական մաքրութիւնը ընել: Յաջորդ օրը երբ զբաղեցայ վնասներու եւ ծառերու բեկորներով, փորձեցի զուարճութեամբ ըսել. «Մենք ծառ չունինք»: Իսկապէս՝ բացի երեք փոքր՝ երեք ոտնաչափ բարձրութեամբ սոճիներէն, որեւէ ուրիշ ծառ չունինք: Տակաւին՝ զգալի ժամանակ տրամադրեցի մաքրութեան՝ դրացիներուն ծառերուն պատճառով՝ տերեւներ թափուելէն ետք:

Դրացիներ: Ինչպէ՞ս կը յարաբերինք անոնց հետ, նոյնիսկ երբ անոնք բան մը ըրած ըլլան կամ ծառ մը անհեցուցած կամ մեզ անհանգստացնող բան մը ըսած ըլլան: Աստուածաշունչը՝ այս հարցին մասին կ'ըսէ, «Սիրէ՛ ընկերդ, քու անձիդ պէս» պատուէրը՝ ինը անգամներ. ինչպէ՞ս Ղեւտացւոց 19. 18-ին, Մատթէոս 19. 19-ին, Մարկոս 12. 31-ին, Գաղատացիս 5. 14-ին եւ Յակոբ 2. 8-ին մէջ: Իսկապէս՝ սա՛ երկրորդ մեծագոյն պատուիրանն է, որ Աստուած տուած է մեզի: «Սիրէ՛ Տէրը՝ քու Աստուածդ՝ ամբողջ սիրտովդ, ամբողջ անձովդ, ամբողջ զօրութեամբդ ու ամբողջ միտքովդ» (Ղուկ. 10. 27), առաջինն է: Ընկերին կամ դրացիին հանդէպ սէր ցուցաբերելու բանալիներէն մէկը այն է, թէ ինչպէ՞ս մենք կը յարաբերինք անոնց հետ: Յակոբ բացատրեց այս բանը՝ ըսելով. «Արագ ըլլալ՝ լսելու մէջ, դանդաղ՝ խօսելու մէջ, դանդաղ՝ բարկանալու մէջ» (1. 19):

Ա՛յս վարմունքը ունենալը՝ միշտ ալ հեշտ չէ՛: Մեր ընկերը սիրելը մեր առաջին պատասխանն է: Քանի որ Աստուած կ'օգնէ մեզի, եկէ՛ք Յիսուսի սիրոյ լոյսը սփռենք անոնց վրայ, որոնք իրենց կեանքը մեզի հետ կը կիսեն – մեր դրացիները:

Աղօթք - Սիրելի Հայր, շնորհակալ եմ դրացիներուս համար՝ ըլլան անոնք մեր կողքին բնակող կամ այն մարդոց համար, որոնց հետ ամէն օր կը յարաբերիմ: Կը խնդրե՛մ՝ օգնէ ինձի սիրել անոնց՝ Զրիստոսանման սիրով: Ամէն:

Ի՞նչ բան կ'անհանգստացնէ քեզ դրացիի մը մասին: Ինչպէ՞ս կրնաս այս հարցը լուծել սիրով:

Ընթացէ՛ք լոյսի զաւակներու պէս: [Եփ. 5. 8]

ԸՆԹԱՆԱԼ՝ ՔՐԻՍՏՈՍԻ ԼՈՅՍԻՆ ՍԷՉ

Թիմի (Tim) հիւրանոցին սենեակը՝ գիշեր ատեն շատ մութ կը թուէր ըլլալ: Իսկ եթէ ան գիշերը արթննար եւ սահէր ու իյնար, քանի որ չէր տեսեր՝ ի՞նչ պիտի ըլլար: Բայց երբ Թիմ վեր կեցաւ, ան զարմացաւ տեսնելով, որ մահճակալին տակէն կը փայլէր պայծառ լոյս մը՝ լուսաւորելով իր ճամբան: Շարժումէն զգացող կոճակը մը՝ կը վարէր այդ լոյսը: Լոյսը կը վարէր միայն այն ատեն՝ երբ ան վեր կենար եւ սկսէր քալել:

Աստուածաշունչը կ'ըսէ, որ մենք մտադիր ըլլալու ենք քալելու Աստուծոյ լոյսին տակ: Ինչպէ՛ս Պօղոս ըսաւ Եփեսոսի մէջ եղող Տէր Յիսուսի հաւատացողներուն. «Նմանեցէ՛ք Աստուծոյ սիրելի զաւակներու պէս եւ ընթացէ՛ք սիրոյ մէջ» (Եփ. 5. 1-2): Բայց ի՞նչ կը նշանկէ՛ ա՛յդ ճամբայով քալելը:

Երբ մենք կը քալենք դէպի Քրիստոսի սիրառատ լոյսը, մենք կը հեռանանք մեր մեղքերէն. որոնք կը ներառեն՝ անբարոյականութիւն, անմաքրութիւն, կռապաշտութիւն եւ ազահոլութիւն: Պօղոս ըսաւ. «Ընկերակից մի՛ ըլլաք խաւարին անպտուղ գործերուն, փոխարէնը կշտամբեցէ՛ք զանոնք» (Հմ. 11): Հեթանոսական պաշտամունքը կը ծաղկէր Եփեսոսի մէջ, բայց առաքելին խօսքերը ուղղորդեցին նոր հաւատացեալներուն: «Ժամանակին դուք խաւար էիք, բայց հիմա լոյս էք Տէրոջմով. ուստի ընթացէ՛ք լոյսի զաւակներու պէս» (Հմ. 8): Ան աւելցուց. «Քանի որ Հոգիին պտուղը ամէն տեսակ բարութեամբ, արդարութեամբ ու ճշմարտութեամբ է: Քննեցէ՛ք թէ ի՛նչ է Տէրոջ հաճելին» (Հմ. 9-10):

Օգո՛ւտը: Յիսուսի լոյսը «պիտի փայլի քու վրադ» (Հմ. 14՝ լուսաւորելով քու ճամբադ: Ապա եզրափակե՛ց Պօղոս ըսելով. «Զգուշացէ՛ք որ ընթանաք շրջահայեցութեամբ» (Հմ. 15): Վստահութեամբ քալելով Քրիստոսի լոյսին մէջ՝ մենք կ'օրհնենք ուրիշներուն, երբ անոնց մատնանշենք դէպի Ան՝ ճշմարիտ լոյսի աղբիւրին:

Աղօթք - Սիրելի Յիսու՛ս, այս աշխարհը խաւար է: Կը խնդրեմ՝ փայլեցո՛ւր Քու լոյսդ իմ մէջ: Ամէն:

Եթէ գործնականպէս քալենք Քրիստոսի լոյսին մէջ, Ան կը փայլեցնէ իր լոյսը մեր ճամբաներուն վրայ:

Ազատեցէ՛ք յափշտակութեան ենթարկուողը
հարստահարիչին ձեռքէն: [Եր. 22. 3]

ՀՈԳ ՏԱՆԻԼ ՃՆՇՈՒԱԾՆԵՐՈՒՆ

Յայտնի նախարարի մը կինը՝ Ճոզէֆին Պաթլըր (*Josephine Butler*), որ կը պայքարէր կանանց իրաւունքները պաշտպանելու համար, մեղադրուեցաւ (յաճախ անարդարօրէն) «գիշերուան կիները» շարժումին մասնակից ըլլալուն համար, որոնք հասարակութեան մէջ կը դիտուէին որպէս «նուազ ցանկալիներ»: Աստուծոյ հանդէպ իր խոր հաւատքէն մղուած՝ տարիներ շարունակ Ճոզէֆին պայքարեցաւ 1860-ականներու Բրիտանական Վարակիչ Հիւանդութիւններու Օրէնքին դէմ, որ կիներուն կ'ենթարկէր դաժան եւ յարձակողական «բժշկական» քննութեան:

1883-ին, Օրէնքները չեղեալ համարելու օրինագիծի շուրջ եղած խորհրդարանական քննարկումներու ժամանակ, Ճոզէֆին միացաւ Ուէսթմինիսթըր (*Westminster*) գտնուող կիներուն՝ աղօթելու: Ան ցնցուած էր «անբարեկարգ թաղամասերու՝ ամենաթշուար ու դաժան կեանք ունեցող կիներու» տեսարանէն՝ «բարձրաստիճան տիկիներու» կողքին, որոնք բոլորը կու լային եւ Աստուծմէ կը խնդրէին խոցելիներուն պաշտպանութիւն: Ուրախալի էր, որ օրինագիծը ընդունուեցաւ:

Արդարութեամբ գործելու Ճոզէֆինի այս կոչը, կը կրկնէ Երեմիա մարգարէին խօսքերը, որ փոխանցեց Աստուծոյ պատգամը՝ չար թագաւորներուն: Երեմիա յստակ ըսաւ. «Իրաւո՛ւնք եւ արդարութի՛ւն կիրարկեցէք. ազատեցէ՛ք յափշտակութեան ենթարկուողը հարստահարիչին ձեռքէն»: Եւ «Գաղթականը, որբը եւ այրին մի՛ կեղեքէք, բռնութիւն մի՛ բանեցնէք» (Եր. 22. 3) Աստուած կը ցանկար պաշտպանել անոնց, որոնք չեն կրցած իրենք գիրենք պաշտպանել իրենց հօրներէն:

Աստուած կրնայ մեզ ալ մղել գործելու՝ օգնելով, որ նկատենք անհաւասարութիւնները, եւ բարձրաձայնելու ու որոշ միջոցներ ձեռնարկելու անոնց դէմ:

Աղօթք - Տէր, Դուս կը սիրե՛ս եւ հոգ կը տանի՛ս տկարներուն եւ հօրներուն: Կը խնդրեմ՝ օգնէ ինձի՝ կիսելու Քու սերդ ու շնորհքդ ուրիշներու հետ: Ամէն:

Աստուծոյ հետեւիլը՝ կ'ազդէ ամէն բանի վրայ: Ինչպէ՛ս կրնայ Աստուած գործածել քեզ՝ պաշտպանելու անոր, որ ճշունած է:

Այս է իմ արիւնս, նո՛ր ուխտին արիւնը, որ կը թափուի՝
շատերուն մեղքերուն ներումին համար: [Մատթ. 26. 28]

ԱՐԻՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԱՆ ՆՍՏԱԾ

Արիստոթելը (Aristotle) ըսաւ, որ ո՛չ մէկը չի՛ կրնար բարեկամ
ըլլալ Աստուծոյ հետ: Ինչո՞ւ: Որովհետեւ բարեկամութիւնը
կը պահանջէ՝ հաւասարութիւն, եւ ո՞ր աստուածը կ'իջնէ իր
երկնային կարգավիճակէն, որպէսզի հաւասարի՝ նուաստ մարդ
արարծններուն հետ: Կը զարմանամ, թէ ի՞նչ կ'ընէր Արիստոթելը,
եթէ ներկայ ըլլար Վերջին Ընթրիքին (Մատթ. 26. 26-35):
Որովհետեւ հո՛ն, Յիսուս՝ բոլորին Արարիչը, որ ձգեց իր
երկնային կարգավիճակը՝ եղաւ խոնարհ մարդ (Փիլ. 2. 6-8, Կող.
1. 16) – ըսաւ իր աշակերտներուն, որ այլեւս իրենց ծառաներ
չի՛ անուանէր, այլ բարեկամներ (Յովհ. 15. 15):

Արիստոթելը նոյնպէս պիտի զարմանար, թէ ո՞վ նստած է
այդ սեղանին շուրջ: Այնտեղ էր Մատթէոսը՝ Հռոմայեցիներուն
բարեկամ՝ մաքսաւորը. եւ ապա Սիմոնը՝ Հռոմայեցիներու
հակառակորդ՝ Նախանձայոյզը (Մատթ. 10. 3-4). Յակոբոսի եւ
Յովհաննէսի հետ միասին, «որոտման որդիներ»ը (Մարկ. 3. 17)
նստած՝ լուռ Փիլիպպոսի հետ: Կը պատկերացնեմ Արիստոթելը՝
տարակուսանքով կը հետեւի, թէ ինչպէ՞ս Յիսուս կը նկարագրէ
հացը եւ գինին՝ որպէս իր «մարմինն» ու «արիւնը», որ կը կտրուի
ու կը թափուի «մեղքերու թողութեան համար» (Մատթ. 26.
26-28): Ո՞ր աստուածը պիտի մեռնէր մահկանացու մարդերու
համար, նոյնիսկ անոնց համար, որոնք կը լքե՛ն գինք (Հմ. 56):

Սա՛ է պատճառը, որ Հաղորդութիւնը շատ խորիմաստ
է: Յիսուսի միջոցով Աստուած բարեկամացաւ մարդոց հետ
եւ հնարաւորութիւն տուաւ բարեկամութիւն հաստատելու
անոնց միջոցով, որոնք ունին քաղաքական եւ խառնուածքային
տարբերութիւններ: Երբ մենք կ'ուտե՛նք ու կը խմե՛նք Տէրոջ
սեղանին շուրջ, մենք կը հռչակե՛նք Ան, որ վերագրած է
բարեկամութեան կանոնները՝ մարդկային եւ Աստուածային:

Աղօթք - Սիրելի Յիսուս, շնորհակալ եմ, որ զի՛ս ըրիր Աստուծոյ եւ
ուրիշներու բարեկամ մը: Ամէն:

**Որովհետեւ Յիսուս վերստին գրած է բարեկամութեան
կանոնները, իր օրինակը կ'օգնէ մեզի այսօր՝ մեր ունեցած
փոխարաբերութիւնները տեսնելու՝ նոր տեսլականով:**



Քեզի հաստատ տուն մը պիտի կառուցանեմ, ինչպէս Դաւիթի կառուցանեցի, եւ Իսրայէլը քեզի պիտի տամ: [Գ. Թագ. 11. 38]

ԱՆՀԻՄՆ ՎԱԽԵՐ

«Կը սիրե՛մ քեզ: Քեզ երբէ՛ք չեմ ձգեր»: Ճուլիա պահեց իր ամուսինին ա՛յս բըլիջային հաղորդագրութիւնը, որպէսզի կարենայ կարդալ զայն՝ երբ վախնայ: Իր տազնապալի մանկութիւնը, ձգած էր զինք վախի զգացումով մը, որ սիրելիներ կը լքե՛ն զինք: Ան յաճախ՝ երաշխի՛ք կը խնդրէր իր ամուսինէն, եւ անհամբեր կը սպասէր, որ ան գործէն տուն վերադառնայ:

Աղօթքն ու խորհրդատուութիւնը՝ օգնեցին ճուլիային՝ դիմագրաւելու իր վախը, աւելի առողջ ձեւերով: Ան կ'ըսէ. «Ես կը նայիմ վախիս՝ ամուսինիս սիրալիր խոստումներուն լոյսին ներքեւ: Կը խորհիմ՝ Աստուծոյ խոստումները ճշմարիտ են, եւ անոր համաձայն կը վարուիմ»:

Յերոբովամ թագաւոր նոյնպէ՛ս՝ անհիմն մտավախութիւններ ունէր: Սողոմոնի հաւատքը դրժելուն պատճառով, Աստուած արդէն խոստացած էր Յերոբովամին եւ ըսած. «Անոր (Դաւիթի) որդիին ձեռքէն թագաւորութիւնը պիտի առնեմ, եւ տասը տոհմը քեզի պիտի տամ» (Գ. Թագ. 11. 35): Աստուած վստահեցուց անոր, որ եթէ հնազանդի Իրեն, «Իսրայէլը իրեն պիտի տայ» (Հմ. 38):

Բայց Յերոբովամ վախցաւ: Ան խորհեցաւ ու ըսաւ. «Եթէ այս ժողովուրդը Երուսաղէմ բարձրանայ, Տէրոջ տունը զոհ ընծայելու համար, այս ժողովուրդին սիրտը իր տիրոջ՝ Յուդայի Ռոբովամ թագաւորին պիտի վերադառնայ» (12. 27): Անոր վախը դրդեց զինք՝ մօտերը կռապաշտութեան վայրեր հիմնելու համար, որպէսզի իր հպատակները թոյլ չտան՝ Սողոմոնի որդիին դառնալու (Հմ. 26-33): Որպէս արդիւնք, Յերոբովամ ենթարկուեցաւ Աստուծոյ դատաստանին (14. 7-16): Եթէ միայն վստահէր Աստուծոյ խոստումներուն:

Մենք պէտք չէ՛ ինքնուրոյն գործ ունենանք անհիմն վախերու հետ: Եկէ՛ք թոյլ տանք, որ Անոր սիրառատ ճշմարտութիւնները լուսաւորեն մեր միտքն ու քայլերը:

Աղօթք - Տէր, կը խնդրեմ՝ սորվեցո՛ւր ինձե, թէ ինչպէ՞ս դիմագրաւեմ իմ վախերս եւ օգնե՛ ինձի հնազանդելու Քեզի: Ամէն:

Ի՞նչ անհիմն մտավախութիւններ ունիս: Ի՞նչ կ'ըսէ Աստուածաշունչը անոնց մասին:

Նայելով Պետրոսի ու Յովհաննեսի համարձակուրթան ,
... զարմացան եւ գիտցան թէ անոնք Յիսուսի հետ էին:
[Գործք 4. 13]

ՀԱՄԱՐՁԱԿ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Երբ Ֆրանքո Ջէֆիրէլլին (*Franco Zeffirelli*) կը պատրաստուէր նկարահանել Շէքսպիրի (*Shakespeare*) Ռօմիօ եւ Ժուլիէթի (*Romeo and Juliet*)՝ քննադատուած տարբերակը, ան համարձակ որոշում կայացուց: Ընտրե՛ց երկու անձանօթներ՝ գլխաւոր հերոսներու դերը խաղալու համար եւ պնդե՛ց, որ անոնք մօտ են կերպարներուն տարիքին, ինչպէս որ Շէքսպիր գրած էր: Ջէֆիրէլլին, ի վերջոյ՝ ընտրեց տասներ եօթը տարեկան Լիոնարտ Ուայթինկը (*Leonard Whiting*)՝ որպէս Ռօմիօ եւ տասներ վեց տարեկան Օլիվիա Հասսին (*Olivia Hassey*)՝ որպէս Ժուլիէթ:

Ոմանք կրնան մտածել, որ Յիսուս՝ նման վտանգի մը դիմեց՝ իր աշակերտներուն ընտրութեան հարցին մէջ, որոնք ետքը՝ ներման իր պատգամը փոխանցեցին աշխարհին: Այդ ժամանակ կրօնական առաջնորդները՝ ձերբակալեցին եւ հարցաքննեցին անոնցմէ ոմանք: Գործք Առաքելոց 4. 13-ը կ'ըսէ. «Անոնք նայելով Պետրոսի ու Յովհաննէսի համարձակութեան, եւ ըմբռնելով որ անոս ու տգէտ մարդիկ են, զարմացան»:

Որեւէ ենթադրեալ վտանգ՝ շատ աւելի զարմանալի էր՝ այս պարզ ձկնորսներու իրական պատմութեանէն. «Գիտցան թէ անոնք Յիսուսի հետ էին» (4. 13): Անատակ թուացող աշակերտները՝ ո՛չ միայն եղած են Քրիստոսի հետ, այլե՛ւ անոնք ունէին իր խոստումը՝ միշտ իրենց հետ ըլլալու (Մատթ. 28. 20): Մենք նոյնպէս կը կիսենք այդ խոստումը (Եբ. 13. 5) եւ կրնանք վստահ ըլլալ, որ Անոր ներկայութեամբ եւ շնորհքով, մեր առջեւ դրուած ո՛չ մէկ խնդիր՝ չափազանց մեծ կրնայ ըլլալ իրեն համար:

Աղօթք - Սիրելի Յիսու՛ս, կը խնդրեմ՝ ներէ ինծի այն ժամանակներուն համար, երբ կը փորձեմ առաջ երթալ իմ ուժով եւ իմաստութեամբ: Կ'ուզեմ յոյսս դնել Զու վրադ՝ կեանքի բոլոր պարագաներուն մէջ: Ամէն:
Երբ ծանրաբեռնուած ու ճնշումներ կը զգաս, դիմէ՛ Յիսուսի եւ խնդրէ՛ որ օգնէ քեզի այդ դժուար ժամանակներուն մէջ:

Եթե Երեւանի օրը Տերոջ՝ քու Աստուծոյդ օրն է: [Ել. 20. 10]

ՀԵՌԱՒՈՐՈՒԹԻՒՆ՝ ՄԻՆՉԵՒ ԴԱՏԱՐԿ

Իմ յոգնած փոքր փոխադրակառքս՝ ունի թուային ցուցիչ մը՝ **ՀՄԴ** - Հեռաւորութիւն՝ Մինչեւ Դատարկ (DTE: Distance 'Til Empty): Ա՛յդ՝ ինծի կու տայ ճշգրիտ մնացեալ հեռաւորութիւնը՝ ինքնաշարժը վարելու: Այս օրերուն՝ նոր ինքնաշարժներու մեծ մասը ունի՛ն այս յատկութիւնը: Շատ գործնական է՝ իմանալ, թէ որքա՞ն հեռու կարելի է երթալ՝ մինչեւ կազի ամբարը դարձեալ լեցնելը, որովհետեւ կարեւոր է ճանապարհին անօգնական չմնալու համար:

Գիտէ՞ր, որ Տասը Պատուիրանները կ'առաջարկեն ՀՄԴ յատկութեան հնազոյն օրինակը: Այդ կը կոչուի Շաբաթ՝ Հանգստեան Օր: Ելից 20-ին մէջ՝ Աստուած կ'ըսէ մեզի, որ վեց օր ետք՝ կը հատնի մեր փոխաբերական քարիւղը. «Յիշէ՛ Հանգստեան օրը՝ զայն սրբացնելու համար: Վե՛ց օր աշխատէ եւ ամբողջ գործդ ըրէ. բայց եօթներորդ օրը Տէրոջ՝ քու Աստուծոյդ օրն է» (Հմ. 8-10):

Մենք կրնանք փորձուիլ անտեսել այս հրամանը: Ի վերջոյ, սուտի, սպաննութեան, գողութեան, շնութեան, ազահութեան եւ կռապաշտութեան դէմ արգիլումները (Հմ. 1-17) բաւականին ակնյայտ կը թուին: Բայց ամէն շաբաթ մէ՛կ օր հանգստանա՞լ: Իսկապէ՛ս այդ՝ այդքան կարեւոր է:

Մենք կրնանք մտածել, որ կրնանք «խաբել» այստեղ: Բայց Շաբաթին առաջարկած պարզեւր՝ հանգիստ ընելու հրաւէր մըն է: Դադրի՛լ աշխատանքէ: Յիշե՛լ, որ Աստուած կ'ապահովէ մեր կարիքները, ո՛չ թէ մեր մշտական աշխատանքը:

Հեռաւորութիւնը մինչեւ Դատարկ: Վեց օրեր: Եւ եօթներորդ օրը շնորհքի Աստուածը կը հրաւիրէ մեզ հանգստանալու, լիցքաւորուելու եւ հրաժարելու ա՛յն միտքէն, որ ամէ՛ն ինչ կախեալ է մեզմէ:

Աղօթք - Հայր, փորձութիւն է հաւատալ, որ ամէ՛ն ինչ կախեալ է մեզմէ: Շնորհակալ եմ Շաբաթին համար, հրաւերդ՝ դադրեցնելու իմ աշխատանքս ու վստահելու քու նախատեսութեանդ: Ամէն: **Երբեմն դժուար կը գտնենք մեր աշխատանքէն դադար առնելը՝ հանգստանալու համար: Սակայն՝ ամէն ինչ ընելու եւք՝ հանգստանալու համար:**

Անոց աչքերը բացուեցան ու ճանչցան զինք, իսկ ինք աներեւոյթ եղաւ անոցմէ: [Ղուկ. 24. 31]

ՃԱՆՉՆԱԼ ՅԻՍՈՒՄ

Երբ Գարլոթթա (*Carlotta*)՝ երիտասարդուհի էր՝ կը կարծէր, որ իր մայրը՝ մարդիկ ճանչնալու ուշագրաւ շնորհքը ունէր: Բայց Գարլոթթան էր, որ ուշագրաւ էր: Ան ունէր՝ հազուադիւս հիւանդութիւն մը, որ կը կոչուի *prosopagnosia*: Ան չէր կրնար ճանչնալ կամ յիշել դէմքեր:

Յիսուսի յարութենէն կա՛րճ ժամանակ մը ետք, Երուսաղէմէն քալող երկու աշակերտներ՝ կարծես թէ նման վիճակ մը ունէին, երբ հանդիպեցան մէկու մը, որու պէտք էր ճանչնային: Երկուքն ալ կը խօսէին անցեալ քանի մը օրերուն ընթացքին պատահած յուզիչ դէպքերուն մասին (Ղուկ. 24. 14), բայց երրորդ անձը՝ կարծես՝ անտեղեակ էր իրադարձութիւններէն: Անոնք տուին Անոր՝ արագ ամփոփում մը, բայց զարմացան, քանի որ այս անյայտ անձը (Յիսուս) «մեկնեց անոնց՝ ի՛նչ որ զրուած էր իր մասին բոլոր Գիրքերուն մէջ» (Հմ. 27): Յետոյ՝ Քրիստոս հաց կտրեց անոնց հետ (Հմ. 30) - բան մը, որ Ան բազմիցս բրած էր անցեալին: Այդ պահուն, «անոնց աչքերը բացուեցան ու ճանչցան զինք, իսկ ինք աներեւոյթ եղաւ անոնցմէ» (Հմ. 31): Անոնք շտապով վերադարձան Երուսաղէմ՝ ուրիշներուն պատմելու համար (Հմ. 33-35):

Այդ աշակերտները չի ճանչցան Յիսուսի՝ երբ իր հետ էին եւ չէին ճանչցած զինք չին Կտակարանին մէջ - բան մը՝ որ անոնք յաճախ կը կարդային ու կը կարծէին, որ լա՛ւ գիտեն: Անոնք պէտք ունէին, որ Յիսուս բացայայտէր ինզինք, քանի որ անոնք չէին կրնար ինքնուրո՛յն տեսնել:

Մենք ալ նոյնպէս՝ պէ՛տք ունինք ա՛յդ օգնութեան: Խնդրե՛նք Աստուծա՛յ՝ որ բանայ մեր աչքերը՝ տեսնելու Յիսուսը՝ Աստուածաշունչի էջերուն եւ մեր կեանքին մէջ:

Աղօթք - Սիրելի Յայր, շնորհակալ եմ քեզի՝ Յիսուսը ինծի բացայայտելուդ համար, որպէսզի կարենամ հետեւիլ Անոր: Ամէն: **Ե՛րբ չե՛ս կրցած ճանչնալ Աստուծոյ ներկայութիւնը քու կեանքիդ մէջ: Ինչո՞ւ կը կարծես թէ այդ բանը կը պատահի:**



Եղիայի խօսքին համաձայն ըրաւ, եւ ան, ինք ու իր ընտանիքը երկար ժամանակ կերան: [Գ. Թագ. 17. 15]

ԱՍՏՈՒԱԾ ԿՐ ՅԱՅԹԱՅԹԷ

Իմ սիրելի ընկերուհիս՝ Սէլլի (Sally) ցանկաց ծննդեան տարեդարձ կազմակերպել իր ընկերուհիներէն մէկուն համար: Ան գիտէր՝ որ իր ընկերուհին դժուար ժամանակներու մէջ էր եւ ինք կը փափաքէր օգնել՝ բարձրացնելու անոր տրամադրութիւնը: Սակայն, Սէլլին անգործ էր եւ յաւելեալ դրամ չունէր՝ հաճելի երեկոյթի համար ուտելիք գնելու: Ուստի՝ ան նայեցաւ իր սառնարանին ու պահարանին մէջ, որպէսզի տեսնէ թէ ի՞նչ կայ: Յետոյ իր ունեցածներէն պատրաստեց չքեղ սեղան մը ու անոր վրայ տարածեց իր ունեցած տարբեր տեսակի բոլոր ուտելիքները:

Երբ Սէլլին բաժնեկցեցաւ ինծի հետ իր պատրաստած ստեղծագործական ճաշացուցակը, մտածեցի՝ Եղիայի եւ այրիին պատմութեան մասին (Գ. Թագ. 17. 7-16): Այրին շատ բան չունէր: Իրականութեան մէջ, ան ըսաւ Եղիա մարգարէին, որ պիտի եփէր իր վերջին մնացեալ մթերքներէն՝ իր եւ իր որդիին համար, որ ուտեն «ու յետոյ մեռնին» (Հմ. 12): Եւ ան ունէր միայն փոքր քանակութեամբ ալիւր եւ ձէթ, որ բաւարար էր վերջին ճաշի համար: Բայց Եղիան կնոջ վստահեցուց, որ անոր «սափորէն ալիւրը պիտի չհատնի, ու կուժէն իւզը պիտի չպակսի՝ մինչեւ այն օրը, երբ Տէրը երկրագունդին վրայ տեղատարափ զրկէ» (Հմ. 14): Վստահելով այդ ամէնուն ինչ որ Աստուած յայտնեց Եղիայի միջոցով, թէ եւ ան չէր կարծեր, որ բաւարար է, կինը հասկցաւ՝ որ Աստուած տուած է՝ ա՛յն՝ ինչ որ իրեն պէտք է:

Իմ ընկերուհիս նման, այնպէ՛ս ալ այրին գտաւ՝ ա՛յն, ինչ որ պէտք էր իրեն: Հետեւելով անոնց օրինակներուն՝ եկէ՛ք առատաձեռն ապրինք եւ ապահով ըլլանք Աստուծոյ մեզի համար իր ունեցած նախատեսութեան մէջ:

Աղօթք - Երկնաւոր Յայր, կը խնդրե՛մ՝ օգնէ ինծի բաժնեկցելու ուրիշներու հետ, մինչ կը վստահիմ Զեզի, որ պիտի հայաթայթես՝ ինչ որ պէտք ունիմ: Ամէն:

Ի՞նչ է այն արգելքը, որ կը ստիպէ քեզի՝ ունեցածդ չի բաժնեկցելու ուրիշներուն հետ: Ինչպե՞ս կրնաս առատաձեռն տալ, նոյնիսկ՝ երբ կը թուի՝ թէ պէտք եղածին չափ չունիս:

Դուն ողորմած եւ գթած Աստուած ես: [Նէ. 9. 31]

ԱՍՏՈՒԾՈՅ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ի՞նչն է՝ այն առաջին բանը՝ որ կու գայ քու միտքդ, երբ կը լսես սեփականութիւն բառը: Միտքդ կրնայ երթալ կտոր մը անշարժ գոյքի: Բայց դուն կրնաս նաեւ նկատի առնել «անձի կամ առարկայի մը պատկանող յատկութիւն կամ նկարագիր»․ օրինակի համար որոշ տեսակի փայտի յատկութիւն՝ ատոր մասին պատկերացում մը կու տայ: Ի՞նչ է փայտին հիւսուածքը: Որքանո՞վ ատիկա հակումը ունի կծկուելու: Արդեօ՞ք ունի ջուրի դիմադրողականութիւն: Այլ խօսքով, փայտի ո՞ր յատկութիւններէն կրնաս կախեալ ըլլալ:

Կինս ու ես կը յաճախենք աւանդական զգացողութեամբ եկեղեցի մը՝ ուր կ'ըլլան միացեալ աղօթքներ, ծուկի գալ, Աստուածաշունչի ընթերցում, հաղորդութիւն: Աղօթքներէն մէկը, որ կ'աղօթենք ամէն Կիրակի, կը պարունակէ այս արտայատուցումը. «Բայց Դո՛ւն՝ նոյն Տէրն ես, որու սեփականութիւնը՝ միշտ ողորմած ըլլալ է»: Ո՛չ թէ Աստուծոյ անշարժ գոյքը, այլ Իրեն պատկանող յատկութիւն կամ նկարագիր, ողորմած ըլլալու՝ ո՛չ թէ երբեմն, ա՛յլ միշտ:

Նէյեմիա 9-ն՝ մեզի կու տայ Իսրայէլացիներու պատկերը՝ հաւաքուած միասին, ծոմ պահող, քուրճով փաթթուած եւ մոխիրի մէջ ծածկուած (Հմ. 1), որոնք կը խոստովանին իրենց՝ եւ իրենց նախնիներուն մեղքերը (Հմ. 2, 16): Անոնք փառաբանեցին Աստուած Իսրայէլի հանդէպ Իր ունեցած համբերութեան համար. «Զանոնք անապատին մէջ չլքեցիր՝ քու առատ գթութեամբ» (Հմ. 19): Աստուած կրնար վե՛րջ դնել անոնց կամ լքէ՛ր, բայց Ան երբէ՛ք այդ բանը չըրաւ: Ինչո՞ւ: Այդ Աստուծոյ սեփականութիւնը չէ՛, քանի որ Ան «գթած եւ ողորմած Աստուած է» (Հմ. 31):

Մեր խոստովանութեան աղօթքներուն մէջ, եկէ՛ք գովաբանենք Աստուած՝ Իրմէ կախեալ ըլլալու այդ սեփականութեան՝ Իր ողորմած ըլլալուն համար:

Աղօթք - Հայր, շնորհակա՛լ եմ, որ Զու սեփականութիւնդ՝ Զու նկարագիրդ, մի՛շտ ողորմած ըլլալ է: Ամէն:
Աստուծոյ ո՞ր յատկանիշներուն մասին կրնաս մտածել: Ինչպէ՞ս կը փառաւորե՛ս զինք անոնց համար:

Աստուած միայնակ եղողին ընտանիքի մէջ կը բնակեցնէ:
[Մաղմ. 68. 6]

ՏԵՂ ԸՆԵԼ՝ ՈՒՐԻՇՆԵՐՈՒ ԶԱՄԱՐ

Ամէն տարի՝ ընտանիքս պատի օրացոյց մը կը ձեւաւորէ, բայց վերջերս ատիկա քիչ մը խճողուած դարձած է: Մենք՝ իւրաքանչիւր ամիսը կը զարդարենք՝ նախորդ տարուայ մեր սիրելի լուսանկարներով եւ կ'ընդգծենք ամսուան կարեւոր թիւերը: Քանի որ մեր ընտանիքը կ'ունենայ նոր կողակիցներ եւ երեխաներ, ստիպուած եղած ենք աւելի շատ լուսանկարներ հաւաքել, վստահ ըլլալու համար, որ բոլորն ալ ներառուած են: Այժմ՝ մենք ունինք՝ կիսուած ծննդեան օրերու երկու շարքեր եւ որոշ տօներ ծածկուած են տարեդարձներով: Բայց փոխանակ հրաժարելու անկէ, աւելցած բոլոր նոր անդամներուն լուսանկարները՝ զայն աւելի արժէքաւոր կը դարձնեն ինծի համար:

Աստուծոյ արքայութեան մէջ, նոր եկողներուն տեղ ընելը՝ միշտ օրհնութիւն մըն է: Աստուածաշունչը կ'ըսէ մեզի, որ «Աստուած միայնակ եղողին ընտանիքի մէջ կը բնակեցնէ» (Մաղմ. 68. 6): Անոր սէրն ու պաշտպանութիւնը կը փոխանցուի ընտանիքի հասկացողութեամբ, քանի որ Ան «որբերուն հայրն» ու «այրերուն դատաւորն» է (Հմ. 5): Անոր փափաքն է՝ ողջունել անոնց, որոնք մեկուսացուած, նախատուած կամ մեղադրուած են, եւ ուստի՝ «կապուածները ազատ կ'արձակէ ու կ'երջանկացնէ» (Հմ. 6):

Որպէս Յիսուսի հաւատացողներ՝ մենք որդեգրուած ենք Աստուծոյ ընտանիքին մէջ (Գաղ. 4. 5) եւ մենք յանձնարարուած ենք՝ կիսել իր բաց հրաւէրը՝ ուրիշներու հետ (Բ. Կորնթ. 5. 20): Ինչպէ՛ս իմ ընտանեկան օրացոյցս, որքա՛ն աւելի շատ մարդեր ընդունին Աստուծոյ ընտանիքին միանալու հրաւէրը, այնքան աւելի գեղեցիկ կը դառնայ: Մենք պէ՛տք է՛ անհանգստանանք սահմանափակ կարելիութիւն մը կորսնցնելով. բոլորին համար բաւարար տեղ կայ եւ Ան կ'ուրախանայ նոր հաւելումներով:

Աղօթք - Տէր Աստուած, շնորհակալ եմ՝ որ կը սիրես զի՛ս եւ թո՛յլ կու տաս, որ Զո՛ւ սերդ կիսեմ ուրիշներու հետ: Ամէն:
Ինչպէ՛ս կրնաս կիսուիլ Աստուծոյ ընտանիքին մաս կազմելու օրհնեալ հրաւերը: Ի՞նչ կը նշանակէ, թէ բոլորին համար տեղ կայ՝

Ի՛նք քաւեց մեր մեղքերը խաչափայտին վրայ՝ իր մարմինով, որպէսզի՝ գերծ ըլլալով մեղքէն՝ ապրիք արդարութեան համար: Դուք անոր վերքերո՛վ բժշկուեցաք: [Ա. Պետ. 2. 24]

ՅԻՍՈՒՍ ԱԶԱՏԵՑ ՄԵՁ

Ամունտսըն-Սքոթթ (*Amundsen-Scott*)՝ Հարաւային Բեւեռի երկու աշխատաւորներ՝ ստոյգ բժշկական օգնութեան կարիքը ունէին: Մէկը սիրտի կաթուած ունեցած էր, իսկ միւսը՝ իր կեանքին վտանգ սպառնացող ստամոքսի խնդիրներ ունէր: Անոնց ապաքինում ապահովելու միակ միջոցը փրկութեան առաքելութիւն մը սկսիլն էր: Սակայն, դժուար պայմաններու պատճառով, ներառեալ մթութիւն եւ Փետրուարէն Հոկտեմբեր ամիսներու -75 ջերմաստիճանը, ընդհանրապէս վտանգաւոր կը սեպէին օգնականներու թռիչքը: Բայց օգնականները վճռական էին փրկելու աշխատողները եւ ըրին, հակառակ երկու օրերու դժուար թռիչքներու:

Փրկութեան պատմութիւնները ոգեշնչից են: Ամենամեծ փրկութեան պատմութիւնը ա՛յն էր, երբ Տէր Յիսուս մեզ ազատեց մեղքէն: Պետրոս առաքեալ գրեց. «Ի՛նք քաւեց մեր մեղքերը խաչափայտին վրայ՝ իր մարմինով, որպէսզի՝ գերծ ըլլալով մեղքէն՝ ապրիք արդարութեան համար: Դուք անոր վերքերո՛վ բժշկուեցաք» (Ա. Պետ. 2. 24): Ան փրկեց մեզ՝ կրելով մեր մեղքերը Իր մարմինին մէջ: Ան կրենց զիրենք որպէս զոհ, զոհ մը, որով Ան «չարչարուեցաւ քեզի համար» եւ ինծի համար (Հմ. 21): Խաչին վրայ Քրիստոս կրեց «Օրէնքին անէծքը» (Գաղ. 3. 13) եւ մեր ամօթը: Ան վիրաւորուեցաւ, որպէսզի մենք բժշկուինք եւ Ան մեռաւ, որպէսզի մենք ազատուինք՝ մեղքի պատիժէն եւ զօրութենէն (Ա. Պետ. 2. 24, Ես. 53. 5):

Որքա՛ն զարմանալի է իմանալ, որ մեր յուսահատ վիճակէն մենք փրկուեցանք՝ մէկու մը միջոցով, որ պատրաստ էր դիմանալու մեզի համար՝ ամենադժուար պայմանները:

Աղօթք - Սիրելի Յիսուս, շնորհակալ եմ՝ քու անհաւատալի զոհաբերութեանդ եւ ինծի փրկելուդ համար: Ամէն:
Ի՞նչ կը նշանակէ քեզի համար՝ քրիստոսի տուած փրկութիւնը:
Ինչպե՞ս կրնաս օգնել ուրիշներուն՝ այդ նոյն փորձառութիւնը ունենալու:

Ո՛վ որ այս յոյսը ունի անոր վրայ, կը մաքրագործէ ինքզինք՝
ինչպէս ան մաքուր է: [Ա. Յովհ. 3. 3]

ԱՍՏՈՒԱԾ ՊԻՏԻ ՊԱՅԷ ԶԱՅՆ

Միացեալ Նահանգներու տարբեր համայնքներու հարուստ բարերարները, ոգեշնչող խոստում տուին ուսանողներուն: Եթէ անոնք լաւ նիշեր ստանան իրենց շրջանի դպրոցի տան երեք տարիներու ընթացքին, բարերարները պիտի վճարեն չորս տարիներ իրենց նահանգի հանրային համայքային գոլէճի կամ համալսարանի կրթաթոշակները: Որոշ քաղաքներու մէջ՝ վիճակագրութիւնը ցոյց տուած է, որ ա՛յդ կը դրդէ ուսանողներուն՝ հարուստ թէ աղքատ, սկսիլ աւելի լաւ աշխատիլ՝ այս լուրը լսելէ ետք: Ուսուցիչ մը ըսաւ. «Ա՛յդ մէկը՝ ընդհանուր մտածելակերպի փոփոխութիւն եղած է: Իւրաքանչիւր մանկապարտէզ ձեզի պիտի ըսէ, որ անոնք գոլէճ կ'երթան: Իրականութիւն է՝ ա՛յդ: Գալիքի խոստումը՝ կ'աւելցնէ անոնց ցանկութիւնն ու յոյսը ապագային նկատմամբ:

Յովհաննէս առաքեալ խօսեցաւ գալիքին խոստումին մասին, որ օգնե՛ց դրդելու առաջին հաւատացեալներու հաւատքին: Յիսուս խոստացաւ վերադառնալ եւ երբ վերադառնայ, Յովհաննէս կ'ըսէ. «Իրեն պէս պիտի ըլլանք, որովհետեւ պիտի տեսնենք զինք ինչպէս որ է» (Ա. Յովհ. 3. 2): Ան խրախուսեց իր ընթերցողներուն. «Ո՛վ որ այս յոյսը ունի անոր վրայ, կը մաքրագործէ ինքզինք՝ ինչպէս ան մաքուր է» (Հմ. 3): Մենք վստահ յոյսը ունինք, որ օր մը պիտի տեսնենք Յիսուսը: Եւ այդ խոստումին պատճառով, իրեն աւելի նմանելու մեր ցանկութիւնը կ'աւելնայ, քանի որ մենք սիրուած ենք իրմէ եւ ի պատասխան՝ կը սիրենք զինք:

Ի՛նչ ժամանակ պիտի ըլլայ, երբ Յիսուսի՝ դէմ առ դէմ պիտի տեսնենք: Մինչ այդ, մենք կը շարունակենք հետեւիլ իրեն, աճելով մեր հաւատքին մէջ եւ ակնկալելով իր գալուստը: Աստուած կը պահէ իր խոստումը:

Աղօթք - Յիսու՛ս, անհամբեր կը սպասեմ՝ Զեզ տեսնելու եւ ամէն կերպով ամբողջական ըլլալու: Ամէն:
Ինչպե՞ս կրնաս շարունակել սերտօրէն քալել Յիսուսի հետ: Ի՞նչ ուղիներով կը ցանկաս՝ աւելի նմանիլ իրեն:

Բազմողին տեսքը նման էր յասպիս եւ սարդիոն, ու գահին շուրջը կար ծիածան մը՝ տեսքով գմբուխտի նման: [Յայտ. 4. 3]

ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌՔԻՆ ԱԿՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Աւտրալացի լուսանկարիչ Քրիստիան Սքէնսըրը (*Christian Spencer*) աւելի քան քսան տարիներ անցուցած է՝ լուսանկարներ առնելով, Պրագիլի Իթաթիաեայ (*Itatiaia*) ազգային պուրակին մէջ: Անոր լուսանկարչութեան հիանալի մասը այն է, որ ան լուսանկարած է արեւի լոյսին ազդեցութիւնը, որ կ'անցնի հծծահաւ թռչունի բաց թեւերուն ընդմէջէն: Ան պարզած է, որ թեւերը կը ստեղծեն պրիսմականման ծիածան մը, երբ թռչունները կը թռչին պայծառ արեւին եւ իր տեսախցիկին՝ ոսպնեակին միջեւ: Ուրիշ լուսանկարիչներ՝ նոյնպէ՛ս լուսանկարած են այլ տեսակի թռչուններու նման լուսանկարներ, հծծահաւ թռչուններէն տարբեր:

Թռչուններու թեւերուն մէջ գոյներու ծիածաններ գտնելը՝ որոշ թաքնուած գանձերու օրինակ մըն է, որ Աստուած դրած է Իր ստեղծագործութեան մէջ: Այսպիսի շքեղութիւն ու գեղեցկութիւն՝ կրնան գրգռել մեր հետաքրքրութիւնը, թէ ինչ պիտի նկատեն Յիսուսի հաւատացողները, երբ տեսնեն զի՛նք՝ նստած Իր գահին վրայ: Երբ Յովհաննէս տեսաւ երկնային գահը՝ Յայտնութիւն 4-ին մէջ, ան հիացած պէտք էր ըլլար: Ան կը նկարագրէ Քրիստոս՝ գահին վրայ, որու կը շրջապատէր «ծիածան մը՝ տեսքով գմբուխտի նման» (հմ. 3): Բառեր՝ չե՛ն կրնար նկարագրել Աստուծոյ փառքը, որ յայտնուած էր առաքեալին:

Երբ մե՛նք՝ կը գտնենք թաքնուած գանձեր Աստուծոյ ստեղծագործութեան մէջ, թող որ վայելենք անոնցմէ իւրաքանչիւրը, իմանալով՝ որ դրախտի մէջ՝ մեզի շատ աւելին կը սպասէ: Այնտեղ մենք պիտի երկրպագենք մեր Արարիչին ու փառաւորենք զի՛նք յաւիտեան:

Աղօթք - Սիրելի Աստուած շնորհակալ եմ՝ Զու ստեղծագործութեանդ մէջ թաքնուած գանձերուն համար, որոնք կը մատնանշեն Զու վեհութիւնդ: Ամէն:
Ի՞նչ ուրիշ թաքնուած գանձեր գտած ես Աստուծոյ ստեղծագործութեան մէջ: Ինչպէ՛ս կրնաս օգտագործել ստեղծագործութիւնը, ուրիշներու Զրիստոսը ցոյց տալու համար:

Համբերութեամբ վազելք մեզի առաջարկուած մրցարշաւը՝
Նայելով Յիսուսի: [Եբ. 12. 1-2]

ՔՐԻՍՏՈՍԻ ՎՐԱՅ ԿԵԴՐՈՆԱՅԱԾ ԱԶՔԵՐ

Է նտրու (Andrew)՝ յայտնաբերեց, որ իր որդիին հեծանիւ վարել սորվեցնելը դժուար էր: Հինգ տարեկան երեխան՝ անընդհատ մէկ կողմ կը թեքուէր ու կ'իյնար: Հասկնալով, որ այդպէս եղաւ, քանի որ որդին կը շարունակէր՝ մէկ կողմ նայիլ, էնտրուն միտք մը յղացաւ եւ հարցուց. «Կը տեսնե՞ս այդ ձողը: Ուղղակի աչքերդ անոր վրայ սեւերէ եւ շարունակէ հեծանիւը վարել»: Որդին՝ ճի՛շդ այդպէս ալ ըրաւ եւ ա՛յս անգամ ան շարունակեց երթալ ու երթալ:

Այս միջադէպը՝ դաս մըն էր էնտրուին համար: Աւելի ուշ պատմելով իր փոքր խումբին՝ թէ ինչ պատահեցաւ, ան եզրակացուց. «Ի՞նչ բանի վրայ որ կեդրոնացնենք մեր աչքերը, ցոյց պիտի տայ թէ ո՞ւր ուղղուելու ենք»: Զարմանալի չէ՛, որ Եբրայեցիս 12. 2-ը մեզի կո՛չ կ'ընէ շարունակել «նայիլ Յիսուսի, մեր հաւատքի ռահվիրային եւ իրագործողին»:

Կեանքի պարտականութիւնները եւ առօրեայ զբաղումները՝ կրնան մեր ուշադրութիւնը հեռացնել մեր հոգեւոր քալուածքէն, ինչպէս նաեւ մեղաւոր սովորութիւններն ու մոլուցքները, որոնք կը թնկճեն մեզ (Հմ. 1): Բայց եթէ մեր աչքերը ուղղենք Յիսուսի եւ խնդրենք Իրմէ, որ օգնէ մեզի՝ զԻնք առաջին տեղը դնելու մեր մտքերուն, որոշումներուն եւ արարքներուն մէջ, Ան կ'առաջնորդէ մեզ՝ մեր ամէն ըրածներուն եւ ըսածներուն մէջ, հնարաւորութիւն տալով մեզի՝ իր մօտ մնալու՝ երկրի վրայ մեր մրցավազքին ընթացքին: Ա՛յս՝ կրնայ դժուար ըլլալ, բայց Աստուած կը ցանկայ օգնել մեզի, կատարելու այն դերերը, որոնք ինք տուած է մեզի: Ան ուժ պիտի պարգեւէ՝ յարատեւելու եւ յաղթահարելու ամէն բանի, որպէսզի «չթուլնանք ու պարտասինք» (Հմ. 3):

Աղօթք - Սիրելի Յիսուս, կը խնդրեմ՝ օգնէ ինձի, որ աչքերս Զու վրադ ուղուած ըլլան: Կը խնդրեմ՝ նաեւ, սորվեցուր ինձի առաջին հերթին դիմելու Զեզի, քանի որ միայն Զեզի պետք ունիմ: Ամէն:
Ի՞նչն է առաջին բանը, որ կը մտածես կամ կ'ընես, երբ պետք է որոշում կայացնես կամ պատասխանես իրավիճակի մը:
Ինչպէ՞ս կրնաս թոյլ տալ, որ քու խօսքերդ՝ գործերդ եւ մտքերդ առաջնորդուին Յիսուսով:

Անոնցմէ ո՛չ մէկը կ'ըսէր իր որեւէ ստացուածքին համար թէ իրն է. հապա իրենց բոլոր բաները հասարակաց կը սեպէին»: [Գործք 4. 32]

ԿԵՐԱԿՐԷ՛ ԿԱՐՕՏԵԱԼԸ

Լիսա եւ Ֆրէտի ՄըքՄիլըն (*Lisa and Freddie McMillan*) ունին իւրահատուկ ճաշարան մը՝ Ալապամայի (*Alabama*) Պրուլթըն (*Brewton*) քաղաքին մէջ: Անոնք կը հրամցնեն անվճար տաք կերակուր բոլորին, որոնք կարգի կը կենան: Այս գոյգը՝ ներդրումներ ըրած են իրենց սեփական խնայողութիւններէն, որպէսզի տարբերութիւն մը ընեն տարեց քաղաքացիներուն, որոնք յաճախ առանց ճաշի կը մնան եւ հազուադէպ կը վայելեն ճաշարանի փորձառութիւնը: Դրուած նուիրատուութեան տուփը կը ստանայ նուէրներ: Լիսան կ'ըսէ. «Երբեմն՝ այնտեղ ոչի՛նչ կը գտնենք: Երբեմն շնորհակալութեան նո՛թ մը: Երբեմն ալ՝ 1000 տոլար: Մի՛շտ, ունինք մեզի պէտք եղածը: Մեր նպատակն է կերակրել կարօտեալները, վերականգնել անոնց արժանապատուութիւնը եւ զարգացնել համայնքը:

Կարօտեալներու օգնելը՝ կրնայ դժուար գործ մը թուիլ, եթէ մենք Աստուծմէ կախեալ չըլլանք: Աւետարանները կը ներառեն արձանագրութիւններ, որ Յիսուս կը կերակրէ հազարաւորներ, հրաւիրելով իր աշակերտները՝ մասնակցելու կերակրումին. «Դո՛ւք տուէք անոնց՝ որ ուտեն» (Մատթ. 14. 16): Գործք Առաքելոցի մէջ կը տեսնենք, որ առաջին դարու եկեղեցիին հաւատացեալները «իրենց բոլոր բաները հասարակաց կը սեպէին» եւ «անոնց մէջ՝ ո՛չ մէկ կարօտեալ կար» (4. 32, 34): Անոնցմէ շատերը վաճառեցին իրենց գոյքերը եւ հասոյթը տուին առաքեալներուն, որոնք «կը բաշխէին իւրաքանչիւրին իր կարիքին համեմատ» (Հմ. 34-35): Հասկնալով, որ իրենց ստացուածքը, ի վերջոյ՝ կը պատկանի Աստուծոյ, անոնք կամաւոր ներդրումներ կատարեցին ուրիշներու կեանքին մէջ:

Աստուած տարբեր ձեւերով կը հոգայ մեր կարիքները, որպէսզի՝ մենք ալ կարենանք հոգալ ուրիշներու կարիքները:

Աղօթք - Հայր, Ե՛ս այնքա՛ն երախտապարտ եմ՝ իմ կեանքիս մէջ՝ Զո՛ւ ըրած առատ մատակարարութեանդ համար: Կը խնդրե՛մ՝ օգնէ ինձի տալու ուրիշներուն՝ անկէ՛, ինչ որ Դուն տուած ես ինձի: Ամէն: **Ինչպէ՛ս Աստուած հայթայթած է քու կարիքներդ: Ինչպէ՛ս կրնաս միանալ Աստուծոյ՝ ապահովելու մեր շուրջ եղողներուն կարիքները:**

Տերը կը կանգնեցնէ կքածները: [Մաղմ. 146. 8]

ՇԵՍՆԵ՛Լ ԱՍՏՈՒԾՈՅ ԱԶԲԵՐՈՎ

Շանթէլի (*Chantale*) տասն երրորդ տարեդարձին, իր խաղաղ հայրենի գիւղին մէջ՝ ժամեր շարունակ ուրախ տօնակատարութեանէ ետք, կրակոցներ խանգարեցին խաղաղ երեկոն: Շանթէլը եւ իր քոյրերն ու եղբայրները՝ վազեցին անտառ, հնազանդելով իրենց մօր խելահեղ հրամանին: Ամբողջ գիշեր՝ անոնք կծկուած մնացին ծառի մը տակ՝ ապահով: Շանթէլ կը պատմէ. «Առաւօտուն արեւը յայտնուեցաւ: Բայց ո՛չ մեր ծնողները»: Ան եւ իր եղբայրներն ու քոյրերը՝ այժմ որբեր եւ գաղթականներ են, միանալով տասնեակ հազարաւոր գաղթականներու ճամբարի մը մէջ:

Երբ կը լսենք Շանթէլի նման պատմութիւններ, փորձութիւն կրնայ ըլլալ նման ճնշող կորուստներէն խուսափիլը: Բայց անոնք որոնք կը հաւատան Սուրբ Գիրքի Աստուծոյն, կը հաւատան Աստուծոյ մը, որ երբէ՛ք չանտեսեր տառապանքը եւ ուշադիր «կը պահպանէ գաղթականները, կը հաստատէ որբն ու այրին» (Մաղմ. 146. 9):

Ան՝ «որ ստեղծեց երինքն ու երկիրը, .. ճշմարտութիւնը յաւիտենապէս կը պահէ» (Հմ. 6), միշտ կ'աշխատի՝ «հարստահարուածներուն իրաւունքը պաշտպանել» եւ «անօթիներուն հաց կու տայ» (Հմ. 7):

Շանթէլ Զուզի Առաջնորդը (*Chantale Zuzi Leader*), որ հիմնեց գաղթական աղջիկները կրթելու կազմակերպութիւն մը, կ'ըսէ թէ իր փորձառութիւնը սորվեցուցած է, որ «ոեւէ մէկը կրնայ գաղթական ըլլալ կորսնցնել այն ապահով տեղը, որ նախապէս ունեցած է»: Թո՛ղ մեր պատասխանը անոնց, որոնք կորսնցուցած են իրենց ապահով տեղը, ցոյացնէ Աստուծոյ սիրտը, որ միշտ հաւատարիմ է «պահպանելու գաղթականները» (9. 9), Ան՝ որ «կը կանգնեցնէ կգածները» (146. 8):

Աղօթք - Դաւատարիմ Աստուած, շնորհակալ ե՛մ Զեգի, որ ապաստան ես բոլոր ցաւողներուն համար: Կը խնդրեմ՝ օգնէ ինծի արտացոլացնելու Զու սիրտդ: Ամէն:

Ինչպէ՛ս դուն կամ քեզի ծանօթ մը, կորսնցուցած է ապահով տեղ մը: Ինչպէ՛ս կրնայ Աստուած գործել նման փորձառութիւններու միջոցով:

Ի՛րապես Տերը այստեղ է, բայց ես չեի գիտեր: [Ծն. 28. 16]

ԱՍՏՈՒԱԾ՝ ԱՄԷՆ ՏԵՂ Է

Պէյսպօլի գլխարկով եւ պարզ շապիկով, ջուլթակահարը՝ տեղաւորուած էր, Ուաշինկթընի (Washington) Լ'էինֆանթ Շուկայի (L'Enfant Plaza) կայարանին մօտ: Ան շարժեց աղեղը լարերուն վրայ, մեղեթային եղանակներ նուազելով: Բայց ուղեւորները աննկատ անցան իր կողքով: Ան կը նուազէր ամբողջ երաժշտական ծրագիր մը, ուր միայն քանի մը մարդիկ կանգ կ'առնէին մտիկ ընելու համար: Եթէ ամբոխը՝ միայն թէ իմանար, որ անոնք շտապելով կ'անցնէին ճօշուա Պէլլի (Joshua Bell) կողքէն: Ան՝ մեր սերունդի մեծագոյն տաղանդաւոր արուեստագէտներէն մէկն է, որ նախորդ գիշեր՝ նուազած էր Քօնկրէսի Գրադարանին (Congress Library) մէջ: Պէլլ նուազեց աշխարհի ամենադժուար ու հմայիչ ջուլթակի կտորներէն մի քանին, բոլորը՝ 1713 թուականին Սդատիվարիոսի (Stadivarius) 3.5 միլիոն տուար արժող ջուլթակի մը վրայ:

Հեշտ է անտեղեակ ըլլալ ու չտեսնել մեր դիմաց եղած հրաշքները: Սա՛ Յակոբի փորձառութիւնն էր, երբ ան կը ճամբորդէր դէպի Խառան (Ծն. 28. 10): Ան կանգ առաւ եւ գիշերեց սովորական տեղ մը, որ կը թուէր ըլլալ որեւէ այլ տեղի նման, պարզապէս գիշերը իր գլուխը դնելու տեղ մը: Աստուած իրեն յայտնուեցաւ կէսգիշերային երագի մէջ եւ ըսաւ իրեն, որ իր բազմաթիւ ժառանգները պիտի օրհնէ ինչպէս նաեւ «երկրին բոլոր գերդաստանները» (Հմ. 14): Ան նաեւ հաւաստիացուց, որ Ան «ամէն տեղ՝ իր հետ պիտի ըլլայ ու պիտի պահէ» (Հմ. 15): Երբ ան արթնցաւ ըսաւ. «Ի՛րապէս Տէրը այստեղ է, բայց ես չէի գիտեր» (Հմ. 16):

Աստուած՝ ամէն տեղ է, «երկիրքն ու երկիրը լեցնողը» (Եր. 23. 24): Ան ներկայ է ամենասովորական վայրերու մէջ: Մեր հրաւէրն է՝ բաց պահել մեր աչքերն ու ականջները, դիտելու եւ լսելու իրեն:

Աղօթք - Սիրելի Աստուած, այնքան հեշտ է Քեզ չնկատել:

Կ'ուզե՛մ Քեզ տեսնել ու լսել: Ամէն:

Ո՛ր գարմացած ես՝ տեսնելով Աստուած: Ինչպե՛ս կրնաս ապրիլ աւելի գիտակից ըլլալով իր ներկայութեան:

Յետամո՛ւտ եղէք բարիին, թե՛ ձեր միջեւ, թե՛ բոլորին հանդէպ:
[Ա. Թես. 5. 15]

ՕՐՅՆՈՒԹԻՒՆ ՍԸ ԸԼԼԱԼ

Երկար տարիներու վրայ գոյութիւն ունեցող տեղական երկրորդական դպրոցի Ֆուլթայլի երկու մրցակիցներու՝ Իկլըզի (Eagles) եւ Փայօնիրզի (Pioneers) միջեւ եղած՝ թէ՛ խաղի մը ատեն, Իկլըզի խաղացող մը հարուածեց գնդակը դարպասին: Գնդակը մտաւ ցանցին մէջ, բայց դուրս ելաւ ցանցին ետեւ եղած բացուածքէն: Մրցավարը չտեսաւ, որ գնդակը մտաւ դարպաս. տեսաւ գնդակը ցանցէն դուրս է, որոշեց որ այդ կօլ չէ՛: Փայօնիր խումբին մարզիչը՝ տեսաւ կօլը եւ կամաւոր հաստատեց Իկլըզ խումբին մարզիչին պնդումը, որ կօլը արձանգրուած է, թէ՛ եւ ան կրնար լուռ մնալ: Մրցավարը հաշուեց կօլը եւ Փայօնիր խումբը պարտուեցաւ 3-2 հաշիւով:

Թէ՛ եւ հեշտ է բարձրաձայնել, երբ այդ մեր օգտին համար է, Աստուածշունչը կը յորդորէ Յիսուսի հաւատացողներուն ու կ'ըսէ՝ «Հետամո՛ւտ եղէք բարիին, թէ՛ ձեր միջեւ, թէ՛ բոլորին հանդէպ» (Ա. Թես. 5. 15): Մեր ընկերին համար լաւութիւն ընելու մեր սովորական հակումէն դուրս գալով՝ այս պատուիրանին դժուար մասը ա՛յն է, որ աշխատելու ենք բարիք ընել՝ մեր մրցակիցներուն համար, առանց մեր ըրածէն օգուտ մը քաղելու կամ փոխարէնը «առանց բան մը սպասելու» (Ղուկ. 6. 35):

Մրցակիցի մը համար լաւութիւն ընելը՝ կրնայ նշանակել, խօսիլ գործընկերոջ մը ջանքերուն համար՝ աւարտելու վաճառք մը, նոյնիսկ եթէ այդ կը նշանակէ, որ ան կրնայ աւելի մեծ դուրս մտնալ: Լաւութիւնը ընելը, կրնայ նշանակել՝ դրացիին տերեւները հաւաքել, նոյնիսկ եթէ ան դժուար թէ շնորհակալութիւն յայտնէ:

Երբ մենք գործնականապէս ջանք ընենք՝ բարիք ընելու ուրիշներուն, մենք ցո՛յց կու տանք, որ Աստուծոյ սէրը կը տարածուի բոլորին վրայ:

Աղօթք - Սիրող Յիսու՛ս, կը խնդրեմ՝ օգնէ ինձի, որ ձգտիմ բարիք ընել ուրիշներուն՝ Սուրբ Յոգիին գորութեամբ, նոյնիսկ երբ այդ դժուար թուի ըլլալ: Ամէն:

Օգնա՛՞ծ ես հակառակորդ խումբի մը, նոյնի՛սկ երբ այդ՝ քեզի համար կորուստ կը նշանակեր: Ինչպէ՛ս այն ցոյց կու տայ Աստուծոյ սէրը:

Ե՛ս պիտի արածեմ իմ ոչխարներս, ե՛ս պիտի պառկեցնեմ գանոնք, - կը պատգամէ Տէրը Եհովան: [Եզ. 34. 15]

ՈՉՒՄՆԵՐՈՒ ԱՆՅՈՒՄ

Երթեակը՝ կա՛նգ առաւ, բայց չէի գիտեր, թէ ինչո՞ւ: Ճամբուն վրայ քիչ ինքնաշարժներ կային եւ ես չկրցայ տեսնել՝ որեւէ ակնյայտ պատճառ՝ կանգ առնելու համար: Եւ յետոյ, յանկարծ ի մեծ զարմանք եւ ուրախութիւն, հազարաւոր ոչխարներ դուրս եկան եւ անցան մայրուղին: Որպէս Այտըհօի (Idaho) նորեկ, տակաւին ծանօթ չէի ոչխարներու ամէն տարուայ գաղթին մասին՝ դէպի Պոյսի (Boise) ստորոտները՝ ամէն գարնան: Տեղացի անասնապահները՝ իրենց հօտերուն կ'ուղեկցին լեռներուն ստորոտները, ուր անոնք կ'արածին ամառուայ ընթացքին՝ տեղական խոտերու վրայ:

Քանի որ ամբողջ կեանքիս ընթացքին՝ բնակած եմ միայն քաղաքի եւ արուարձաններու մէջ, այդ տեսարանը՝ ինծի համար դիտարժան էր: Սակայն, ոչխարները Եզէկիէլի օրերուն կեանքի սովորական մէկ մասն էին (եւ Աստուածաշունչի արձանգրուած պատմութեան մեծ մասը): Մարգարէն օգտագործե՛ց՝ մարդոց ծանօթ բան մը, ոչխարներ եւ հովիւներ, որպէսզի անոնց փոխանցէ՝ Աստուծոյ մխիթարութեան եւ յոյսի պատգամը:

Եզէկիէլ՝ մխիթարիչ եւ յուսադրիչ խօսքեր առաջարկեց Իսրայէլացիներուն՝ ըսելով անոնց, որ հակառակ Բաբելոնի մէջ տարիներով իրենց կրած դժուարութիւններուն՝ Աստուծոյ դէմ անոնց կրկնուող ապստամբութեան հետեւանքով, Ան օր մը պիտի վերագարձնէ զիրենք «իրենց երկիրը» (Եզ. 34. 13): Աստուած՝ ա՛յն ատեն, հովիւի նման, «զանոնք լաւ արօտի մէջ պիտի արածէ», եւ «Իսրայէլի լեռներուն վրայ պարարտ արօտի մէջ պիտի արածին» (Հմ. 14):

Աստուած նմանատիպ հոգատարութիւն կը ցուցաբերէ իր ժողովուրդին հանդէպ: Մենք կրնանք վստահիլ իրեն, մեր հովիւին, որ կ'առաջնորդէ մեզ կեանքի ընթացքին, դէպի լաւ արօտավայրեր (Հմ. 13-14), Նոյնիսկ եթէ մենք մեզ «ցրուած» զգանք

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ, որ իմ քնքուշ եւ վստահելի Յովիւն ես: Ամէն:

Դժուար ժամանակներ մի՛շտ պիտի ունենանք, սակայն կարեւոր է՝ վստահիլ Աստուծոյ, որ Ի՛նք ըլլայ մեր Յովիւը՝ այսօր:

Տեսա սուրբ քաղաքը՝ ..., որ կ'իջնէր երկինքէն՝ Աստուծմէ:
[Յայտ. 21. 2]

ԳԵՂԵՑԻՎ ԱՒԱՐՏ ՄԸ

Տաք իրիկուն մը՝ ընկերներուս հանդիպեցայ՝ քաղաքին կեդրոնը: Ոգեւորուած էինք ճաշելու ճաշարանի մը մէջ, որ դուրսը գեղեցիկ երաժշտութիւն կը հրամցնէր, բայց երբ հասանք՝ բակը լեցուն էր ու տեղ չկար: Յուսախաբ քալեցինք քանի մը թաղամաս՝ ուտելու այլ տեղ մը գտնելու համար:

Երկրի վրայ՝ յուսախաբութիւնները մի՛շտ կ'ըլլան ամէն չափերով թէ՛ մեծ, եւ թէ՛ փոքր: Սիրելի տնային կենդանիներ կը մեռնին: Գործի ծրագիրներ կը ձախողին: Առողջական խնդիրներ կ'առաջանան: Կը կորսնցնենք յարաբերութիւններ՝ սիրելիներու հետ: Մեր անյաջողութիւններուն ժամանակ, մենք ունինք Աստուծոյ մխիթարութիւնը, բայց մեր կեանքի պատմութիւնները՝ միշտ չէ՛, որ կը պարունակեն ա՛յդ երանելի աւարտը, որուն մենք կը փափաքինք: Յիսուսի հաւատացողները, սակա՛յն, ուրախ յաւիտենականութեան յոյսը ունին:

Յայտնութեան գիրքը կ'արձանագրէ, որ Աստուած Յովհաննէսին կու տայ սքանչելի տեսիլք մը: Տեսիլքին մէջ՝ Յովհաննէս տեսաւ «Սուրբ Քաղաքը, նոր երուսաղէմը» (21. 2): Աստուծոյ փառքը ճառագայթող «Իր ամուսինին համար զարգարուած հարսի մը պէս պատրաստուած» (Հմ. 2): Աստուած կը բնակի այդ վայրը՝ Իր բոլոր ժողովուրդին հետ միասին: Իր քաղաքին մէջ, ո՛չ մէկ յանձագործութիւն, խաւար եւ վախ պիտի ըլլայ (Հմ. 25-27): Լոյս, խաղաղութիւն եւ բարի հաճութիւն պիտի շատանան:

Այն գիշեր, ճաշէն ետք քալելով ետ հասանք՝ առաջին ճաշարանին մօտը: Մայթին վրայ՝ պաղպաղակ ուտելով՝ կանգնեցանք երաժշտութիւնը լսելու համար: Ես վայելեցի այդ պահը, բայց մենք գիտենք, որ ո՛չ մէկ երկրային ուրախութիւն չի՛ կրնար համեմատուիլ այն վերջնական աւարտին հետ, որ հաւատացեալները յաւիտեան պիտի վայելեն:

Աղօթք - Հայր, կը խնդրեմ՝ օգնէ ինձի տեսնելու իմ ցաւս յաւիտենականութեան լոյսին ներքէ՛ւ՝ իմանալով, որ Դո՛ւն աւելի լաւ ապագայ մը պատրաստած ես ինձի համար: Ամէն:
Ի՞նչ բանի՞ ամենաշատը կը սպասես՝ յաջորդ կեանքին մէջ:
Ինչպե՞ս քեզ կը քաջալերէ ուրախ ապագայի մը խոստումը:

Արդարեւ Տէրը փրկեց Յակոբը, ու զայն իրմէ ուժեղին ձեռքէն ազատեց: [Եր. 31. 11]

ԱՍՏՈՒԾՈՅ ԳԵՐԱԶԱՆՑ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Ճան Սթրուբը (John Stroup)՝ իր «Փոսէն՝ Ամպիոնը» (*From the Pit to the Pulpit*) գրած գիրքին մէջ՝ կը պատմէ կեանքի հզօր՝ անբարիացակամ ուժերու մասին, որոնք հարուածեցին ու կործանեցին զինք՝ Ֆիզիքական, սեռային եւ զգացական առումով: Ան կը նշէ. «Ես սկսայ թմրանիւթ օգտագործել, ինքնաշարժ վարելէ առաջ: ... Զգեցի դպրոցը եւ սկսայ աւելի ու աւելի խորանալ յանցագործ ապրելակերպի մէջ»: Ի վերջոյ՝ ձանի յանցագործութիւնները՝ զինք տարին ճաղերու ետեւ: Հինգ տարուայ պատիժը կրած ատեն, Աստուածաշունչը իրեն համար դարձաւ իրական, եւ ան խոնարհեցաւ Աստուծոյ առջեւ: Աստուծոյ շնորհքով, ան ազատուեցաւ իր ունեցած սովորութիւններէն, որոնք նախապէս իրմէ աւելի ուժեղ էին:

Հին Իսրայէլի փորձառութիւնը յաճախ կը ներառէր՝ ճնշում եւ երբեմն ալ գերութիւն «իրենցմէ ուժեղներուն ձեռքէն» (Եր. 31. 11): Նոյնիսկ երբ անոնց դժուարութիւնները՝ իրենց իսկ յիմարութեան պատճառով էին, Աստուած՝ Ինք գործադրեց Իր ողորմութիւնն ու զօրութիւնը, Իր կամակոր ժողովուրդին անուկով: Նորոգութիւն՝ ներառեալ ուրախ երգը, առատ բերքահաւաքը եւ տօնակատարութիւնը (Հմ. 12-14), սպասելի էր, երբ Աստուած գործադրեց Իր գերազանց ուժը՝ իրենց բարօրութեան համար:

Ձան Սթրուբի կեանքը, վկայութիւն մըն է Աստուծոյ զօրութեան մասին՝ անոնց անուկով, որոնք իրենց հաւատքը կը դնեն Աստուծոյ Որդիին՝ Յիսուսի մէջ: Աւետարանները կը վկայեն՝ Քրիստոսի զօրութեան մասին, որ կը հակադէմ չարին այլանդակ ուժերուն՝ մարդկային կեանքի մէջ: Եւ Յիսուսի ուժն ու զօրութիւնը՝ այսօր կարելի է ձեռք բերել անկեղծ, հաւատքով լեցուած աղօթքի եւ «ո՛վ որ կը կանչէ Անոր անունը» սրտանց յանձնուելու միջոցով (Գործք 2. 21):

Աղօթք - Երկնաւոր Յայր, կը խնդրեմ գործադրէ այսօր՝ Զու գերազանց ուժը: Ամէն:

Կը դիմագրաւենք կեանքի ուժեր, որոնք չափազանց զօրաւոր են, սակայն կարելի է օգնութիւն խնդրել՝ Տէր Յիսուսէն:

Դաւիթ գնաց Աստուծոյ տապանը Աբդեդոմի տունէն ուրախութեամբ Դաւիթի քաղաքը բարձրացուց: [Բ. Թագ. 6. 12]

ԿՈՐՍՈՒԱԾ ՏԱՊԱՆԸ

Իր եկեղեցիի աշնանային Համագումարի ընթացքին՝ մօտակայ ճամբարին մէջ, հովիւ ձէֆֆ (Jeff) կը զբօսնէր որդիիս հետ, որ առաջնորդեց զինք՝ փայտէ շինուած արահետով՝ դէպի բացօդեայ մատուռը: Յանկարծ՝ անոնք եկան ուխտի տապանակին մօտ: Ի հարկէ, ա՛յդ իսկական տապանակը չէ՛ր, այլ իրական չափի, ոսկէգոյն կրկնօրինակ մը, որ ամուսինս սկսած էր շինել՝ տարիներ առաջ՝ ձէֆֆի քաջալերանքով: Իսկ վերջերս ալ որդիիս՝ որպէս անակնկալ՝ աւարտեց աշխատանքը, ամբողջացնելով նմանատիպ տապանակին շինութիւնը:

ձէֆֆ՝ այնքա՛ն ոգեւորուած էր, որ շտապեց հրաւիրելու ուրիշներուն՝ օգնելու իրեն՝ տապանակը բերելու ճամբարի ճաշասրահը, երբ հովիւին փոքրիկ թոռնիկներէն երկուքը՝ ձեռք ձեռքի տուած կը հետեւէին իրենց:

Սուրբ Գիրքը՝ կը պատմէ այն ուրախ առիթին մասին, երբ ուխտի իրական տապանակը, որ կը խորհրդանշէր Աստուծոյ ներկայութիւնը՝ Իր ժողովուրդին հետ, բերուեցաւ այն տունէն, ուր պահուած էր Երուսաղէմի մէջ՝ «Դաւիթի քաղաքին մէջ» (Բ. Թագ. 6. 12). Դաւիթ թագաւոր այնքա՛ն ուրախացաւ, որ Տէրոջ առջեւ պարեց «ամբողջ ուժով», երբ ժողովուրդը աղաղակեց եւ փողեր հնչեցուց (Հմ. 14-15):

Տարիներ ետք՝ Իսրայէլացիները գերի տարուեցան Բաբելոն, իսկ Երուսաղէմը կործանեցաւ (Բ. Թագ. 25): Սուրբ Գիրքը մեզի չի՛ ըսեր, թէ ի՞նչ եղաւ տապանակին: Մե՛նք՝ ալ կարիքը չունինք տապանակին՝ Աստուծոյ ներկայութիւնը վայելելու համար (Յովհ. 14. 16-17): Յիսուսի մահուան, յարութեան եւ Սուրբ Հոգիին ուղարկման միջոցով՝ Աստուած բոլորին հետ է, որոնք կը հաւատան Քրիստոսի: Այդ մէկը ուրախանալու հիանալի պատճառ է:

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ Քու Սուրբ Յոգիդ ուղարկելուդ համար: Այնքա՛ն զարմանալի է մտածել, որ Դուն կ'ապրիս իմ ներսիդիս: Ամէն:

Ինչպէ՞ս կ'ազդէ քու վրադ՝ գիտնալ, որ Աստուած քեզի հետ է: Ե՞րբ զգացած ես Աստուծոյ ներկայութիւնը:

Աստուծոյ բոլոր գործերէն հասկցայ: [Ժող. 8. 17]

ԽՈՐՈՒՆԿ ՓՈՐԵԼ՝ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՅԱՍԱՐ

Տլօրիտայի շինարարական խումբը, որ կ'աշխատէր 42 միլիոն տոլար արժողութեամբ կոյուղիի ծրագիրի մը վրայ, թանկարժէք գանձ մը յայտնաբերեց: Հողին խորունկ տեղը, անոնք գտան 1800-ականներու լաւ պահպանուած ձկնորսական նաւակ մը: Նաւակը կը պարունակէր հետաքրքիր առարկաներ, անոնց մէջ ըլլալով՝ քարիւղի լամբարի մը մասը, հնդրնկոյզի կեղեւով պատրաստուած խմելու բաժակներ եւ մետաղիա դրամներ: Նաւը կ'ուսումնասիրուի այն յոյսով, որ այդ մանրամասնութիւնները կը հաղորդեն, թէ ինչպիսին եղած է կեանքը՝ այդ տարածաշրջանին մէջ, աւելի քան հարիւր տարի առաջ: Շովային հնագէտներէն մէկը ըսաւ. «Ատիկա՝ աւելին է, քան միայն նաւ մը ըլլալը: Ատիկա՝ ամէնօրեայ մարդոց յիշեցումն է»: Խորը փորելով՝ ձեռք բերուած գիտելիք եւ իմաստութիւն է:

Ժողովողի գիրքը կը պարունակէ իմաստութեան մեծ գանձեր, երբ մենք կ'ուսումնասիրենք զայն՝ որպէս հնագոյն իմաստութիւն, որ կ'արտացոլացնէ՝ այդ ժամանակներու եւ մեր առօրեայ իրադարձութիւնները: Սողոմոն կը բացայատէ, թէ ինչպէս «իմաստունին միտքը ժամանակն ու դատաստանը գիտէ, քանի որ ամէն բան իր ժամանակն ու դատաստանը ունի» (Ժո. 8. 5-6): Ան գրեց, որ իմաստութիւն կը գտնէ՝ յիշելով «Աստուծոյ բոլոր գործերը» (Հմ. 17) եւ թէ ո՞վ է Ան (12. 1): Միայն Աստուած կու տայ կեանքի իմաստը, որովհետեւ՝ բացի իրմէ՝ ամէն ինչ «ունայնութիւն» է (8. 14): Անոր իմաստութիւնը՝ թոյլ կու տայ մեզի գոհունակ, ուրախութեամբ լեցուն կեանք մը ապրելու՝ իր ներկայութեան մէջ (Հմ. 15):

Ժողովողը կը յայտնէ, որ «սերունդ մը կ'երթայ, սերունդ մը կու գայ» (1. 4), ինչպէս ապացուցած է Տլօրիտայի մէջ յայտնաբերուած նաւը: Բայց Աստուծոյ իմաստութիւնը կը տանի դէպի իրական եւ յարատեւ կեանքի եւ նպատակի (Հռոմ. 10. 10):

Աղօթք - Ամենաիմաստուն Աստուած, շնորհակալ եմ՝ իրաւ իմաստութիւն տրամադրելուդ համար: Ամէն:

Աստուածաշունչը՝ իմաստութիւն կու տայ, եթէ պատրաստ ենք՝ խորունկ փորելու եւ սերտելու զայն:

Յիսուս գթալով՝ երկարեց ձեռքը եւ դպաւ մարդուն: [Մարկ. 1. 41]

ՅԻՍՈՒՍ ՔԵԶԻ ԿԸ ԴԻՄԷ

Լէթթի (Letty), որ գրասենեակային շէնքի մը մաքրողն էր, յայտնի էր իր արագ՝ իսկապէս արագ քալելուն համար: Ան դիւրութեամբ կրնար խուսափիլ մարդոցմէ: Վիրաւորուած ըլլալով աղքատութենէ եւ վարժուած ըլլալով նուաստացումի, ան անցաւ միւսներուն մօտէն՝ մէկ ձեռքով ծածկած՝ երեսին մէկ մասը: Իր ամօթը, իր խօսքերով, «բնական, գեղեցիկ, կիրթ մարդոց նման չըլլալն է», որ շատ խորն էր: Երբ կին մը աշխատավայրին մէջ իր բարեկամութիւնը յայտնեց, Լէթթին սկսաւ բուժուիլ:

Բորոտ մարդ մը կ'ապրէր ամօթալի, գուցէ աւելի խոր գգացումներով, քան Լէթթին: Անոր հիւանդութիւնը գինք դարձուց ապստամբ եւ ծիսականօրէն անմաքուր՝ ըստ Մովսէսի օրէնքի չափանիշներուն, բաժնելով զինք հասարակութենէն: Մարդուն վէրքերը՝ միայն ֆիզիքական չէին. ատոնք նաեւ հոգիի եւ ոգիի վնասներ էին: Այս վիրաւորանքով՝ բորոտը մօտեցաւ Յիսուսի՝ աղաչելով. «Եթէ ուզես՝ կրնաս մաքրել զիս» (Մարկ. 1. 40): Ան կ'ըսէր՝ բուժէ զիս, բայց նաեւ հեռացուր ամօթս:

Յիսուս պատասխանեց՝ կարեկցութեամբ՝ ո՛չ մերժումով: Գլթալով՝ երկարեց ձեռքը եւ դպաւ մարդուն եւ ըսաւ. «Կ'ուզեմ՝ մաքրուէ» (Նմ. 41): Ծիշդ այնպէս, ինչպէս Լէթթիի պարագային՝ գործընկերոջ ընկերակցութիւնը, Յիսուսի ժեստը կը նշանակէր՝ հասկնալ այն, ինչ որ այդ մարդը տարապաժ էր, բայց ընդունելի էր՝ հակառակ այդ բոլորին:

Մենք կրնանք քալել կեանքի մէջ՝ թաքցնելով ա՛յն, ինչ որ կը գգանք՝ թէ մեզ կը բաժնէ «բնական, գեղեցիկ, կրթուած մարդոցմէ»: Թո՛ղ մենք թոյլ տանք, որ Յիսուս դպչի եւ փրկէ այս բաները, որոնք մեզի ամօթ կը պատճառեն: Թո՛ղ որ մենք իմանանք, որ որպէս Աստուծոյ զաւակները, մենք ընդունուած ու սիրուած ենք:

Աղօթք - Սիրելի Յիսու՛ս, շնորհակալ եմ, որ օգնութեան ձեռք երկարեցիր ինձի: Ամէն:

Ի՞նչ բանը՝ քեզ կ'ամչնէ: Ինչպէ՞ս կրնաս այդ մէկը վստահիլ քրիստոսի քաւիչ սիրոյն:

Կը վկայենք ձեզի այդ յաւիտեակական կեանքին մասին ... որ յայտնուեցաւ մեզի ... Կը գրենք ձեզի այս բաները, որպէսզի ձեր ուրախութիւնը լման ըլլայ: [Ա. Յովհ. 1. 2,4]

ՈՒՐԱՆՈՒԹԵԱՆ ՍԱՂԹԱՆՔ

Իր՝ «Մահացողներու Ափսոսանքներ» համացանցի էջին վրայ, Պրօնի Ուէր (Bronie Ware) կ'ուրուագծէ իր ունեցած ափսոսանքները, որոնք լսած է՝ որպէ՛ս մահացու հիւանդներու հիւանդապահ: Անոնց մէջ էին. «Երա՛նի թէ այդքան շա՛տ չաշխատէի» եւ «Երա՛նի թէ կապի մէ՛ջ մնայի ընկերներուս հետ»: Թերեւս ամենահետաքրքիրը. «Երա՛նի թէ թո՛յլ տայի անձիս աւելի երջանիկ ըլլալու»: Ուէր՝ կը գրէ. «Մեր սեփական անխուսափելի մահը դիմագրաւելը՝ հիանալի գործիք մըն է, ուրախութեամբ լի՛ կեանք մը ապրելու համար»: Սա՛, առողջ խորհուրդ է, բա յց ի՞նչ է նման ուրախութեան աղբիւրը: Ո՞ւր մենք կը գտնենք գերագոյն իմաստը:

Որպէս երիտասարդ, Յովհաննէս աշակերտը՝ խեղադիւրուած տեսակէտ ունէր կեանքի նպատակին համար: Ինք եւ իր եղբայրը խնդրեցին Յիսուսէն ըսելով. «Շնորհէ՛՛ մեզի, որ բազմինք մեզմէ մէկը՝ աջ կողմդ, ու միւսը՝ ձախ կողմդ քու փառքիդ մէջ» (Մար. 10. 37): Անոնց խնդրանքը միա՛յն տարածայնութիւններ առաջացուց աշակերտներուն մէջ (Հմ. 41):

Տարիներ ետք, Ան ունեցաւ բոլորովին տարբեր տեսակէտ մը՝ Յիսուսի հանդէպ՝ սիրոյ եւ համայնքի մասին: Յովհաննէս տեսաւ Յիսուսի կեանքը, մահը եւ յարութիւնը, որպէ՛ս ամէն բանի հիմը ու գրեց. «Կը վկայենք ձեզի այդ յաւիտենական կեանքին մասին» (Ա. Յովհ. 1. 2): Ան պատմեց մեզի Յիսուսի մասին ըսելով. «Որպէսզի դո՛ւք ալ հաղորդութիւն ունենաք մեզի հետ» (Հմ. 3): Ապա ան աւելցուց. «Մեր հաղորդութիւնը Հօրը հետ է, եւ իր Որդիին՝ Յիսուս Բրիստոսի հետ: Կը գրե՛նք ձեզի այս բաները, որպէսզի ձեր ուրախութիւնը լման ըլլայ» (Հմ. 3-4):

Կեանքը՝ կրնայ ափսոսանք բերել: Յիսուս կը հրաւիրէ մեզի՝ փոխանակելու զանոնք՝ իր լիակատար ուրախութեամբ:

Աղօթք - Երկնակոր Յայր, կ'ափսոսամ —ին համար: Կը խնդրե՛մ, մտի՛ր կեանքիս մէջ: Ինծի պե՛տք է այն ուրախութիւնը, որ կու գայ՝ քեզի հետ միաւորուելէ: Ամէն:

Ի՞նչ ափսոսանքներ ունիս: Ի՞նչը՝ կը խանգարէ քե՛զ՝ թոյլ տալու, որ Յիսուս կատարեալ ընէ քու ուրախութիւնդ:

Յանկարծ երկիւքէն լոյս մը փայլատակեց իր շուրջը, եւ ինք գտտին իյնալով՝ լսեց ձայն մը: [Գործք 9. 3-4]

ՏԵ՛Ս՝ ԹԷ ԱՍՏՈՒԱԾ ԻՆՉԵ՛Ր ԸՐԱԾ Է

Մօրզ (Morse)՝ Բողոքական Հովիւի մը որդին ու նիւթապէս դժուարութիւններ ունեցող՝ դաշտանկարներու գծագրիչ մըն էր: 1820-ական թուականներուն՝ ան խեղճուկ ապրուստ կը վաստկէր, որպէս գաղութային Ամերիկայի «չըջիկ գծագրիչ»: Բայց Աստուած զինք առաջնորդեց տարբեր ուղղութեամբ: Մօրզ՝ հետաքրքրուած էր նաեւ գիտութեամբ: Ան սորվեցաւ ելեկտրամագնիսներու մասին՝ յղանալով գաղափար մը, որ պիտի փոխէր ամբողջ աշխարհը: 1832-ին, Սամուէլ Ֆ. Պ. Մօրզ (Samwel F. B. Morse) յղացաւ ելեկտրական հեռագիրի գաղափարը եւ աւելի ուշ՝ սկսաւ ստեղծել՝ առաջին գործող հեռագիրը:

Հաւանաբար՝ «ասպարէզի փոփոխութեան» ամենէն աւելի դատերական ներկայացումը, Սօղոսին պատմութիւնն է, որ «մարդասպան սպառնալիքներ կ'արտաշնչէր»՝ Քրիստոսի Հաւատացողներուն դէմ (Գործ 9. 1): Յիսուս երեւցաւ իրեն՝ մե՛ծ լոյսով (Հմ. 3), որ կանգ առնէ, քանի որ ան այժմ նոր հրամաններու տակ պիտի ըլլար (Հմ. 6): Սօղոս շրջադարձ մը կատարեց իր կեանքին մէջ եւ նոր ինքնութիւն մը ընդունեց Քրիստոսով, որպէս այն առաքեալը, որ ի վերջոյ պիտի տարածէր աւետարանը ուր որ պիտի երթար:

Երբեմն, ինչ որ կը կարծենք՝ թէ մեր ապագան է, իրականութեան մէջ՝ այդպէս չէ: Աստուած մեզի ա՛յլ ուղղութեամբ կ'առաջնորդէ: Գուցէ ա՛յդ՝ ծառայութեան կամ մասնագիտութեան փոփոխութիւն է: Երբ Աստուած վերուղէ մեր կեանքը, մենք լաւ կ'ընենք, որ դադրինք մեր ըրածէն ու հետեւինք մեզի տրուած նոր հրամաններուն: Եւ երբ մեր նոր ճամբան կը բացուի մեր առջեւ, մենք կրնանք պարզապէ՛ս արձագանգել Մօրզի հեռագիրի առաջին կէտ-եւ-գծիկ հաղորդագրութեան ուրախութիւնը. «Ի՛նչ որ Աստուած գրեց»:

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինծի՝ բա՛ց ըլլալու քու առաջնորդութեան համար, մինչ Դուս կ'առաջնորդես իմ ճամբաս ու ասպարէզս՝ այս ընթացիկ եղանակին մէջ: Ամեն: **Ինչպէ՛ս Աստուած առաջնորդած է քու կեանքդ՝ այլ ուղղութեամբ: Ի՛նչ խօսք տուած է Ան է քեզի այսօր, ուրիշները քաջալերելու համար:**

Կ'աղաչե՛մ ձեզի, ... որ պայքարիք ինձի հետ ձեր աղօթքներուն մէջ: [Քրիստ. 15. 30]

ՊԱՏՐԱՄԱՍ ԱՂՕԹԵԼՈՒ

Բորենիններու վոհմակ մը շրջապատե՛ց՝ միայնակ առիւծին: Երբ կատողած գազանները յարձակեցան, առիւծը կռուեցաւ: Կծելով, ճանկուտելով եւ մոնչելով՝ յուսահատ փորձեց ան վանել իր թշնամիներուն, բայց վերջապէս ինկաւ: Երբ վոհմակը կլանեց զինք, ուրիշ առիւծ մը երեք օգնականներով՝ օգնութեան հասաւ: Թէեւ բորենիններուն թիւը կը գերազանցէր առիւծներուն թիւին, սակայն առիւծները՝ կատաղի պայքարեցան անոնց դէմ, մինչեւ որ անոնք ցրուեցան: Առիւծները կանգնեցան միասին՝ զննելով հորիզոնը, որպէ՛ս թէ ուրիշ յարձակումի մը կը սպասէին:

Յիսուսի հաւատացողները նոյնպէ՛ս՝ ուրիշներու օգնութեան կարիքը ունին: Ամենահզօր օգնութիւնը, որ կրնանք առաջարկել, աղօթքն է: Պօղոս առաքեալ՝ Հռոմի եկեղեցիին իր ուղղած նամակին մէջ գրեց. «Կ'աղաչե՛մ ձեզի, եղբայրներ, մեր Տէրոջմով՝ Յիսուս Քրիստոսով ու Հոգիին սիրով, որ պայքարիք ինձի հետ ձեր աղօթքներուն մէջ՝ որոնք Աստուծոյ ուղղուած են ինձի համար» (Հռոմ. 15. 30): Պօղոս խնդրե՛ց անոնց՝ աղօթել, որպէսզի ինք «ազատի Հրէաստանի անհաւատներէն» եւ «սուրբերէն ընդունուի Երուսաղէմի մէջ՝ ընելիք իր սպասարկութեան համար» (Հմ. 31): Ան ընդունեց իրենց համայնքին մէկ մասը ըլլալու պարգեւները (Հմ. 32): Ան նոյնպէ՛ս՝ հաստատ կեցաւ իրենց հետ՝ աղօթքի մէջ, աւարտելով իր նամակը այս օրհնութիւնով. «Խաղաղութեան Աստուածը ձեր բոլորին հետ ըլլայ» (Հմ. 33):

Մինչ կ'ապրինք Յիսուսի համար, պիտի հանդիպինք հակառակորդներու՝ Ֆիզիքական եւ հոգեւոր ոլորտներու մէջ: Աստուած կը խոստանայ մեզի հետ ըլլա՛լ եւ պայքարի՛լ մեր անունով, եթէ միասին ենք՝ ու միշտ պատրա՛ստ աղօթելու:

Աղօթք - Հօգօր Աստուա՛ծ, կը խնդրե՛մ՝ զիս հաստատ աղօթքի մէջ, մինչ կը յառաջդիմեմ՝ Զու եւ ուրիշներու հետ: Ամէն:
Աստուած կը գործածէ բարեխօսական աղօթքը՝ մեզ զօրացնելու համար եւ կը պահե՛ միշտ պատրաստ աղօթելու:

Եզրաս իր սիրտը տրամադրած էր, որպեսզի Տէրոջ Օրէնքը փնտռէ ու գործադրէ: [Եզր. 7. 10]

ԱՄԲՈՂՋԱՅՆԵԼ ՄԵՐ ԿՈՉՈՒՄԸ՝ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԷՋ

Ճիննի Հիսլոփ (Ginnie Hislop) բուռն ծափահարութիւններու արժանացաւ, երբ 2024 թուականին իրեն յանձնուեցաւ մագիստրոս տիտղոսի վկայականը: Ինչո՞ւ: Որովհետեւ՝ այդ եկաւ՝ իր դասընթացքը աւարտելէն՝ ութսուն չորս տարիներ, ետք: 1941-ին, իրեն միայն պէտք էր ներկայացնել իր թէզը՝ ստանալու համար այդ տիտղոսը: Բայց, իր այդ օրերու ընկերը՝ Ճորճը, յանկարծ կանչուեցաւ ծառայելու բանակին մէջ՝ Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ժամանակ: Անոնք շուտով ամուսնացան եւ գացին իր բանակի ծառայութեան ճակատը՝ ետին ձգելով՝ ձիննիի գրեթէ իրականացած տիտղոսը: Բայց երկա՛ր դադարէ ե՛տք, ան վերջապէս կրցաւ իր աւարտին հասցնել ա՛յն, ինչ որ սկսած էր:

Եզրաս Սուրբ Գիրքերը ուսումնասիրող մըն էր. մէկը՝ որ իսկապէս «առաջադէմ տիտղոս» մը ունէր՝ Աստուծոյ Օրէնքին մէջ, որ տարիներ շարունակ սպասած էր Բաբելոնի աքսորէն՝ Երուսաղէմ վերադառնալու: «Եզրաս իր սիրտը տրամադրած էր՝ որպէսզի Տէրոջ Օրէնքը փնտռէ ու գործադրէ, եւ կանոններն ու դատավճիռները սորվեցնէ Իսրայէլի մէջ» (Եզր. 7. 10): Տասնամեակներ առաջ՝ Զօրաբաբելի եւ խումբ մը Իրայէլացի աքսորեալներու թոյլ տրուած էր, վերադառնալ եւ վերակառուցանել Երուսաղէմի տաճարը (2. 1-2): Իսկ ա՛յժմ Եզրաս, «Աստուծոյ ձեռքը իր վրայ ըլլալով» (7. 9), աւելի մեծ թիւով աքսորեալներ կը տանէր Երուսաղէմ: Աստուած պիտի գործածէր զինք՝ բարեփոխելու եւ վերականգնելու իրեն պատշաճող պաշտամունքը՝ Սուրբ Գիրքին համաձայն. «Եզրաս գիրքը բացաւ ամբողջ ժողովուրդին առջեւ: Եւ ամբողջ ժողովուրդը՝ իրենց դէմքը մինչեւ գետին խոնարհեցուցին եւ Տէրոջ երկրպագեցին» (Նէ. 8. 5-6):

Աստուծոյ զօրութեամբ յարատեւենք՝ աւարտին հասցնելու՝ այն աշխատանքը, որ Ան ունի մեզի համար:

Աղօթք - Սիրելի Աստուա՛ծ, կը խնդրեմ՝ օգնե՛ ինձի լաւ աւարտելու՝ ա՛յն, ի՛նչ որ Դուն կանչած ես ինձի ընելու համար: Ամէն:
Ինչպէ՞ս կրնաս հնազանդիլ Աստուծա՛մ քեզի տրուած կոչումին:
Ինչպէ՞ս կրնաս յարատեւել՝ իր զօրութեան եւ իմաստութեան մէջ:

Տերոջ՝ ձեր Աստուծոյն ձեզի պատուիրած բոլոր՝ ճամբաներէն ընթացէք, որպէսզի ապրիք, ձեզի բարիք ըլլալ: [Բ. Օր. 5. 33]

ԱՍՏՈՒԾՈՅ ՏՐԱՄԱԴՐԱԾ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Դաշտանկարի խումբ մը ճարտարապետներ, ուսումնասիրեցին՝ մանկապարտէզի մը խաղավայրին շուրջ՝ ցանկապատ ապաւնովելու հետեւանքները: Առանց ցանկապատներու խաղավայրերուն մէջ՝ երեխաները միտումը ունին հաւաքուելու՝ դպրոցի շէնքին ու իրենց ուսոցիչներուն մօտ եւ չի՛ հեռանալու: Բայց ցանկապատով խաղավայրերուն մէջ, անոնք կը վայելեն ամբողջ տարածքը: Հետազօտողները եզրակացուցին, որ սահմանները կրնան ստեղծել՝ աւելի մեծ ազատութեան զգացում: Սա՛ հակասկան կը թուի ըլլալ մեզմէ շատերուն համար, որոնք կը կարծեն, թէ սահմանները կը սահմանափակեն հաճոյքը: Տակաւին, ցանկապատները՝ կրնան ազատութիւն ապահովել:

Աստուած՝ կ'ընդգծէ այն ազատութիւնը, որ կ'ապահովէ մեզի համար՝ Իր սահմանները: Տասը պատուիրանները Իսրայէլի առաջարկելով, Ան խոստացաւ, որ «բարգաւաճ» կեանք կ'առաջանայ Իր աստուածային սահմաններուն մէջ ապրելով: «Տէրոջ՝ ձեր Աստուծոյն ձեզի պատուիրած բոլոր՝ ճամբաներէն ընթացէք, որպէսզի ապրիք, ձեզի բարիք ըլլայ, եւ ձեր օրերը երկար ըլլան այն երկրին մէջ, որուն պիտի տիրանաք» (Բ. Օր. 5. 33): Այստեղ բարգաւաճութիւն հասկացողութիւնը, կը ներառէ՝ լաւ արդիւնքներով ապրած կեանք՝ որակաւոր կեանք:

Յիսուս, որ իրագործեց օրէնքը խաչին վրայ՝ Իր մահով, յայտարարեց. «Եթէ իմ խօսքիս մէջ մնաք, ճշմարտապէս իմ աշակերտներս կ'ըլլաք. ու ճշմարտութիւնը պիտի գիտնաք, եւ այդ ճշմարտութիւնը պիտի ազատէ ձեզ» (Յովհ. 8. 31-32): Իսկապէ՛ս, Աստուծոյ սահմանները մեր բարօրութեան համար են: «Ցանկապատները» կրնան մեզ ազատել՝ վայելելու այն կեանքը, որ Աստուած ստեղծած է, որպէսզի՝ Իր հետ ուենանք այդ փորձառութիւնը:

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ՝ այն իմաստուն սահմաններուն համար, որ դրած ես իմ բարօրութեանս համար: Ամէն: **Աստուծոյ պատուիրանները կ'ազատեն մեզ: Ուստի՝ կրնանք աւելի լաւ ընդունիլ ազատութիւնը, որ կ'առաջարկէ այդպիսի սահմաններ:**

Այս թող ըլլայ ինծի ընդիմացողներուն եւ իմ անծիս դէմ
չարախօսողներուն հատուցումը Տէրոջմէն: [Սաղմ. 109. 20]

ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԶԳԱՅՈՒՄ ՍԸ

Լուրը՝ սարսափելի էր: Օտարերկրացի՝ տան օգնականը,
այնքա՛ն դաժան վերաբերմունքի ենթարկուած էր՝
ընտանիքին կողմէ, ուր ան կ'աշխատէր, մեռաւ: Զինք վարձող
տան տէրերը, ի վերջոյ բանտարկուեցան, բայց ես ունեցայ ա՛յն
զգացումը, որ այդ բաւարար չէ՛ր: Անոնք պէտք է կրէին նոյն
սարսափները, որոնց մէջ դրին՝ այդ խեղճ աղջկան, մտածեցի ես,
եւ ապա մահապատիժի ենթարկէին գիրենք: Յետոյ, խորհեցա՛յ,
թէ արդեօ՞ք իմ բարկութիւնս անցած է սահմանը: Սրա՛ւ էի,
որ նման բաներ կը մտածէի:

109-րդ Սարգմոսը կարգալը, ինծի տուաւ խորաթափան-
ցութիւն մը՝ մեր արդարութեան բնական զգացումին մասին:
Դաւիթ, օրինակ, բարկութեամբ պայքարեցաւ անոնց դէմ, որոնք
անարդար էին աղքատներուն եւ կարիքաւորներուն հանդէպ:
«Անոր օրերը թող փոքրաթի՛ւ ըլլան, ... : Անոր որդիները թող
որբ ըլլան, ու անոր կիներ՝ այրի» (Հմ. 8-9):

Բայց Դաւիթ թագաւորը վրէժխնդիր չեղա՛ւ այս մարդոց,
թէեւ ունէր իշխանութիւնը: Փոխարէնը, ան դիմե՛ց Աստուծոյ,
որպէս արդարութեան եւ ազատագրումի՝ իրական աղբիւրը: Ան
ըսաւ. «Այս թող ըլլայ ինծի ընդիմացողներուն եւ իմ անձիս
դէմ չարախօսողներուն հատուցումը Տէրոջմէն: Փրկէ՛ զիս քու
կարեկցութեանդ համեմատ (Հմ. 20, 26):

Ես կը հաւատամ, որ Աստուած մեզ ստեղծած է արդարու-
թեան բնորոշ զգացումով, քանի որ այդ կ'արտացոլացնէ իր
նկարագիրը: Եւ մենք՝ կրնանք անկեղծօրէն արտայայտել մեր
զգացումները: Բայց, ի վերջոյ, մենք պէտք է դատաստանն
ու պատիժը ձգենք իրեն, վստահելով՝ որ արդարութիւն պիտի
բերէ իր ժամանակին ու ճանապարհով: Պօղոս առաքեալ յստակ
կերպով կը հաստատէ. «Վրէժխնդիր մի՛ ըլլաք դուք ձեզի համար,
հապա տե՛ղ տուէք Աստուծոյ բարկութեան» (Հռոմ. 12. 19):

Աղօթք - Յայր, Դո՛ւն ես՝ ամենատես ու արդար Աստուածը: Թո՛ղ Զու
արդարութիւնը յաղթէ, որպէսզի՝ բոլորը վախնան եւ պաշտեն Եզէ: Ամէն:
Լուրեր կամ իրադարձութիւններ կ'անհանգստացնեն քեզ, սակայն կրնաս
աղօթել՝ կարիքաւորներուն եւ անարդարութեան զոհերուն համար:

Աստուծոյ թագաւորութիւնը այդպիսիներուն է: [Մար. 10. 14]

ԱՍՏՈՒԾՍԷ ԿԱՆԵԱԼ ՂԼԼԱԼ

«Ո՛հ, դուն շատ լուրջ կ'երեւիս», ըսի տաս շաբաթական թոռնուհիիս՝ Լէյլանիին (Leilani): Ան հիւսուած ունքով՝ կ'ուսումնասիրէր իմ դէմքս, երբ կը խօսէի Իր հետ: Շարունակեցի ըսելով. «Ես ալ նոյնպէս լուրջ պիտի ըլլայի, նայելով այս աշխարհին: Բայց գիտե՞ս ի՞նչ: Մաման կը սիրէ քեզ, հայրիկը կը սիրէ քեզ. եւ Պապան ու Բաբան (մեզի տրուած ծածկանունները՝ որպէս մեծ ծնողներ) ալ կը սիրեն քեզ: Սակայն ամենալաւը՝ ա՛յն է, որ Յիսո՛ւս կը սիրէ քեզ: Իսկ ա՛յդ կը նշանակէ՝ ամէն ինչ:

Յետոյ՝ եղա՛ւ: Ինչպէս ամպը, կը ձգէ որ արեւին շողը անձնի ընդմէջէն, կնճիոր ձգեց իր ունքը ու փոքրիկ դէմքը լուսաւորուեցաւ ժպիտով մը, որ հալեցուց սիրտս: Ինչպէս շատ մեծ հայրկիներ ու մեծ մամիկներ, ես կը ցանկայի հաւատալ, որ ան հասկցաւ զիս: Բայց՝ դուցէ՛ ան զգաց՝ խօսքերուս ետեւ եղած ուրախութիւնը: Պարզ, անմեղ ուրախութիւնը, որ կը փայլէր իր դէմքին վրայ, յիշեցուց ինծի Յիսուսի խօսքերը զոր ըսաւ. «Ընդունիլ Աստուծոյ թագաւորութիւնը, փոքր մանուկի մը պէս» (Մարկ. 10. 15):

Յիսուս ըսաւ այս խօսքերը, քանի որ «մանուկներ բերին իրեն», որպէսզի «դպչի անոնց» եւ օրհնէ (Հմ. 13. 16): Բայց՝ «աշակերտները կը յանդիմանէին բերողները», խորհելով՝ թէ Յիսուս չափազանց զբաղ է: Ա՛յդ բանը անհանգստացուց զինք (Հմ. 14-15):

Երեխաները՝ բնականաբար խոնարհ եւ կախեալ են ուրիշներէ: Աստուծոյ բարութիւնը ստանալու համար՝ Քրիստոսի միջոցով, մենք ալ հրաժարինք հպարտութենէն եւ ընդունինք, որ Իր կարիքը ունինք՝ ամէն բանի մէջ: Մինչ մենք կ'ընենք, Ան կը փոխէ այս աշխարհի յուսահատութիւնը՝ Աստուծոմով յաւիտեան կեանքի խոստումին հետ: Ու ա՛յդ պէտք է ժպտի մեզի:

Աղօթք - Աբբա՛ Յայր, օգնե՛ ինծի այսօր՝ խոնարհաբար ապրելու Եւ բարութեան մէջ եւ կիսուիլ զայն՝ ուրիշներու հետ: Ամէն:

Կը զգանք՝ որ ունինք Աստուծոյ կարիքը: Դետեաբար յայտարարենք այսօր, որ Իրմէ կախեալ ենք:



Ուրեմն մի՛ ամօթար մեր Տերոջ վկայութեան համար: [Բ. Տիմ. 1. 8]

ՉԱՄՉՆԱԼ՝ ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԱՐ

Նախ քան նահատակուիլը, Յիսուսի Հանդէպ ունեցած իր անսասան հաւատքին համար, Ափրիկեցի հովիւ մը, որու անունը չէ՛ պահպանուած՝ գրեց. «Նահատակի Մը Աղօթքը»: Մէկ այլ դարաշրջանի՝ այս աղօթքին հզօր պատգամը, ծանօթ է որպէ՛ս «Չամչցողներու Ընկերակցութիւն» անունով:

Այս հովիւին հզօր խօսքերը՝ մարտահրաւէր են, Յիսուսի բոլոր հաւատացողներուն. մարտահրաւէր մը, որ կը կրկնեն Պօղոս առաքեալի խօսքերը, իր երիտասարդ ընկեր Տիմոթէոսին՝ ուղղած նամակին մէջ: «Ուրեմն մի՛ ամչնար մեր Տէրոջ վկայութեան համար» (Բ. Տիմ. 1. 8), որովհետեւ Սուրբ Հոգին մեզի կու տայ «զօրութիւն, սէր եւ խոհեմութիւն» (Հմ. 7):

Ահա, մասամբ, թէ ինչ գրեց այդ հաւատարիմ Ափրիկեցի հովիւը. «Ե՛ս չամչցողներու ընկերութեան մէկ մասն եմ: Որոշումը կայացած է: Ե՛ս Յիսուսի աշակերտ եմ եւ ետ չե՛մ կենար, չե՛մ ձգեր, չե՛մ դանդաղիր կամ անշարժ մնալ: Իմ անցեալս փրկազնուած է: Իմ ներկաս՝ իմաստ ունի: Ապագաս՝ ապահով է: Հաւատքով կ'ապրիմ, Անոր ներկայութեան՝ կ'ապառինիմ, համբերութեամբ կը քալեմ, աղօթքով կը բարձրանամ եւ կ'աշխատիմ Սուրբ Հոգիին զօրութեամբ»:

Թէ՛ Տիմոթէոս՝ եւ թէ՛ ալ այդ հովիւը՝ դիմագրաւեցին դժուարութիւններ, որոնք մենք կրնանք երբէ՛ք չզգալ, բայց անոնց խօսքերը մարտահրաւէր են մեզի՝ ամուր կենալու, երբ մեր հաւատքը փորձութեան կ'ենթարկուի: Մենք կրնանք անամօթալի մնալ, քանի որ Աստուած «կարող է պահել իմ՝ Իրեն յանձնած աւանդս մինչեւ այն օրը» (Հմ. 12):

Աղօթք - Սիրելի Աստուած, Դուն խոստացար, որ Սուրբ Հոգին մեզի զօրութիւն կու տայ: Կը խնդրե՛մ, օգնէ ինձ, որ կարենամ հաստատ կենալ Թեզի համար եւ չամչնալ՝ ամէն տեսակի իրավիճակներու մէջ: Ամէն:

Ի՞նչ բանը՝ քեզի քաջութիւն կու տայ, չամչնալու Քրիստոսի համար: Ինչպէ՛ս կրնաս հետեւիլ ուրիշներու օրինակներուն, որոնք չէին ամչնար՝ Աւետարանէն:

Չենք գիտեր ինչ ընելու ենք. ուստի մեր աչքերը քեզի կ'ուղղենք: [Բ. Մաաց. 20. 12]

ԱՆՁՕՐ՝ ԲԱՅՑ Ո՛Չ ԱՆԱՂՕԹՔ

Անիթա Պէյլիի (Anita Bailey) սիրտը ջերմացաւ. երբ ստացաւ ընկերային ցանցի վրայ այս հաղորդագրութիւնը իր որդիին՝ ձէյլընին (Jalen) մասին: «Այսօր ես դիմաւորուեցայ եկեղեցիին մէջ, եւ երիտասարդ տղայ մարդ մը՝ երեխայ մը գիրկին՝ մօտեցաւ ինծի եւ իր թեւերը իմ շուրջս դրաւ: ... Վայրկեան մը նայեցայ, յետոյ ճանչցայ զինք եւ ըսի. 'ձէյլըն': Մենք՝ գրկախառնուեցանք եւ կարճ գրուեցեցինք: Ի՛նչ լաւ երիտասարդ մը»: Ողջունողը կը ճանչնար ձէյլընին՝ իր ըմբոստ օրերուն, երբ Անիթան եւ անոր ամուսինը՝ Էտ (Ed), անգոր զգացին՝ ազատելու իրենց որդին՝ իր անխոհեմ ընտրութիւններու հետեւանքներէն, որու արդիւնքը եղաւ՝ տասն երկու տարիներու բանտարկութիւն:

Թէեւ Պէյլիները՝ իրենք գիրենք անգոր կը զգային, սակայն անոնք անաղօթք չէին: Եւ ո՛չ ալ Յովսափատ թագաւորը Բ. Մնացորդաց 20-ին մէջ: Երբ թշնամիին սպառնացող ուժերու դաշնակցութեան կողմէ կը հալածուէր, ան աղօթելու կոչ ըրաւ. (Հմ. 1-4): Ան աղօթեց ու ըսաւ. «Ո՛վ մեր Աստուածը, զանոնք պիտի չդատե՞ս. արդարեւ մեզի դէմ եկող այս մեծ բազմութեան առջեւ ոյժ չունինք, ու չենք գիտեր ի՛նչ ընելու ենք, ուստի մեր աչքերը քեզի կ'ուղղենք» (Հմ. 12):

Երբեւէ զգացած ես դուն քեզ անգոր կամ անգիտակ՝ այն պարագաներու առջեւ, որոնք քու վերահսկողութենէդ դուրս էին: Ինչո՞ւ չկանչես աղօթքի հանդիպում՝ մինակ կամ ուրիշներու հետ: Այդպէ՛ս ըրաւ Յիսուս, Իր գալիք խաչելութեան դիմաց (Ղուկ. 22. 39-44): Աղօթքի տեղը՝ այն սուրբ վայրն է, ուր անգոր մարդերու խնդրանքները կը մատուցուին մեր ամենակարող Աստուծոյն՝ Յիսուսի անունով:

Աղօթք - Յարութեան զօրութեան Ամենակարող Աստուած, կը խնդրե՛մ՝ օգնէ ինծի ա՛յսօր՝ իմ անզօրութեանս մէջ, երբ հայեացքս կ'ուղղեմ Յիսուսի: Ամէն:

Մարտահրաւերներու ժամանակ, աղօթքով դիմէ Ամենակարող Աստուծոյ: Նաեւ ուրիշներու հետ համագործակցե՛ աղօթքով՝ փոխադարձ աջակցութեան համար:

Ո՛վ Տէր, նայէ՛, քանի որ տագնապեցայ. ընդերքս խռովեցաւ. սիրտս տակնուվրայ եղաւ ներսս, որովհետեւ չափազանց ընդվզեցայ: [Ողբ 1. 20]

ՈՂԲԱԼ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

Ես հետաքրքրութեամբ դիտեցի Նիու Եօրքի 9/11 Յուշահամալիրի եւ Թանգարանի բացման ցուցադրութիւնները, բայց զսպեցի զգացումներս: Ա՛յդ փոխուեցաւ, երբ մենք մտանք ներքին ցուցասրահը, որ համադրողները իմաստութեամբ փակեցին երեխաներէն եւ անոնցմէ, որոնք կը ցանկային պաշտպանուիլ՝ աւելի սիրտ ցաւցնող պատկերներէն: Երբ ես հանդիպեցայ պատմութիւն առ պատմութիւն սիրտի կոտորուածքի եւ կորուստի հետ, ողբի ալիքներ բարձրացան իմ ներսիդիս:

Երբ մենք ականատես կ'ըլլանք կամ կը յիշենք նման աւերածութիւններ եւ ցաւեր, մենք կրնանք միանալ անոնց՝ աղաղակներուն, որոնք բարձրաձայնած են իրենց վիշտը՝ Աստուծոյ: Սա՛ կը ներառէ՝ Ողբին մէջ յայտնաբերուած տագնապալի խօսքերը, որոնք շատ Աստուածաշունչի գիտնականներ՝ կը կարծեն, որ Երեմիա մարգարէն գրած է Երուսաղէմի կործանումէն յետոյ: Այս բանաստեղծութեան սեղմ կերպով ձեւաւորուած կառուցուածքին մէջ՝ ան ազատ կ'արձակէ իր վիշտն ու ողբը՝ Աստուծոյ ժողովուրդին ցաւին համար. «Ո՛վ Տէր, նայէ՛, քանի որ տագնապեցայ. ընդերքս խռովեցաւ. սիրտս տակնուվրայ եղաւ ներսս, որովհետեւ չափազանց ընդվզեցայ» (Ողբ 1. 20): Եւ տակաւին՝ ան կը նայի Աստուծոյ, որպէ՛ս վերջնական դատաւորը՝ իմանալով, որ միայն Ան կրնայ գործ ունենալ մեղքերու եւ կործանումի հետ. «Անոնց ամբողջ չարութիւնը քու առջեւեղ հասնի» (Հմ. 22):

Այսպիսի ազնիւ աղաղակ մը առ Աստուած, կրնայ օգնել մեզի դիմագրաւելու ցաւալի վայրագութիւններ, ինչպիսին են՝ Սեպտեմբեր 11, 2001 թուականին տեղի ունեցածը կամ ներկայիս՝ ա՛յլ չար արարքները: Մենք կը դիմենք Աստուծոյ օգնութեան, յոյսի, մխիթարութեան եւ արդարութեան համար:

Աղօթք - Ծշմարտութեան եւ սիրոյ Աստուա՛ծ, գիտե՛մ՝ թէ Զու սիրտդ կը կտրուի՝ աշխարհի ցաւէն: Կը խնդրե՛մ, պարուրե՛ գիս՝ Զու շնորհքով եւ ողորմութեամբ եւ բուժե՛ իմ վերքերս: Ամէն:
Երբ ականատես կ'ըլլաս չարութեան, դիմե՛ Աստուծոյ եւ աղօթե՛ անոնց համար, որոնք այսօր կը ցաւին:

Ինչ որ ճշմարիտ է, ինչ որ՝ պատկառելի է, ինչ որ՝ արդար, ինչ որ՝ անկեղծ, ... ատո՛նց մասին մտածեցեք: [Փիլ. 4. 8]

ՊԱՅՊԱՆՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՔՐԻՍՏՈՍՈՎ

2024 թուականի՝ Փարիզի Ողոմպիական մրցումներում ընթացքին, 1500 մեթր ազատ ոճի լողարշաւի ժամանակ, Գէյթի Լէտէքի (Katie Ledecky)՝ մօտ տասն հինգ վայրկեաններ՝ շատ առաջ էր՝ մնացեալ լողորդներէն եւ առանձին՝ իր մտքերուն մէջ: Ինչի՞ մասին կը մտածէր Լէտէքին՝ այդ երկար մրցարշաւին ժամանակ: Ոսկի մետալ շահելէ անմիջապէս յետոյ իր տուած հարցազրոյցին ատեն, որու մէջ՝ ան նոր Ողոմպիական մրցանիշ մը արձանագրեց, Լէտէքի ըսաւ, որ կը մտածէր՝ իր հետ մարզուալ լողակիցներուն մասին եւ իր միտքին մէջ կ'ըսէր անոնց անունները:

Հեռու մնացած լողորդները՝ միակը չե՛ն, որոնք պէտք է իրենց միտքը կեդրոնացնեն ճիշդ բաներուն վրայ: Մենք՝ որպէս Յիսուսի հաւատացողներ, նոյնպէ՛ս՝ պէտք է պահպանենք մեր միտքերը՝ մեր հաւատքի ճամբորդութեան ընթացքին:

Պօղոս առաքեալը խրախուսեց Փիլիպպէի եկեղեցիին, որ «ամէն ատեն ուրախանան, ... չի՛ մտահոգուին որեւէ բանի համար. հապա ամէն բանի մէջ աղօթքով ... գիտցնեն իրենց խնդրանքը Աստուծոյ» (Փիլ. 4. 4, 6): Արդի՞ւնքը: «Աստուծոյ խաղաղութիւնը, որ ամէն մտքէ գերիվեր է, պիտի պահպանէ իրենց սիրտերն ու մտածումները՝ Յիսուս Քրիստոսով» (Հմ. 7): Յիսուս, Խաղաղութեան Իշխանը, կ'օգնէ մեր մտահոգութիւններն ու խնդիրները ընկալելու:

Պօղոս նաեւ քաջալերեց հաւատացեալներուն. «Ինչ որ ճշմարիտ է, ինչ որ՝ պատկառելի է, ինչ որ՝ արդար, ինչ որ՝ անկեղծ, ինչ որ՝ սիրալիւր, ինչ որ՝ բարի համբաւով, ինչ որ առաքինութեամբ եւ ինչ որ գովելի է, ատո՛նց մասին մտածեցէք» (Հմ. 8):

Երբ մեր օրերը կ'անցընենք, եկէ՛ք գիտակից ըլլանք մեր միտքերուն: Երբ կը տեսնենք Աստուծոյ ձեռքը մեր կեանքին մէջ, մենք կրնանք հաշուել մեր օրհնութիւնները ու երկրպագել Անոր:

Աղօթք - Սիրելի Հայ՛ր, թող իմ միտքերս՝ հաճելի ըլլան քեզի: Ամէն: **Ի՛նչ բաներու մասին կը մտածես վերջերս: Ինչպէ՞ս կրնաս պատուել Աստուած քու միտքերով:**

Պիտի գիտնաք թէ ե՛ս եմ Եհովան՝ ձեր Աստուածը: [Ել. 16. 12]

ԳՔԱՍԻՏՈՒԹԵԱՆ ՈՐՈՆՈՒՄ

Անոր երկրպագուները՝ զինք կը ճանչնային որպէս Գիշերային Թռչուն (*Nightbird*): Երգչուհի եւ երգահան Ճէյն Գրիսթըն Մարզովսկի (*Jane Kristen Marczewski*) 2021-ին՝ շահեցաւ՝ Հեռուստացոյցի Տաղանդներու Ծրագիրին մրցանակը: Սակայն 2017-ին ախտաճանաչուեցաւ երրորդ աստիճանի կուրծքի քաղցկեղով: 2018 թուականին՝ երբ քիչ մը լաւացաւ, վերսկսաւ իր ելոյթները, բայց ամիսներ յետոյ քաղցկեղը վերադարձաւ՝ իրեն տուաւ շատ քիչ հնարաւորութիւն ասպրելու: Սակայն՝ զարմանալի կերպով, ան ապաքինեցաւ եւ քաղցկեղէ զերծ գտնուեցաւ: Բայց՝ Փետրուար 19, 2022-ին, Գիշերային Թռչունը՝ մահացաւ:

Իր դժուար ճամբորդութեան ընթացքին՝ ան ընկերային համացանցի վրայ գրեց. «Ես ինծի յիշեցուցի, որ կ'աղօթեմ՝ այն Աստուծոյ, որ թոյլ տուաւ Իսրայէլի ժողովուրդին՝ տասնամեակներ շարունակ՝ կորսուած մնալու: Անոնք աղաչեցին, որ հասնին ... բայց փոխարէնը՝ Ան թոյլ տուաւ անոնց, որ թափառին՝ պատասխանելով այն աղօթքներուն, որոնք իրենք չաղօթեցին: ... Ամէն առտու՝ Ան ողորմութեան հաց զրկեց երկիրքէն: ... Ես կը փնտռեմ ողորմութեան հացը: Իսրայէլացիները զայն անուանեցին՝ մանանա, որ կը նշանակէ 'ի՞նչ է այդ': Այս՝ նոյն հարցումն է, որ ես կը հարցնեմ...: Հոս տեղ մը՝ ողորմութիւն կա՛յ, բայց ի՞նչ է այդ»:

Ելիցի պատմութիւնը շատ բան կը բացայայտէ Աստուծոյ ողորմութեան մասին: Առաջին, Անոր ողորմութիւնը խոստացուած էր Իսրայէլացիներուն: «Հացով պիտի կշտանաք» (Ել. 16. 12): Եւ երկրորդ, Անոր ողորմութիւնը կրնայ զարմացնել մեզ: «Քանի որ ի՞նչ ըլլալը չէին գիտեր» (Հմ. 15): Ողորմութիւն՝ յաճախ նման չէ՛, ինչ որ մենք կը մտածենք: Բայց, այդ ողորմութիւն է: Գիշերային Թռչունը, գրեց՝ ընկերոջ կողմէ տրուած վերմակի մը նուէրին եւ մօր ձեռքերուն մասին:

Աղօթք - Ողորմած Աստուա՛ծ, շնորհակալ եմ Քու ողորմութեանդ համար: Կը խնդրեմ՝ օգնէ ինծի՝ որոնելու զայն: Ամէն:
Ինչպե՛ս քեզի զարմացուցած է Աստուծոյ ողորմութիւնը: Ի՞նչ կրնայ նշանակել քեզի համար այսօր՝ ողորմութիւն փնտռելը:

Գառնուկները իր բազուկով պիտի հաւաքէ, գանոնք իր գիրկին մէջ պիտի կրէ: [Ես. 40. 11]

ԱՍՏՈՒԾՈՅ ՔՆՔՈՒՇ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Նստած հիւանդանոցի մը նորածիններու ուժգին հոգատարութեան բաժանմունքին մէջ, տեսայ մայր մը, որ իր նորածին մանուկը գրկած էր՝ կուրծքին: Գիտութեամբ զարգացած այս բժշկական հաստատութեան մէջ, բժիշկները յանձնարարած էին՝ շատ ցած գիտութեամբ «զեղատոմս» մը բարելաւելու եւ ամրապնդելու երեխային առողջութիւնը: Այս նոր մայրը երկար ժամանակ պէտք էր տրամադրէր, պարզապէս իր դուստրը գրկելու համար:

Գրեթէ ոչինչ նման է՝ ծնողի մը մեծ սիրոյ եւ քնքուշ կարեկցութեան երեխային բուժիչ միխթարութիւն ապահովելու համար: Մենք կը տեսնենք ա՛յս հզօր պատկերը, Եսայի մարգարէին Աստուծոյ նկարագրութեան մէջ՝ իր ժողովուրդին հետ:

Նոյնի՛սկ իր մարգարէանալէն ետք՝ Իսրայէլի ազգին մօտալուտ աքսորին մասին, քանի որ անոնք մերժած էին Աստուծոյ (Ես. 39. 5-7), Եսային շեշտե՛ց ժողովուրդին, որ Աստուած տակաւին կը սիրէ զիրենք եւ միշտ պիտի ապահովէ իրենց կարիքները: Աստուծոյ քնքուշ կարեկցութիւնն ու ապահով հոգատարութիւնը՝ ակնյայտ են այն գեղեցիկ փոխաբերութեան մէջ, ուր Ան կը նկարագրուի որպէ՛ս հովիւ, որ շատ սիրող հօր մը նման՝ «իր բազուկով պիտի հաւաքէ իր գառնուկները, գանոնք իր գիրկին մէջ պիտի կրէ» (40. 11):

Աստուծոյ ներկայութիւնը՝ մեզի խաղաղութիւն եւ պաշտպանութիւն կու տայ ու կը յիշեցնէ, որ Ան՝ մեզ իր սիրտին մօտ կը տանի, ինչպէ՛ս՝ մայրը կը գրկէ իր նորածին երեխան: Ինչպէ՛ս Ի՛նք է «պարտասածին ոյժ տուողը, եւ կորով չունեցողին հզօրութիւն հայթայթողը» (Հմ. 29), Հոգիի բուժող միխթարութիւնը՝ թոյլ կու տայ մեզի՛ դիմագրաւել իւրաքանչիւր օրուայ մարտահրաւէրները:

Աղօթք - Երկնաւոր Յայր, այնքա՛ն երախտապարտ եմ, որ Դո՛ւն գիս Զու սիրտիդ մօտ կը պահես: Ամէն:

Ի՛նչ կը յիշես, երբ կը մտածես մօր մը՝ իր նորածին երեխային հանդէպ իր ունեցած սիրոյ մասին: Ինչպէ՛ս Աստուծոյ պաշտպանիչ եւ սիրալիր հոգատարութիւնը զօրացուցած է քեզ:



Ուրեմն գացէ՛ք աշակերտեցէ՛ք: [Մատթ. 28. 19]

ԱՇԱԿԵՐՏԵԼ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՍԱՐ

Պապէթպօլի մրցաշարքի եղանակին սկիզբը, մեր թաղամասի՝ միջնակարգ դպրոցի մարզիչը, կարծես աւելի շատ կ'աշխատէր՝ համոզելով իր խաղացողներուն, աչք առնել եւ նետել գնդակը կողովին մէջ: Ան պաղատեց գոռալով դաշտի կողմի գիծեն. «Նետէ»: Իր խաղացողները՝ անձկալից իրարու կը փոխանցէին գնդակը, ինչպէս նաեւ շատ աւելի գնդակը գետին կը գառնէին (dribble): Եղանակը կէսին հասաւ, առաջ որ անոնցմէ շատեր՝ համարձակէին կողովին մէջ նետելու գնդակը: Բայց «գնդակը կողովին նետելը» փոխեց ամէն բան: Հնազանդելով իրենց մարզիչին եւ հրաժարելով իրենց կասկածներէն ու փորձելով, նոյնիսկ երբ չէին կրնար գնդակը մտցնել կողովին մէջ, անոնք սորվեցան յաղթել:

Տէր Յիսուս կը սորվեցնէ մեզի՝ մէկդի դնել մեր կասկածները՝ հնազանդելու համար՝ աշակերտ պատարաստելու իր կոչին: Ան կը բացատրէ. «Ամէ՛ն իշխանութիւն ինձի՛ տրուեցաւ՝ երկինքի մէջ ու երկրի վրայ: Ուրեմն գացէ՛ք, աշակերտեցէ՛ք բոլոր ազգերը, մկրտեցէ՛ք զանոնք Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով: Սորվեցուցէ՛ք անոնց պահել ամէն ինչ որ պատուիրեցի ձեզի» (Մատթ. 28. 18-21):

Գործնական առումով՝ սա՛ կարելի է նշանակել, դուրս գալ մեր հանգիստի շրջապատէն՝ բաժնեկցելու մեր պատմութիւնը այն մասին, թէ ի՛նչ ըրած է Աստուած մեզի համար: Կամ ալ ներգրաւուիլ մեր վիրաւորուած դրացիներուն կեանքին մէջ, ցոյց տալով անոնց Յիսուսի սէրը: Նման մօտեցումները կը գործեն, բայց միա՛յն այն պարագային, եթէ մենք ձգենք կասկածը՝ եւ փորձենք:

Ամենէն առաջ՝ մենք կը մտնենք Յիսուսի իշխանութեան տակ, փորձելու ա՛յն, ինչ որ կրնայ դժուար թուիլ՝ աշակերտելը: Բայց մենք պէտք չէ՛ վախնանք: Յիսուս խոստացաւ. «Ահա՛ ամէն օր ես ձեզի հետ եմ՝ մինչեւ աշխարհի վախճանը» (Հմ. 20):

Աղօթք - Հա՛յր, կը խնդրեմ՝ քաջալերէ գի՛ս, որ հրաժարիմ կասկածներէս ու փորձեմ՝ աշակերտ պատրաստել: Ամէն:
Ի՞նչ մտապահութիւններ եւ կասկածներ ունիս աշակերտելու վերաբերեալ: Ինչո՞ւ: Ինչպէ՞ս կրնաս հնազանդիլ Քրիստոսի կոչին:

Չարեն մի՛ յաղթուիր՝ հապա բարիո՛վ յաղթե՛ չարին: [Յոն. 12. 21]

ԲԱՐԻՈՎ ՅԱՂԹԵԼ ՉԱՐԻՆ

Բժիշկ Տուլիթըլի (Dolittle)՝ առասպելական բժիշկը, որ կը գրուցէ՝ կենդանիներու հետ, հիացուցած է իր երկրպագուները՝ գիրքերու, ֆիլմերու եւ թատերախաղերու միջոցով: Սակայն՝ քիչեր գիտեն, որ հեղինակ Հիու Լոֆթինկը (Hugh Lofting) առաջին անգամ գրած է Տուլիթըլի այս հեքիաթները՝ իր երեխաներուն, Առաջին Համաշխարհային Պատերազմի սարսափելի օրերուն՝ խրամատներուն մէջ եղած ատեն: Յետոյ՝ ան ըսաւ, որ պատերազմը չափազանց սարսափելի էր՝ իր նամակներուն մէջ պատմելու համար, ուստի փոխարէնը՝ ան գրեց եւ նկարագարեց պատմութիւններ: Տարօրինակ, ուրախութեամբ լեցուն այս հեքիաթները Լոֆթինկի ձեւն էին, ե՛տ մղելու պատերազմի սարսափը:

Ոգեչնչող է՝ տեսնել մարդուն, որ կը շարժի սպառնալիքի եւ ստորեցուցիչ ուժերու դէմ, որոնք չափազանց հզօր կը թուին՝ խափանելու համար: Մենք կը հիանանք այս տոկուն քաջութեան, որովհետեւ կը վախնանք՝ անարդարութիւնը, բռնութիւնը եւ ազահուութիւնը կը յաղթեն: Երբեմն մենք կը վախնանք, որ ամբողջ աշխարհը պիտի «յաղթուի չարէն» (Հոմ. 12. 21): Եւ այս մտավախութիւնները հիմնաւոր են, եթէ մենք ձգուած ենք՝ մենք մեզի: Սակայն Աստուած մեզ ձգած չէ՛: Ան մեզ կը լեցնէ իր աստուածային գորութեամբ, կը դնէ մեզ գործողութեան մէջ եւ կո՛չ կ'ընէ «բարիով յաղթել չարին» (Հմ. 21):

Իւրաքանչիւրս բարիով կը յաղթենք չարին: Ոմանք գեղեցիկ պատմութիւններ կը գրեն: Ոմանք՝ կը հոգան աղքատներուն: Մեզմէ ոմանք՝ իրենց տունները կը վերածեն՝ ողջունելի վայրերու: Մեզմէ ոմանք՝ կը կիսեն Աստուծոյ պատմութիւնը՝ մեղեդիներու, բանաստեղծութեան կամ գրոյցի միջոցով: Բազմաթիւ ձեւերով մենք իր բարութիւնն ու խաղաղութիւնը կը տանինք աշխարհ (Հմ. 18), յաղթելով չարին, մինչ կը շարունակենք մեր ընթացքը:

Աղօթք - Սիրելի Աստուած՝ կը խնդրեմ՝ օգնե ինձի ըլլալու չարը՝ բարիով յաղթող մը: Ամէն:
Ո՛ր կը տեսնես, որ չարը թաքնուած է: Ինչպե՞ս կրնաս ըլլալ՝ չարը բարիով յաղթելու մաս մը:



Տերոջը հոգին անոր վրայ եկաւ: [Դատ. 3. 10]

ԱՍՏՈՒԾՈՅ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Իր ամուսինին մահով՝ Նորայի համար՝ փոխանցական շրջան մը սկսաւ: Ստանձնեց անոր hardware-ի գործը եւ առանձին խնամեց իր երեք երեխաները: Յաճախ իր բարեկամները կ'ըսէին իրեն. «Ուժեղ եղիր»: Ան կը մտածէր. բայց ի՞նչ կը նշանակէ այդ, որ ես պէտք է ընեմ՝ առանց իմ պարտականութիւններու մէջ թերանալու:

Աստուած մեծ պատասխանատուութիւններ յանձնեց Գոթոնիէլին, Իսրայէլի ժողովուրդին՝ փոխանցական ժամանակաշրջանին մէջ: Որպէս խրատ ազգի կռապաշտութեան համար, Աստուած գիրենք «Քուսարսաթայիմ թագաւորին ձեռքը մատնած էր, որոնք ութը տարիներ անոր հպատակեցան» (Դատ. 3. 8): Միջագետքի դաժան թագաւորի օրով Իսրայէլացիները «Տէրոջ աղաղակեցին եւ Տէրը Իսրայէլի վրայ փրկիչ մը հանեց» (Հմ. 9) - Գոթոնիէլ, որու անունը կը նշանակէ «Աստուծոյ ուժը»:

Որպէս Իսրայէլի առաջին դատաւոր՝ Գոթոնիէլ չունէր իրեն օգնող նախորդ մը: Այս զօրավարը՝ պէտք էր առաջնորդէր Իսրայէլացիները՝ Աստուծոյ հետ իրենց ուխտի փոխարարներութիւնները պահպանելու եւ գիրենք թշնամիներէն պաշտպանելու համար: Բայց՝ քանի որ «Տէրոջ հոգին անոր վրայ եկաւ» (Հմ. 10), ան յաջողութեան հասաւ: Գոթոնիէլի առաջնորդութիւնը հաստատող Աստուծոյ զօրութիւնով, «երկիրը քառասուն տարի հանդարտեցաւ, ապա Կենեգեան Գոթոնիէլ մեռաւ» (Հմ. 11):

Ինչպէ՞ս կրնանք իսկապէս «ուժեղ ըլլալ»: Այդ կը նշանակէ՝ գիտակցիլ, որ մենք ուժեղ չենք եւ վստահիլ Աստուծոյ, որ մեզի տայ իր ուժը: «Իր շնորհքը կը բաւէ մեզի, որովհետեւ մեր զօրութիւնը կ'իրագործուի տկարութեան մէջ» (Բ. Կորնթ. 12. 9): Աստուծոյ ուժը կը գործէ մեր միջոցով՝ ընելով՝ ա՛յն, ինչ որ միայն Ի՛նք կարող է ընել:

Աղօթք - Հայր Աստուած, կը խնդրեմ, թոյլ տուր ինծի ապակիներու քու ուժիդ: Ամէն:

Ինչպէ՞ս կը փորձես «ուժեղ ըլլալ»: Ինչպէ՞ս Գոթոնիէլի պատմութիւնը, կ'ազդէ քու ուժի հասկացողութեանդ վրայ:

Ո՞վ ինձի փոխ տուաւ, որ ես անոր հատուցանեմ. ամբողջ երկինքին տակ եղածը իմս է: [Յոր 41. 11]

ՄԷԿԱԼՕՏՕՆՆԵՐ ԵՒ ԼԵԻԽԱԹԱՆ

Տարիներ առաջ՝ իմ նամակատուկիս մէջ ծրար մը եկաւ: Ես նկատեցի՝ իմ լաւագոյն ընկերոջս վերադարձի հասցէն եւ ժպտեցայ: Ծօն՝ (Joe) երբեմն ինձի անսպասելի բաներ կ'ուղարկէ: Այս ծրարը որակաւորեց այդ. մէջը կա՛ր մուգ շագանակագոյն շանաձուկի ակռայ մը՝ շուրջ տասն երեք սանթիմեթր երկայնութեամբ:

Ծօյին նամակը բացատրեց. Նախապատմական շանաձուկի, Մէկալօտօնի (Megalodon)՝ քարացած ակռայ մըն էր, որ շատ անգամ աւելի մեծ էր, աւելի մեծ՝ քան ճերմակ շանաձուկը: Ես փորձեցի հասկնալ, թէ որքա՛ն մեծ պէտք է ըլլայ ձուկին ծնօտը, որպէսզի պարունակէ նման ակռաներ:

Աստուածաշունչը՝ չի նշեր Մէկալօտօններ: Բայց Յորի գիրքին մէջ Աստուած կը նկարագրէ՝ Լեւիաթան կոչուած ծովային գազանը՝ Կոկորդիլոսը: Յոր 41-ը կը մանրամասնէ իր տպաւորիչ պատկերը: Աստուած կ'ըսէ Յորին. «Ես պիտի խօսիմ անոր անդամներուն, զօրութեան, նաեւ շնորհալի կերտուածքին մասին» (Հմ. 12): «Անոր երեսին դռները ո՞վ կրնայ բանալ. ահը անոր ակռաներուն շուրջն է» (Հմ. 14):

Պատասխա՞նը: Միայն Լեւիաթանը ստեղծողը: Եւ ահա՛ Աստուած կը յիշեցնէ Յորին, որ որքա՛ն ալ մեծ ըլլայ այս գազանը, ո՛չինչ է իր Արարիչին համեմատ. «Ամբողջ երկինքին տակ եղածը իմս է» (Հմ. 11):

Այդ մեծ ակռան՝ նստած է գրասեղանիս վրայ՝ որպէս մեր Արարիչին վեհութեան եւ ստեղծագործութեան տեսանելի նշան մը: Եւ Աստուծոյ նկարագրին մասին այդ անհաւանական յիշեցումը՝ կը մխիթարէ զի՛ս, երբ կը թուի ինձի՝ թէ աշխարհը կրնայ զիս ուտել եւ դուրս թքել:

Աղօթք - Սիրելի Յայր, Զու ստեղծագործութիւնդ կը խօսի՝ Զու շքեղութեան եւ զօրութեան մասին: Կը խնդրե՛մ՝ օգնէ ինձի վստահելու Զեզի, երբ կեանքը ճնշող թուի ըլլալ: Ամէն:

Յրաշալի ստեղծագործութիւնը կը յիշեցնէ մեզի Աստուծոյ հզօր, ստեղծագործ Եութեան մասին: Անոր արարչագործութիւնը խրախուսելու է մեզ:

Իր յանցանքները խոստովանողն ու լքողը գթութիւն պիտի գտնէ: [Առ. 28. 13]

ՅԻՍՈՒՄԻ ԲԵՐԱԾ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Երբ ձախ աչքիս մօտ՝ գրգռուած մաշկի շերտ մը առաջացաւ, ես դիմահարդարում օգտագործեցի՝ զայն ծածկելու համար: Ժամանակաւորապէս՝ ա՛յս՝ գաղտնի պահեց՝ իմ խնդիրս: Սակայն՝ որոշ ժամանակ մը յետոյ, ուրած կարմիր կէտը՝ չի մաքրուեցաւ եւ ես գիտէի, որ այդ՝ բժշկական օգնութեան կարիքը ունէր: Բժիշկի ժամադրութեան առտուն՝ փորձուեցայ սովորականին պէս դիմահարդարուիլ, բայց չըրի: Կ'ուզէի, որ բժիշկը յստակ տեսնէ խնդիրը եւ ընէ պէտք եղածը, որպէսզի բուժուի:

Երբեւէ փորձա՞ծ ես թաքցնել մեղքի խնդիրը: Գուցէ տեղեակ ես, որ որոշ արարքներ կամ միտքեր կը վերահսկեն քեզ, բայց դուն կը խուսափիս այդ մասին աղօթելէ կամ ընկերներու եւ ընտանիքի ազամներու նշելու: Գուցէ՛ կը կարծես, որ այդ մեծ խնդիր մը չէ՛, քանի որ շատ ուրիշ մարդեր կը զբաղին նման խնդիրներով: Բայց անկարելի է հոգեւորապէս բարգաւաճիլ, երբ մեղքը գաղտնապէս կը կեղտոտէ մեր կեանքը: Առակաց 28. 13-ը կ'ըսէ. «Իր յանցանքները ծածկողը պիտի չյաջողի»: Բարեբախտաբար, համարը կը շարունակուի. «Բայց խոստովանողն ու լքողը զթուլթիւն պիտի գտնէ» (Հմ. 13):

Դժուար է ընդունիլ Աստուծոյ տեսակէտը մեր գործերուն վերաբերեալ եւ ընդունիլ, որ որոշ սովորութիւններ սխալ են: Սակայն, Անոր բարութիւնը՝ կը դիւրացնէ՝ մենք մեզ խոնարհեցնելու գործընթացը: Երբ մենք կ'ողջունենք Քրիստոսի Հոգիին զօրութիւնը մեր պայքարին մէջ, մենք կրնանք մերժել այն սխալը, որ կը փորձէ մեզ (Գաղ. 5. 16-17, 22-24): Քանի որ Աստուած կ'առաջնորդէ մեզ, փոփոխութիւնները կարելի են եւ մեր հոգեւոր առողջութեան համար արժէ՛ ջանք թափել:

Աղօթք - Սիրելի Աստուա՛ծ, կը խնդրե՛մ՝ օգնէ ինձի յանձնելու Զեգի իմ կեանքիս մէջ եղող մեղքի ոլորտները: Ամէն:

Երբ կը մտածես մեղքերդ խոստովանիլ, Աստուծոյ յաւիտեանական սերը կը քաջալերէ: Սակայն թշնամին կրնայ խաբել քեզ, որ մեղքին դէմ չպայքարիս:

Տերոջ Օրէնքը անթերի է, անձը կը վերանորոգէ: [Սաղմ. 19. 7]

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻՆ ՔԱՂՑՐՈՒԹԻՒՆԸ

1959 Սեպտեմբեր 22-ին՝ Զհաց Մեր Հանապազորդ գրքոյկին մէջ՝ յայտնուեցաւ նուիրական յօդուած մը, որ գրուած է՝ Դոկտ. Մ. Ռ. ՏըՀանի (Dr. M. R. DeHaan) կողմէ: Ան գրեց՝ այն մասին, թէ ինչպէ՛ս ցանկացած է ունենալ տուփ մը Գրէքըր ձէք (Cracker Jack) շաքարով պատուած կորեկ: Իր մտադրութիւնն էր՝ զայն կապել Աստուածաշունչի մէջ նշուած ըղձանքին հետ: Բայց՝ ի գարմանք իրեն, քանի մը շաքաթներ ետք, մեծ թիւով այս կորեկներու տուփերը հասան իր գրասենեակը: Գրէքըր ձէքի հանդէպ իր ունեցած ցանկութիւնը՝ բաւարարեց զինք՝ իր հաւատարիմ ընթերցողներու պատճառով:

Աստուածաշունչին մէջ կանոնաւոր ընկղմելու սովորութեանն ետ մնալը՝ միշտ ալ հեշտ է: Ահա՛ թէ ինչո՞ւ մենք պէտք է տենչանք «աւելի քաղցր քան մեղրը» (Սաղմ. 19. 10): Սաղմոսերգու Դաւիթը՝ կը յորդորէ մեզի իմանալու, որ Աստուծոյ խօսքը «անթերի է, անձը կը վերանորոգէ. Տէրոջ վկայութիւնը վստահելի է, միամիտը իմաստուն կ'ընէ» (Հմ. 7): Ան կը բացատրէ, որ «Տէրոջը հրամանները ուղիղ են, սիրտը կ'ուրախացնեն» (Հմ. 8):

Դոկտ. ՏըՀան՝ խրախուսեց ընթերցողներուն, որ սովորութիւն դարձնեն Աստուածաշունչ կարգալը, բան մը՝ որ անոնք ամէն օր կը փափաքէին ունենալ, ինչպէս քաղցր կորեկը: Մեզի համար նոյնպէս՝ կենսական նշանակութիւն ունի Աստուածաշունչին մասին խորհրդածութիւնը՝ սովորութիւն դարձնելը, ինչպէս նաեւ կանոնաւոր արձագանգել անոր ճշմարտութիւնները: Քանի որ Աստուած կ'օգնէ մեզի, եկէ՛ք նմանինք Դաւիթի, որ ըսաւ. «Բերնիս խօսքերը ու սիրտիս խորհրդածութիւնը հաճելի ըլլան քեզի, ո՛վ Տէր, իմ վէ՛մս եւ փրկարարս» (Հմ. 14):

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ Քու Սուրբ Գիրքերուդ համար, որոնք ինծի ցոյց կու տան Յիսուսը: Կը խնդրե՛մ, օգնէ ինծի՝ ամէն օր անոնց հետ զբաղելու, որպէսզի յիշեմ Քու ճշմարտութեանդ մասին: Ամէն:

Որքա՞ն «քաղցր» է Աստուածաշունչը քեզի համար: Ինչպե՞ս կրնաս կիսել զայն ուրիշներու հետ, որոհետեւ անոնք աւելի թանկագին են՝ քան զուտ ոսկին:

Ուրեմն մենք՝ հաւատքով արդարացած ըլլալով, խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի միջոցով: [Հռոմ. 5. 1]

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԴԵՏ

Երբ ընկերուհիս ուղեկցեցայ դէպի սրահ՝ իր տարեդարձի օրը, մենք հիացած էինք մեր ստացած փայփայանքով: Հանգստացնող երաժշտութիւնը եւ անձնական խնամակալը ողջունեց ու հրաւիրեց մեզ հանգիստ, աղօտ լուսաւորուած ջերմուկ աւազանը (spa) մտնելու: Ամբողջ փորձառութիւնը անցաւ հանդարտ, լուռ եւ խաղաղ: Ես ստիպուած էի զսպել քրքիջ մը, սակայն սեղանին վրայ դրուած ցուցանակը կ'ըսէր. «Մազերու խնամքի այս բնական նիւթերէ պատրաստուածը, ձեզի աւելին կու տայ՝ քան գեղեցիկ մազեր. ատիկա ձեզի մտքի խաղաղութիւն կու տայ»:

Մենք գիտենք՝ թէ մազերու խնամքի արտադրանքները, երկարատեւ խաղաղութիւն չեն բերեր, սակայն՝ մենք յաճախ կը բաւարարուինք ժամանակաւոր հանգստութիւնով, երբ մեր աշխարհը ճնշումներով լեցուն է: Իրականութեան մէջ՝ իսկական խաղաղութիւնը կու գայ, ո՛չ թէ բանէ մը, այլ՝ մէկէ մը: Մինչ կը քաջալերէր Հռոմի մէջ եղող Յիսուսի հաւատացողներուն, Պողոս յիշեցուց անոնց. «Ուրեմն մենք՝ հաւատքով արդարացած ըլլալով, խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի միջոցով» (Հռոմ. 5. 1): Մեղքը մեզ կը բաժնէ Աստուծմէ, բայց Քրիստոսի քաւիչ զոհաբերութիւնը՝ մեզի համար ճամբայ կը բանայ, Իր հետ յարաբերութիւն ոնենալու (5. 9-10): Յիսուս կ'առաջարկէ խաղաղութիւն՝ այսօրուայ համար եւ խաղաղութիւն յաւիտենականութեան համար - ապահովելով կարելիութիւնը «հաւատքով արդարացած ըլլալով ու հաւատքով մօտենալու այս շնորհքին» (Հմ. 1-2), «եւ կը պարծենանք Աստուծոյ փառքին յոյսով» (Հմ. 2), եւ յոյս՝ հակառակ երկրի տուած տառապանքներուն (Հմ. 3-4): Աստուծոյ հետ խաղաղութիւնը՝ աւելի է, քան պարզապէ՛ս զգացմունք. ա՛յդ պարգեւ մըն է, որ մենք կը ստանանք Յիսուսի հանդէպ եղած հաւատքի միջոցով:

Աղօթք - Սիրելի Յիսուս, շնորհակալ եմ Զեզի, որ խաղաղութիւն կը պարգեւես՝ Զու զոհաբերութեանդ միջոցով: Ամեն:
Երբ փորձուիս՝ աւելի խաղաղ պարագաներ ունենալու, յիշէ՛ Յիսուսի զոհաբերութիւնը:

Այսբան ժամանակ ես ձեզի հետ եմ, եւ չճանչցա՞ր զիս, Փիլիպպոս: [Յովհ. 14. 9]

ԱՆՃԱՆԱԶԵԼԻ

Ռիչըրտ Կրիֆֆին (Richard Griffin)՝ տասն չորս տարիներ, էլիզապէթ Բ. Թագուհիին անձնական՝ պահակ ոստիկանը եղած էր: Օր մը՝ անոր ուղեկցելով՝ Պալմօրալ (Balmoral) Ամրոցին մօտ գտնուող բլուրներու վրայ դաշտկերոյթի ժամանակ, անոնք հանդիպեցան երկու Ամերիկացի քալողներու: Չճանչնալով սովորական հագուստ հագած Թագուհին՝ անոնք հարցուցին. «Ի՞նչ էրբէ՛ք հանդիպա՞ծ էք Թագուհիին»: Թագուհին ըսաւ. «Ո՛չ, բայց Ռիչըրտ այստեղ պարբերաբար կը հանդիպի անոր»: Ոգեւորուելով արքայական ընտանիքի մօտ երող մէկու մը հետ հանդիպած ըլլալու տուին իրենց տեսախցիկը Թագուհիին, կեցան Ռիչըրտի հետ եւ խնդրեցին Թագուհիէն, որ լուսանկարէ զիրենք:

Առաջին անգամը չէ՛, որ մէկը՝ ըլլայ կարեւոր մարդու մը ներկայութեան՝ անտեղեակ, թէ ո՞վ է ան: Երագի մէջ Աստուծոյ հանդիպելէ ետք՝ Յակոբ ըսաւ. «Ի՛րպէս Տէրը այստեղ է, բայց ես չէի գիտեր» (Ծն. 28. 16): Եւ երբ Փիլիպպոս խնդրեց Յիսուսի ցոյց տալու Հայրը աշակերտներուն, Յիսուս պատասխանեց. «Այսբան ժամանակ ես ձեզի հետ եմ, եւ չճանչցա՞ր զիս, Փիլիպպո՛ս: Ա՛ն որ տեսաւ զիս՝ տեսաւ Հա՛յրը» (Յովհ. 14. 9): Ամերիկացի քալողներուն նման, աշակերտները պատրաստ էին Յիսուսի յանձնելու տեսախցիկը՝ չի հասկնալով, թէ Ան է՝ որու վրայ պէտք էր կեդրոնացնէին՝ տեսախցիկը լուսանկարելու համար (հմ. 10-11):

Թագուհիին նման՝ այդ օր, Յիսուս՝ միշտ չէ ճանչուած, թէ ո՞վ է իրականութեան մէջ: «Իմաստուն ուսուցիչ» կամ «բարոյական մեծ առաջնորդ» է բացի, Ան մարդեղացած Աստուածն ու աշխարհի Թագաւորն է (1. 14, 18. 36): Ինչպիսի՛ր յայտնութիւն մըն է, երբ մենք յայտնաբերենք զայն:

Աղօթք - Սիրելի Յիսուս, այսօր կը գովաբանեմ Զեզ՝ Թագաւորներու Թագաւորը, Տէրերուն Տէրը ըլլալուդ համար եւ շա՛տ աւելին, քան ես երբեւէ կրնամ հասկնալ: Ամէն:
Ի՛նչ պիտի ըսես Յիսուսի, եթէ հանդիպիս Իրեն՝ դաշտկերոյթի պտոյտի ատեն: Ո՞վ կը կարծես թէ է Ինք:

Կանգնե՛ որ պանդխտանլո՛ւ գնա, դուն եւ ընտանիքդ, ուր որ կրնաս պանդխտանալ, որովհետեւ Տէրը սովը կանչեց: [Բ. Թագ. 8. 1]

Ո՛Չ ԶՈՒԳԱԴԻՊՈՒԹԻՆ

Մանիլայի (*Manila*)՝ մէջ՝ Տանդէի (*Dante*) բնակած թաղամասը՝ հակուժը ունէր ջրհեղեղի: Անձուեւոտ օրերուն, փոքրիկ տղան դպրոց կը հասնէր, անցնելով դրացիի մը կողմէ կառուցուած ժամանակաւոր փայտէ կամուրջին վրայէն: Տանթէ ըսաւ. «Պր. Թովմաս՝ օգնեց համայնքին: Ինծի կ'ուղեկցէր՝ կամուրջին վրայ՝ պաշտպանելով զիս անձրեւէն»:

Տարիներ ետք, Տանթէն միացաւ Մանիլայի հիւսիսը գտնուող եկեղեցիին: Լիօ Աստուածաշունչի սերտողութեան առաջնորդը, խրատած էր զինք: Իրենց մանկութեան մասին զրոյցի ընթացքին՝ Տանթէն յայտնաբերեց, որ Լիօն՝ Պր. Թովմասի որդին է: Տանթէ ըսաւ. «Չկա՛յ գոլգաղիպութիւն: Աստուած գործածեց մարդու մը որդին, որ օրհնած է զիս, որպէսզի օգնէ ինծի իմ հաւատքիս մէջ»:

Սուենամ քաղաքէն՝ կին մը նոյնպէ՛ս զգաց Աստուծոյ նախախնամութիւնը: Հաւատքով՝ ան հետեւեցաւ Նզիսէ մարգարէի խորհուրդին՝ ձգելով տունը, սովէն խուսափելու համար (Գ. Թագ. 8. 1-2): Այդ բանը ընելով՝ ան հրաժարած էր իր տան եւ հողատարածքի նկատմամբ իր պահանջքէն: Այժմ, ճիշդ այդ պահուն, երբ օգնութիւն կը խնդրէր թագաւորէն՝ այս հարցին մասին, թագաւորը պատահեցաւ խօսիլ Գէեզիին՝ Նզիսէի սպասաւորին հետ, իր մասին:

Տարիներ առաջ՝ Գէեզին տեսած էր, թէ ինչպէ՛ս կ'նոջ մահացած որդին յարութիւն առաւ: Այժմ՝ Գէեզին ըսաւ. «Ահա՛ այն կինը՝ որուն որդին վերապրեցուցեր էր» (Հմ. 5): Ապա՝ թագաւորը «պալատական մը յատկացուց անոր» (Հմ. 6) եւ վերադարձուց անոր ստացուածքը:

Մենք միշտ կը զգանք Աստուծոյ հոգատարութիւնը, յատկապէ՛ս՝ երբ ամէն ինչ կրնայ չընթանալ այնպէ՛ս, ինչպէ՛ս ծրագրած էինք: Մեր գերիշխան Աստուածը՝ կ'օգնէ մեզի:

Աղօթք - Սիրող Յայր, շնորհակալ եմ՝ ինծի հոգ տանելուդ համար: Ամէն:

Ինչպէ՛ս կը քաջալերէ քեզ՝ Սուսամացի կնոջ պատմութիւնը: Ի՞նչ կ'ըսէ՝ Աստուծոյ հոգածութեան մասին:



Տերը ինձի հետ է, չեմ վախնար: [Սաղմ. 118. 6]

ԼԱ՛Ւ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ

Աղջկանս մանկութեան ամենավառ յիշողութիւններէն մէկը՝ ա՛յն օրն է, երբ հայրը իրեն սորվեցուց հեծանիւ քշել՝ առա՛նց վարժութեան անիւններ գործածելու: Իրենց զբօսանքի ատեն՝ պահ մը՝ ամուսինս ոտքերը հաւասարակշռեց ետեւի անիւին վրայ, մինչ աղջիկս իր ոտքերը կը պահէր ոտնակներուն վրայ. եւ անոնք երկուքով կը բռնէին ղէկը, որպէսզի կարենան միասին իջնել՝ փոքր՝ քիչ մը թէք հատուածը: Ան կը յիշէ՛, որ իր հայրը՝ կը ծիծաղէր ուրախութենէն. կտրուկ հակադրում՝ վախազգու փորձառութեան մը: Այդ ուղեւորութեան միջոցը՝ այնքան կարճ էր, որ ամբողջ դրուագը՝ շատ արագ տեղի ունեցաւ, որպէսզի ամուսինս կանգ առնէր եւ օգնէր իրեն: Մինչ անոնք կը յիշեն այդ օրուան ղէպքը, ամուսինիս մեղմ արձագանգը, անոր յիշողութեան՝ երաշխաւորել էր զինք, որովհետեւ գիտէր, թէ՛ ամէն ինչ լաւ կ'ըլլայ:

Անոնց պատմութիւնը՝ տեղին փոխաբերութիւն է՝ այն պահերուն համար, երբ մենք նոյնպէս վախ կ'ապրինք: Մեր տեսադաշտէն՝ «բլուրները» կրնան մեծ եւ սարսափեի թուիլ եւ վիրաւորուելու վտանգը կրնայ իսկապէս իրական թուիլ: Սակայն՝ Սուրբ Գիրքը մեզի կը վստահեցնէ, քանի որ «Տէրը մեզի հետ է» մենք պէտք չունինք վախնալու (Սաղմ. 118. 6): Թէեւ մարդկային օգնութիւնը կրնայ մեզ անյաջողութեան մատնել, Ան վստահելի ապաստան է, երբ մենք ճնշուած զգանք մեր պայքարներուն մէջ (Հմ. 8-9):

Աստուած մեր «օգնական»ն է (Հմ. 7), որ կը նշանակէ՝ թէ մենք կրնանք վստահիլ Անոր, որ հոգ կը տանի մեզի՝ կեանքի ամենադժուար եւ սարսափելի պահերուն մէջ: Հակառակ որեւէ անկումի, սպիներու եւ ցաւի, մենք կրնանք յարատեւել, իր փրկող ներկայութիւնը մեր «ուժն» ու «պաշտպանութիւնն» է (Հմ. 14):

Աղօթք - Յայր, շնորհակալ եմ, որ ներկայ ես իմ կեանքիս մէջ: Կը խնդրեմ՝ օգնէ ինձի ճանչնալու Քու մօտ ըլլալդ: Ամէն:
Ե՞րբ տեղեակ եղած ես Աստուծոյ ներկայութեան՝ դժուարութեան ատեն: Ինչպէ՞ս Ան օգնած է քեզի:

Որովհետև ինչպես շատեր մեղաւոր եղան մէկ մարդու անհնազանդութեամբ, այնպես շատեր արդար պիտի ըլլան մէկին հնազանդութեամբ: [Յոմ. 5. 19]

ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

Անգլիոյ՝ գեղեցիկ Լէյք (Lake) Թաղամասին մէջ՝ Գոնիսթըն Ջուրը (Coniston Water), Միացեալ Թագաւորութեան մէջ՝ ընտանիքներու սիրելի հանգստավայր մըն է: Ջուրերը կատարեալ են՝ նաևով զբօսնելու, լողալու եւ այլ ջրային մարզական մրցոյթներու համար: Այդ գեղեցիկ միջավայրը, սակայն, նաեւ մեծ ողբերգութեան վայր մըն էր: 1967 թուականին Տանըլտ Գէմբպըլ (Donald Campbell)՝ երբ կը վարէր իր Պլուպըրտ Գ7 (Bluebird K7) ջրաինքնաթիռը (hydroplane), փորձելով գերազանցել ջուրի արագութեան համաշխարհային մրցանիշը: Ան հասաւ ժամական 328 մղոն արագութեան (528 քմ/ժ), բայց չապրեցաւ իր նուաճումը նշելու համար, քանի որ Պլուպըրտը չախչախուեցաւ, որու հետեւանքով՝ Գէմբպըլ մեռաւ:

Գեղեցիկ վայրերու մէջ՝ կրնան ողբերգական պահեր ըլլալ: Ծննդոց 2-ին մէջ Արարիչը «առաւ մարդը ու եղեմի պարտէզին՝ մէջ դրաւ, որպէսզի զայն մշակէ եւ պահէ» (Հմ. 15): Պարտէզը՝ գլուխ գործոց մըն էր, սակայն, երբ դրուեցան այս դրախտին մէջ՝ մարդն ու կինը, չի հնազանդեցան Աստուծոյ բերելով մեղքն ու մահը Անոր ստեղծագործութեան մէջ (3. 6-7): Այսօր մենք կը շարունակենք տեսնել անոնց ողբերգական ընտրութեան կործանարար հետեւանքները:

Բայց Յիսուս եկաւ մեզի կեանք տալու - մարդոց, որոնք մեռած էին մեր մեղքերուն մէջ: Պօղոս առաքեալ՝ անդրադառնալով ատոր, գրեց. «Որովհետեւ ինչպէս շատերը մեղաւոր եղան մէկ մարդու անհնազանդութեամբ, այնպէս շատեր արդար պիտի ըլլան մէկին հնազանդութեամբ» (Հռոմ. 5. 19): Յիսուսի շնորհիւ՝ մեզի կը սպասէ ամենէն գեղեցիկ տունը:

Գեղեցկութենէն առաջացաւ ողբերգութիւնը: Եւ Աստուծոյ շնորհքով, որբերգութենէն՝ առաջացաւ յաւիտենական գեղեցկութիւնը:

Աղօթք - Երկնաւոր Յայր, շնորհակալութիւն յաւիտենական գեղեցկութեան համար, որ միայն Դուս կու տաս: Ամեն:

Ե՛րբ տեսած ես, որ Աստուած ողբերգութենէն դուրս կը բերէ՝ գեղեցկութիւն: Ինչպէ՞ս արծագանգեցիր այդ իրադարձութեան:

Ինչպես Մովսեսի հետ էի, նոյնպես քեզի հետ պիտի ըլլամ.
քեզ պիտի չթողում եւ քեզ պիտի չձգեմ: [Յե. 1. 5]

ԱՍՏՈՒԱԾ ԵՐԲԷ՛Ք ՄԵՉ ՉԻ ՉԳԵՐ

Սուրբ Երկրին մէջ՝ մենք սիրեցինք քալել այնտեղ, ուր Յիսուս քալեց: Այժմ՝ ես աւելի հեշտութեամբ կրնամ պատկերացնել Իր երկրային կեանքի տեսարաններն ու ձայները: Բայց եկեղեցիներու եւ գիւղերու անհարթ քարերով մաքլցիլն ու իջնելը, իր հետքը կը ձգէ եւ ես ծունկերու ցաւով հասայ տուն: Բայց տակաւին, իմ հիւանդութիւններս ո՛չինչ էին, համեմատած դարեր առաջ ճամբորդողներու հետ, որոնք ո՛չ միայն յօդացաւ ունեցան, այլ մեծապէս տառապեցան եւ նոյնիսկ մեռան: Բայց Աստուած՝ անոնց հետ էր:

Աստուած կանչեց Իր ժողովուրդին՝ հետեւելու Իրեն եւ հրաւիրեց անոնց ապրելու ծաղկուն «կաթ ու մեղր հոսեցնող երկրի մը մէջ» (Ել. 3. 8): Ան գիտէ՛ր, որ մտնելով խոստացուած երկիրը, անոնք պիտի դիմագրաւեն հակառակորդ բանակներու վտանգ եւ խոչընդոտներ, ինչպիսին են՝ պարսպապատ քաղաքները. Աստուած քառասուն տարիներ անոնց հետ էր՝ իրենց անապատային թափառումներուն մէջ եւ այժմ պիտի չլքեր գիրենք: Ան խոստացաւ Յեսուին՝ նոր առաջնորդին՝ Իր ներկայութիւնը. «Ինչպէս Մովսէսի հետ էի, նոյնպէս քեզի հետ պիտի ըլլամ. քեզ պիտի չթողում եւ քեզ պիտի չձգեմ» (Յե. 1. 5): Յեսու կը հանդիպի դժուարութիւններու, կարիք ունենալով՝ ըլլալու ուժեղ եւ քաջ, բայց Աստուած կ'օգնէ իրեն՝ այդպէս ընելու:

Մենք, որ կը հաւատանք Յիսուսի, անկախ անկէ՛ թէ կոչուած ենք մնալու թէ երթալու, այս կեանքին մէջ կը դիմագրաւենք վտանգներ, մարտահրաւէրներ եւ տառապանքներ: Բայց մենք կրնանք կառչիլ Աստուծոյ խոստումներուն, որ երբէ՛ք չլքեր մեզ: Անոր շնորհիւ՝ մենք նոյնպէս կրնանք ուժեղ եւ քաջ ըլլալ:

Աղօթք - Փրկող Աստուած, երբ Դուսն ինձի կը տանիս ամայի երկրի մը ընդմէջէն, եւ ես կը վախնամ գիշերուան զարհուրանքներէն, կը խնդրեմ՝ վստահեցուր ինձի, որ Դուսն ինձի հետ ես: Ամէն:

Դժուարութիւններ եւ նեղութիւններ մի՛շտ պիտի ունանք, սակայն վստահի՛նք Աստուծոյ ներկայութեան: Ուստի՝ Անոր դիմենք օգնութեան, սիրոյ եւ աջակցութեան համար:

Այս որդիս մեռած էր՝ եւ վերապրեցաւ, կորսուած էր՝ ու գտնուեցաւ: [Ղուկ. 15. 24]

ԱՍՏՈՒԾՈՅ ԾԱՄԲԱՆ՝ ԴԷՊԻ ՏՈՒՆ

Մինչ ինքնաշարժով զառիթափէն՝ թեք հարթակով կ'իջնէի կառավայր (parking lot), նեղուլթիւնը պատեց գիս: Նախապէս՝ եղած եմ այս նոյն տեղը եւ կորսուած: Բայց այժմ, երբ սկսայ քալել դէպի վերելակին մօտ գտնուող դուռը, հանգիստ զգացում մը լեցուց սիրտս: Գիտէի ճամբան: Մտայ դռնէն ներս եւ գտայ այն վերելակներուն հաւաքածոն, որոնք կը փնտռէի, եւ շուտով հասայ այնտեղ, ուր պէտք էր ըլլայի:

Այդ կառավայրի կառոյցին լաբիւրինթոսին մէջ՝ ճանապարհը գտնելու փորձս, կը յիշեցնէ ինծի, որ մոլորուելը երբեմն կրնայ օգնել մեզի, գտնելու մեր ճամբան: Քանի որ ես կորսուեցայ իմ առաջին այցելութեան ժամանակ, մտաբերեցի՝ թէ ի՞նչ էր սխալը եւ յիշեցի՝ այն դուռը, որ կը տանի դէպի իմ նպատակակէտը:

Մեր ճամբան գտնելու մէջ՝ մեծ ուրախութիւն կա՛յ. բան մը, որ այսօրուան առակին մէջ «կորսուած որդին» գտաւ (Ղուկ. 15. 24): Յիսուս ըսաւ. «Ինքն իրեն գալով» (Հմ. 17), կամակոր երիտասարդը գիտէր իր տուն վերադառնալու ճամբան, աշխարհի մէջ կորսուած ըլլալէ յետոյ: Ան հասկցաւ այն ամէնը ինչ որ ձգած էր եւ վերադարձաւ տուն, ուր ստացաւ իր հօր «սէրն ու կարեկցութիւնը» (Հմ. 20): Պատմութեան մէջ կ'ըսուի թէ հայրը այնչա՛փ ուրախ էր՝ ընդունելով իր կորսնցուցած որդին եւ ողջունեց զինք՝ ըսելով. «Կորսուած էր ու գտնուեցաւ» (Հմ. 24):

Եթէ մենք հոգեւորապէս կորսուած ենք, եկէ՛ք փնտռենք տուն տանող ծանօթ ճամբան, որ Աստուած տուած է: Ան ցոյց կու տայ մեզի՝ դէպի Իր սիրառատ լոյսը եւ դէպի այն տեղը, ուր մենք պէտք է ըլլանք:

Աղօթք - Ողորմած Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ ինծի վերադառնալու կորսուած ըլլալու խաւարէն եւ ուղուելու դէպի Քու լոյսն ու սէրը: Ամէն:

Ինչպե՞ս Աստուած քեզի ցոյց տուած է, թէ ո՞ր պէտք է ըլլաս: Ինչպե՞ս կրնաս վազել դէպի Իր լոյսը:

Բարձրաձայն պոռաց. «Ղազարո՛ւ, դո՛ւրս եկուր»: Մեռելն ալ ելաւ: [Յովհ. 11. 43-44]

ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Տութպօլի սիրահարները՝ ապշած էին, երբ Տամար Համլին (Damar Hamlin)՝ Պաֆլու Պիլզ (Buffalo Bills) խումբէն՝ նուազեցաւ դաշտին վրայ՝ հեռուստացոյցի ուղիղ սփռումի տեսն, 2023 թուականի Յունուարին՝ սովորական թուացող հակառակորդին զգետնում մը ընելէ ետք: Քսանչորս տարեկան երիտասարդին սիրտը՝ յանկարծ կեցած էր: Անոր սիրտը դադրած էր բաբախելէ, բայց՝ վերսկսած էր բաբախել բժիշկներու ջանքերով՝ դաշտին վրայ գտնուած ժամանակ: Զարմանլի է, որ մեռնելէ եւ դաշտին վրայ ետ կեանքի գալէ՝ երեք ամիսներ յետոյ, Համլընին՝ թոյլ տրուեցաւ՝ դարձեալ Փուլթպօլ խաղալ:

Համլըն յայտարարած է, որ երախտապարտ է Աստուծոյ եւ բժիշկներու կազմին՝ իր կեանքը փրկելուն համար: Ան կը նախատեսէ շարունակել ոգեշնչում ըլլալ ուրիշներու համար: Յովհաննու 11-րդ գլուխին մէջ՝ Ղազարոս նոյնպէս ուշագրաւ ապաքինում մը ունեցաւ:

Երբ Յիսուս հասաւ Բեթանիա, Ղազարո՛ւ՝ մեռած էր՝ արդէն չորս օրեր առաջ: Անոր յուզուած քոյրերը՝ Մարիամն ու Մարթան, ակնատես եղան՝ մահուան վրայ Յիսուսի ունեցած զօրութեան եւ իմացան՝ որ Ան է «յարուլթիւնը եւ կեանքը» (Յովհ. 11. 25): «Բարձրաձայն պոռաց. «Ղազարո՛ւ, դո՛ւրս եկուր»: Մեռելն ալ ելաւ՝ ոտքերն ու ձեռքերը պատանքով կապուած, եւ դէմքը՝ վարչամակով պատուած» (Հմ. 43-44):

Մե՛նք նաեւ՝ Քրիստոսի յարութեան զօրութեան օրինակներ ենք: Մենք ատեն մը մեռած էինք մեր մեղքերուն մէջ, բայց այժմ կենդանի ենք Քրիստոսով (Հռոմ. 6. 1-11): Որպէս հաւատացեալներ, նոյն Հոգին՝ որ յարուցանեց Յիսուսի մեռելնրէն, կ'ապրի մեր ներսիդին (8. 10-11): Քաջալերուինք: Թէեւ բոլորս կը մեռնինք Փիղիբապէս, բայց ա՛յդ մեր պատմութեան աւարտը չէ՛: Մեզի խոստում տրուած է յաւիտենական կեանք՝ Յիսուսի հետ:

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ՝ քու յարութեան զօրութեան համար: Ամէն:
Յաւիտենական կեանքի պարգեւը՝ մեզի յոյս տալու է եւ Տէր Յիսուսի յարութեան զօրութիւնը՝ քաջալերելու է մեզ:

Դուք շնորհքով փրկուած էք՝ հաւատքի միջոցով: [Եփ. 2. 8]

ՀԱՒԱՏՔԻ ՈՍՏՈՒՄ ՄԸ

Տրանսագի նաւաստին՝ իր կատուին հետ միասին՝ Հոլանտական Նաւահանգիստէն, որ կը գտնուի Ալաբայի հարաւը գտնուող՝ կղզիի մը վրայ, կը նաւարկէր դէպի Սէն Տիէկօ (San Diego), Գալիֆօրնիա (California), երբ անոր զբօսանաւը շրջեցաւ հսկայական այլքով: Նաւը ետ շտկուեցաւ, սակայն նաւատորմը կորսնցուց դեկն ու սարքաւորումը՝ կատաղի կոհակներուն պատճառով: Ան տեղեկացուց իր ծանր դրութեան մասին Ծովափիա Պահպանութեան ըսելով, որ նաւը խորտակուած է եւ չի կրնար շարունակել նաւարկել: Ի վերջոյ, Ծովափի Պահպանութիւնը՝ կապ հաստատեց մօտը եղող նաւթ արտահանող նաւի մը հետ եւ անոնք օգնութեան հասան նաւաստիին: Սակայն, ան տակառւին պէտք ունէր տառացիօրէն՝ հաւատքի ոստում մը կատարելու, կատուն բաճկոնին տակ դրած, իր նաւէն՝ դէպի ազատարար նաւը անցնելու համար:

Եփեսացիս 2-ին մէջ, Պօղոս նկարագրեց մարդկութեան մեղաւոր եւ անյոյս վիճակը, հոգեպէս մեռած ջուրի մէջ եւ Աստուծմէ բաժնուած (հմ. 1): Աւելին, մենք անհնազանդ էինք այն ամէն ինչին, որ Ան կը ցանկար որ ըլլայինք (հմ. 2) եւ այլասերած՝ չկարենալով որեւէ բան ընել՝ փրկութեան արժանի ըլլալու համար (հմ. 3): Բայց «շնորհքով» Յիսուս մեզի հնարաւորութիւնը տուաւ «փրկուելու հաւատքի միջոցով» եւ այս փրկութիւնը «Աստուծոյ պարգեւն է» (հմ. 8):

Մենք բոլորս կորսուած էինք՝ մեղքի եւ մահուան մոլեգնող ծովերուն մէջ, բայց փառք Աստուծոյ, որ ունինք Փրկիչ մը, որ մեզի հնարաւորութիւնը տուաւ՝ հաւատքով ոստում ընելու եւ նետուելու իր փրկող բազուկներուն մէջ: Միայն Քրիստոս կրնայ փրկել մեզ եւ տանիլ ապահով տեղ մը:

Աղօթք - Սիրելի Յիսուս, Զու ողորմութիւնդ ու շնորհքդ ինծի առաջնորդեցին ոստում ընելու դէպի Զու փրկարար բազուկներուդ մէջ: Ամէն:

Տէր Յիսուս Իր մահով եւ յարութեամբ՝ փրկութեան միջոց մը տուաւ մեզի, որու կարելի է արժանանալ հաւատքով:

ՑԱՆԿ ՆԻԻԹՈՑ

Աղօթք.....	Յուլ. 1, 8, 15, 22, Օգ. 3, 15, 24, Սեպ. 3, 10
Անձնական Վերաբերմունք/Պատասխանատվություն.....	Յուլ. 17, Սեպ. 19
Աշակերտ-Պատրաստություն.....	Սեպ. 15
Աշակերտություն.....	Օգ. 11
Առատաձեռնություն.....	Յուլ. 17, Օգ. 14, 21
Աստուծոյ Ակնածանքը.....	Սեպ. 18
Աստուծոյ Ընտանիքը.....	Օգ. 2, 9, 16, 23
Աստուծոյ Նկարագիրը.....	Յուլ. 3, 10, Օգ. 14, 15, 22, Սեպ. 6, 11, 13, 21, 24, 27
Աստուծոյ Սերն ու Հոգատարությունը.....	Յուլ. 14, 18, 21, 26, 29, Օգ. 21, 26, 31, Սեպ. 1, 13, 14, 17, 24, 25
Աստուծոյ Վստահիլ.....	Յուլ. 10, 24, 26, 27, 29, Օգ. 5, 10, 12, 28, Սեպ. 12, 25
Աւետարանչություն.....	Յուլ. 25, Օգ. 7, 16, Սեպ. 23
Բժշկություն.....	Սեպ. 11, 27
Գուրբ եւ Արդարություն ..	Յուլ. 28, Օգ. 1, 8, 15, 22, Սեպ. 6, 13
Դաստիարակություն.....	Յուլ. 13
Դրախտ.....	Օգ. 19, Սեպ. 26
Եկեղեցի.....	Սեպ. 3
Երանելիներ.....	Յուլ. 31
Երրորդություն.....	Սեպ. 1, 8, 22
Իմաստություն.....	Յուլ. 6, 19, Օգ. 30, Սեպ. 8
Ծառայել Ուրիշներու.....	Յուլ. 5, 12, 18, 25, 28, Օգ. 21
Ծառայություն.....	Սեպ. 4
Հալածանք.....	Յուլ. 27
Համայնք/Ընկերություն.....	Յուլ. 21, 20, Օգ. 16, 21
Հանգիստ.....	Օգ. 12
Հաւատքի Պատմություններ.....	Յուլ. 27

Հոգեկան Աճում.....	Յուլ. 7, Սեպ. 4, 19
Հոգեկան Մարտ	Սեպ. 1
Հոգեկան Նուերներ.....	Յուլ. 12, 25
Մեղք.....	Յուլ. 14, Սեպ. 26
Մենակութիւն.....	Օգ. 5
Մոլութիւն	Օգոստ. 28
Յաւիտենական Կեանք.....	Օգ. 18, 27
Յոյս.....	Օգ. 27, Սեպ. 11, 21, 27
Ներել Ուրիշներու.....	Յուլ. 11, Սեպ. 28
Շինութիւն/Զաջալերութիւն.....	Օգ. 6, Սեպ. 1
Որոշում կայացնել.....	Յուլ. 6 Սեպ. 2, 16, 28
Ուսուցում.....	Օգ. 13
Պաշտամունք.....	Յուլ. 20, Օգ. 9, 19
Սիրել Ուրիշները	Օգ. 6, 22, 25
Սուրբ Հոգիին Գործը	Օգ. 7, 29, Սեպ. 17
Սուրբ Գիրքի Մեծ Պատմութիւնը	Օգ. 29, Սեպ. 1
Սուրբ Գիրքի Սերտողութիւն.....	Յուլ. 19, Օգ. 4
Սուրբ Հոգի	Յուլ. 2, 9, 16, 18, 22, 23
Սուրբ Գրային Աստուածաբանութիւն միսիոնարութեան ...	Սեպ. 2, 4, 9, 16, 13, 23
Ստեղծագործութիւն.....	Օգ. 19, Սեպ. 18, 20, 26
Վախ.....	Օգ. 10
Տառապանք.....	Յուլ. 10, Սեպ. 9, 11, 25, 27
Տնտեսութիւն	Յուլ. 17, Օգ. 21
Փորձութիւն.....	Յուլ. 14
Փրկութիւն	Յուլ. 4, 11, Օգ. 9, 17, 27, Սեպ. 7, 26, 30
Զրիստոս, Անձ/Գործ	Յուլ. 3, 4, 5, 15, 19, Օգ. 3, 7, 13, 17, 20, 30, 31, Սեպ. 5, 7, 26, 29, 30
Զրիստոսի Համար Ապրիլ.....	Յուլ. 8, Սեպ. 2
Զրիստոսի Հետ Միութիւն	Յուլ. 5, Օգ. 11, 24, Սեպ. 9
Զրիստոսի Նման Ապրիլ	Յուլ. 30, 31, Օգ. 3, 18

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Եթէ կը ճանչնաք անձեր, որոնք պիտի փափաքին այս գրքոյկին յաջորդ թիւերը ունենալ կրնաք անոնց անունները ու հասցէները գրել վարի կտրօնին վրայ եւ դրկել հետեւեալ հասցէներէն մէկուն.–

Սփիւոքի հասցէ՝
Armenian Missionary Association
31 West Century Road
Paramus, NJ 07652
Tel. 201.265.2607 - E-mail: info@amaa.org

Հայաստան եւ Կովկասեան երկիրներ դիմել՝
Հայ Աւետարանչական Ընկերակցութիւն
Բաղրամեան Փողոց, Թիւ 18
Երեւան, Հայաստան
հեռ. (374-10) 54-35-76

Name/Անուն.....

Address/Հասցէ.....

Tel./Հեռ.....

Name/Անուն.....

Address/Հասցէ.....

Tel./Հեռ.....